



Ք. ՏԱՐԻ 1963

ՆՈՅԵՄԵՐ

11

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارثين كارتيك قزاجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

բւգին
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳԻՒԼԿԱՆՆՈՒԹԵԱՆՆ
 ԵՒ ԱՐՈՒՍԱՅԻՒՆ

ՀԱՐԻՑ ԽՄԲԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՄԲԱԳԻՐՆԵՐ
 ՆՊ. ՊՅՈՒՑԻՅՆ, Պ. ՍՆԱԳԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԳԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐՅ
 Ջ. ՅԱԿՈԲԻ
 Բ. ՓԱՓԱՆԵԱՆ
 Վ. ՅԵԱԿԱՆ

ԽՄԲԱԳԻՐՈՒԹԵԱՆ ՀՍՍԻ
 ED. BOYADJIAN
 B.P. 1153, BEYROUTH - LIBAN
 Հեռագրային թիվ 250078

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Ն. ՊԵՇԻԿԻԱՆՇԼԵԱՆ
 ՇԱՀՊԱՆ
 ԳԱՅԼ ԿԱՀԱՆ
 Բ. ԿԻԱՆԵԱՆ
 ԱՐՄԱՆՑ
 Յ. ԶՈՐԵԾԻ
 Ա. ԳԱԼԱՑՃԵԱՆ
 Փ. ՓԱՊՈՒՃԵԱՆ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Գ. ՇԱՀԻՆԵԱՆ
 Վ. ՕՇԱԿԱՆ

 ՆՇԱՐՆԵՐ

Բագրն

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Բ. ՅԱՐԻ, ԽԻՒ 11

ՆՈՅՆՄԱՆՐ 1968

ՊԵՐՈՒԹ

Ն. ՊԵՇԻԿՅԱՆ

ՓԱՐԻՋԱՀԱՅ ՄԸ ՊԵՐՈՒԹԻ ՄԷՋ («ԱՄԷՆՈՒՆ ԱՂԱՐԻԿԸ»)

ԱՍՈՒԼԻՍ՝ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՄԸ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին ժը, երբ նոր աւարտած էր տարրական դասը, Նախաճաշի, ջրային հորեղբայրը ունեցաւ ասուլիս ժը իր եղբորորդիին հետ։ Ասուլիսը թէ՛ բուռն էր, թէ՛ զուսպ։ Երկուքին ալ տրամադրութիւնները խակ էին, թէ՛ն հասուն էին իրենց անկեղծութիւնով։

Եւ անաւտիկ ասուլիսը, որուն նախադրեալը եղաւ հորեղբայրը.

— Ուրեմն, սիրելիս, Պէրուսի եկած ես երկու առաքելութիւնով։ Առաջինս — Որպէսզի քարոզես եղբայրութիւն։ Կ'ուզես որ Պէրուսիացիները եղբայրանան ու գիրար սիրեն։ Եւ երկրորդս — Դուն ալ Պէրուսիէն հարուստ ու համեղ հայուհի ժը սիրես եւ ամուսնանաս։ Եղբայրութիւն եւ ոչ'ր։ Մին վեհ, միւսը վսեմ։

Բայց արդեօք առաջին առաքելութիւնը չքեղ զիմակ ժը չէ՞, ի պատիւ երկրորդին։

— Առաջին առաքելութիւնն առաջնակարգ է եւ հակառակ։ Ես կ'ատեմ զիմակաւորները։

— Բայց ո՞ր պաշտօնական մարմինն կողմէ լիազօրութեամբ ես, ներկայանալու իրրեւ եղբայրութեան պատուիրակ։ Վստահաբար, շորս-հինգ հոգիի յանձնարարութեամբ ստանձնած ես այս առաքելութիւնը։

— Ձրանաւորութիւնը կը փոփոքէր որ մէկը ստանձնէր այս առաքելութիւնը։ Ձորս-հինգ հոգիի փոփոքին ներկայացուցիչը չեմ, ոչ իսկ շորս-հինգ հարիւր հոգիի։ Ձրանաւորութեան մէջ, ինչպէս ամենուրեք, մենամանութիւնը կուտակեալանները չեն, ոչլ անկուտակեալանները, անկախ հայերը։

— Անկուտակցականները, այսինքն անկախները եւ չէզոքները, երբ մանաւանդ կուսակցութեան մը յայտնի համակերպեր չեն, կը նմանին մուկերու կամ մլուկներու մեծամասնութեան: Աշխարհի վրայ թշուառներն ալ մեծամասնութիւն են, բայց ի՞նչ կրնան ընել: Կազմակերպուած փոքրամասնութիւն մը ոյժ մըն է, իսկ չկազմակերպուած մեծամասնութիւն մը, որ քանակ է, սակայն ո՛չ ձեւ ունի, ո՛չ ալ ձայն, ո՛չ զէնք ունի, ո՛չ ալ զբաւ, ո՛չ զբօշ ունի, ո՛չ ալ գոռ: Եւ եթէ վաղը, հրաշքով, քու ըսած մեծամասնութիւնը ձեռնարկէ դժբախտ, գիտե՞ս ի՞նչ կը պատահի: Միւրոյ այդ գինուորները պիտի սկսին կռիւք իրարու մէջ, պիտի առնեն զիրար, պիտի ուտեն զիրար, իրենց անկարգապահութեան հետեւանքով:

— Հօրեղբայր, խնդիրներուն մէջ կը սիրես խաւար նետել, բարդացնել խնդիրները, վերածել անիւի:

— Իսկ դուն ի՞նչ կը կարծես ինքզինքդ. հրաշագործ սո՛ւրբ մըն ես, Գորգեան հանգոյցը սուրով կարող Ալեքսանդր մը, կամ երկինքէն երկիր իջած հաշտարար հրեշտակ մը: Մեր ներքին վէճերուն արմատները շատ խորունկ են եւ ճիւղերը շատ բարձր են: Մեր ողբերգութիւնն է այդ խաւար խորութիւնը եւ բռնակալական բարձունքը:

— Պէտքութեան ժամը կը յաւակնի մատուրական կեդրոն ըլլալ: Կեդրոն մը պէտք է առաջնորդ ըլլայ, մինչդեռ ինք պէտք ունի առաջնորդողի:

— Բոլոր հայ զազութիւնները պէտք ունին իրարմանի հայութեան, սորվելու համար հայութիւն եւ քրիստոնէութիւն:

— Երանի՜ թէ, օր մը, դաս ալ տաք եղբայրութեան:

— Քրիստոնէութեան մէջ, եղբայրութիւնը կայ:

— Եւ, բայց յաւակնութիւնը մի՛ ունենաք կարծելու թէ ինքնապահ էք: Իրարմանի հայութիւնը ինք ալ ուրիշներու պէտք ունի, մօքի ու մամոնայի համար: Պէտք ունի Ամերիկահայութեան

զբաժին, ինչպէս նաեւ կրօնական ու աշխարհական մշակներու, հայճողի, հայանուէր մտաւորականներու: Պէտք ունի մանաւանդ Անթիլիասին եւ Զմմարին:

— Անթիլիասը ու Զմմարը մե՛րն են:

— Դուք ալ ջանացէ՛ք անոնցը ըլլալ: Զանացէ՛ք նաեւ կուսակցական ըլլալէ աւելի՝ Հայ ըլլալ, ու շօռնալ որ մեր պերագոյն նպատակը Հայաստանն է:

— Մենք Հայաստանի կապուած ենք: Հայաստանի կառավարութիւնը թող իր գօտիով կապ հաստատէ հայ զազութեանը հետ, եւ իր գօտին թող ըլլայ ծիրանի: Հայաստանի կառավարութիւններուն համար աւանդութիւնը դարձած է կապի պէս բան մը հաստատել՝ հայ զազութիւններուն ամէնէն տղամարմնաւոր տարրերուն հետ:

— Ամենայն դէպս, երբեք չկարծէք թէ ինքնապահ էք:

— Ինքնապահ չըլլալը ամօթ չէ: Այսօր, պետութիւններն անզամ ինքնապահ չեն: Եւրոպայի մէջ կը ստեղծեն Հասարակաց Ծուկայ:

— Դուք ալ ստեղծեցէ՛ք հայկական հասարակաց եղբայրութիւնը: Այդ կը պահանջէ մեր ողբային շահը:

— Ա՛հ, եթէ մեր ձեռքը ըլլար... Դիմէ՛ հեռաւոր ու օտար կատարին, որպէսզի պէտք եղածը հրահանգէ ու արտօնէ ստորոտի ստրուկներուն: Հիմի հասկացա՞ր...

— Հարստացայ հասկանալով:

— Եթէ հարստացար, ուրեմն հաստացար. եթէ հասկացար, ուրեմն փա՛ռք Աստուծոյ: Միքիլի Արմէն, եղբայրութեան յորդորն ու հրաւերը հեռաւոր պազաթէն դալու է: Գազաթ մը, որ տմանց համար շատ աւելի բարձր է, քան պազաթները Արազածի, Նոյնիսկ կատարը Արարատի:

— Ընդդիմութիւնն ալ ուրիշ զազաթ մը չէ՞...

— Սարկամութիւնն ալ ճահճ մըն է. չորցնելն ալ աշխատանք չէ, այլ դժուարեւիտ, առնուազն տաժանելի:

«ԱՄԷՆՈՒՆ ԱՂԲԱՐԻԿ»-ԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆԸ

Հօրեղբայրը զգալով իր եղբորը դիտել փափաքը, առաջարկեց դառախօսութիւն մը տարձել, որուն հանդիմանումով ընդառաջ զնայ Արմէն:

Ու շարաթ երեկոյ մը, Պուրն Համուտի ազգ. մէկ վարժարանին սրահին մէջ անդի ունեցաւ դասախօսութիւնը, նախազանգութեամբ դպրոցի տեսուչին: Նիւթը՝ անշուշտ «եղբայրութիւն»ը: Օրաթիւքներու մէջ ծանուցուած էր: Ատկէ զատ, հարիւրաւոր հրաւիրողներն էր զրկուած էին, ամէն հոսանքի պատկանող անձերու:

Հօրեղբայրը չէր ըսած որ դասախօսութիւնը եղբորը իր անունով է: Պիտի յայտնէր, եթէ դասախօսութիւնը անցնէր յաջող:

Որոշուած ժամէն մէկ ժամ ու քառորդ մը ետք սկսաւ դասախօսութիւնը, որ տեւեց ընդամենը մէկ ժամ ու տասը վայրկեան:

Եթէ բաղժութիւնը խուռն չէր, սակայն բաւական խառն էր: Ամէն թոյլի ու դաւանանքի մարդիկ կային: Դասախօսութեան անունը, «եղբայրութիւն»ը, պատճառ եղած էր որ հայ կաթողիկէներ, հայ բողոքականներ, ինչպէս նաեւ Ազատ Որդադիրներ ըլլան ներկայ, կային նաեւ քանի մը ծանօթ կուսակցականներ: Մեծամասնութիւնը կը բաղկանար անկախներէ: Սրահին երեք չորրորդը լեցուած էր: Մուտքը ազատ էր:

Նախազանգ քանի մը խօսքով ներկայացուց դասախօսը, խօսքը անոր աստիճանով:

Արմէն ներկայանալի արտաքինով ու նոյնքան ներկայանալի հայերէնով գրական համակրութիւն:

Ահա թէ ինչեր ըսաւ, եւ անա թէ ինչեր եղան:

— Ս. Գրիգորի մէջ «եղբայր» կը նշանակէ պատկանելը նոյն ծնողին կամ զաւակները նոյն ծնողներուն: Եթէ նոյն ծնողներէն են զաւակները, ուրեմն եղբայր են հարազատ: Իսկ եթէ մէկուն

մէկ ծնողը տարբեր է, ու միւսինը տարբեր՝ կէս եղբայր են կամ խորթ եղբայր: «Եղբայր» բառը հինէն ի վեր կը դործածուի ազգակիցի, հայրենակիցի, կրօնակիցի, ընկերոջ կամ սիրելիի իմաստներով ալ: Եղբայրը երբ երէց է, ունի իրաւունք անդրանկութեան: Անգրաւիկը, բաղժութիւն ժողովուրդներու օրէնքով, ժառանգորդն է հեղինակութեան, հայրութեան կամ զանի, իրեն յաջորդը հօր: «Եղբայր» բառը ունի լայնութիւն իմաստի, կը նշանակէ նաեւ քրիստոնեայ, որդի Աստուծոյ:

Մարդկութեան առաջին եղբայրները եղան իրական ազամորդները: Կայէն եւ Աբէլ: Կայէն նշաւ եղբայրասպան: Կայէն մեղանչեց մահացու կերպով, հակառակ ազգաբարձութիւններուն Տիրուջ: Թանգանցաւ արհամարհել Երկնաւոր Հօր կողմը, յանուն խոտորվանութեան եւ ապաւխտութեան:

Եւ Կայէն պատժուեցաւ արգաքորէն: Պղնձի խայթը զինքը շարժարեց ցմահ: Արտաքսուեցաւ իրեններուն ընկերութենէն ու զրկուեցաւ ընդհանրէն Աստուծոյ: Եւ սակայն, Տէրը չուզեց որ ուրիշը արեամբ լուացուի: Աստուած չուզեց որ ըլլայ վրէժխնդրութիւն, վանտէքքա: Այդ եղաւ ողորմութիւն աստուածային: Տէրը հասկցուց որ զատուութիւնը ի՞նք է միայն: Թէ ո՛չ ոք իրաւունք ունի մահացնել մարդասպանը: Վրէժը վախճան չունի: Վրէժը կը ստեղծէ ուճիւրներու շարան: Եղբայրասպանը քրիստոնեայ չէ: Ու երբեք հայ չէ: Քրիստոնէութեան, քաղաքակրթութեան գերազույն նպատակը եղբայրասիրութիւնն է, բոլոր մարդոց եղբայրանալը, որուն այնքան պէտք ունի բաղժաշարժար մարդկութիւնը, մանաւանդ կոտորակուած ու ամէն օր ամենուրեք կոտորակուող բնութաշարժար Հայութիւնը:

Բոլոր մարդիկ եղբայր են իրարու, նոյն հայրենիքին պատկանողները բոն մը աւելի, շարժարուած ու նահատակուածները շատ աւելի: Այնպէս զբախտ

կրնայ դառնալ՝ միայն սիրով եղբայրական։ Ասեկութիւնը դժոխքէ զատ ուրիշ կրնայ կառուցանել։ Հայերը պարտին եղբայրանալ շատ աւելի շատ, շատ աւելի խորապէս, քանի որ հակառակ բազմաթիւ ըլլալուն, ջարդերու եւ ժողովածներու ենթակայ ըլլալով՝ թիւով փոքրացած են ու իրենց ներկայ քանակն ալ պէտք չէ կոտորակեն եղբայրասեանցութեամբ։

Մարդիկ ոչ միայն իրարու եղբայր են, այլ նոյնիսկ եղբայր են ընտանի ու բազմազուտ անասուններուն, ինչպէս եղին, կովուն, ուղտին, շունին, ձիուն, աւանակին։ Թիշնէ Սայլերզը վայոց Զորի, աւել հայ գիւղացին եղը կ'անունէ եղբայր։— «Հօ՛ւ արա, Ե՛ղը, ըս՛մ, աղբէր ըս՛մ, Խօ՛...»։

Ժիշդ այդ պահուն, խումբ մը, մէկու մը դպրապետութեամբ, սկսաւ երգել Սայլերզը։

— Հօ՛ւ արա, Ե՛ղը,
Ձա՛մ, աղբէր ըս՛մ, Խօ՛,
Թօ՛ւ արա, Ե՛ղը,
Ձա՛մ, աղբէր։

Դէ՛, սիրում, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ,
Դէ՛, Ժիրաթ, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ,
Դէ՛, տակամ, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ, Ե՛լ,
Խօ՛...

Ոմանք սահմակեցան, տեսնելով որ գառախօսութիւնը կ'ընդմիջուի։ Կը խանգարուի երգով, եւ կրնայ անախորժութիւն մը պատահի։

Ուրիշներ միամտօրէն կարծեցին որ այդ խմբերը մաս կը կազմէ յայտադրին, այսինքն գառախօսութեան։

Կարգ մը ներկաներ զդային հեզանքը, ու կէտ ժպիտներ ունեցան։ Եղան նաեւ իրենց զայրոյթը զսպողներ։

Ո՛ւ ոք սահայն արդիւնք խմբերը, քանի որ ան կոմիտան են էր, հայ գեղջկական էր, որով նուբրական։

Երբ բացարձակ լռութեան մէջ ուն-

կընդունեցաւ եւ աւարտեցաւ խմբերը, այն ապաւորութիւնը թողուց շատերու վրայ, որ կանխորոշուած էր այդ համերգը։ Թեթեւ ծափահարութիւն մը եղաւ։

Դառախօսը, հակառակ հարցականի մը մէջ ըլլալուն, զսպեց իր զարմանահար արտայայտութիւնը, ու շարունակեց իր խօսքը, ըսելով։

— Հայ բանաստեղծութեան Աղաւնին, Մկրտիչ Պէշկէթչեան, երգիչը եղբայրութեան, ունի գլուխ գործոց քերթուած մը, ծանօթ բոլորիդ։ Այդ երգը մնացած է այժմէական, եւ որեւէ ժամանակէ աւելի, հիմա է որ պէտք է երգուի ու արձագանդէ հայ հոգիներու մէջ։ Այդ վսեմ երգը «Եղբայր եմք Մենք»ն է։

Այս խօսքերը ծափահարուեցան, բայց ծափահարութեան ծանրութիւնը կու գար հայ Ազատ Որոնադիրներու կողմէն, որոնք կարծէք հակադէմու համար քիչ առաջուան երգիչներուն, սկսան դուռ ձայնով թնդացնել սրահը, երգելով յիշեալ բանաստեղծութեան առաջին երկու տունները։

— Ի բիւր ձայնից բնութեամ շրճեդ՝
Թէ երգ քոչին սիրազարար,
Մատում կուսին ամենագեղ,
Թէ ար զարնեմ փափուկ ջրնար,

Չունին ձայն մի այնքան սիրուն։

Քան զամսկալի եղբայր ամուն։

Տո՛ւր իմ ճու ճեռք, եղբայր եմք մենք,

Որ մըրըրկաւ էինք գառաւած,

Բախտին ամէմ ոյս չար ու ննգ,

Ի մի համբայր ցունին ի քաց։

Ընդ աստեղոք ի՞նչ կայ սիրուն,

Քան զամսկալի եղբայր ամուն։

Թէեւ լաւ ազդեցութիւն թողուց «Եղբայր եմք Մենք»ի խմբերը, սակայն, ապաւորութիւնը տարօրինակ ալ էր, որովհետեւ ներկաներէն շատեր կը մասնէին։

— Եթէ նախապէս որոշուած էր այս

կառնեցուհի երգուհի, կարգադրութիւն մըն է այլանդակ: Իսկ եթէ որոշուած չէ ու ինքնաբերաբար կ'երգուի, աւելի աշխնդակ է երեւոյթը:

Եւ սակայն, «եղբայր Եմէ Մենք» երգուած էր յուզումով, աւելի քան լըր-լութեամբ, նոյնիսկ անզգայի զայրոյթով, իրքեւ տեսակ մը հակացոյց Վայր-լիւրդը խմբերգողներուն դէմ:

Դասախօսը նոր հայկաբանութեամբ մը յայտարարեց.

— Հայոց մէջ ու հայերէնի մէջ, հղ-րայրասիրութեան հոմանիշ համարուե-լու են հետեւեալները. — հայկաշինու-թիւն, մարտկոթիւն, վարդանեութիւն, մկրտչութիւն: Պէտք է հայկաշինել, մարտկոթել, վարդանել, մկրտչել...

Բուն ծափահարութիւններ:

— Իսկ հղբայրութեան հականիշն են կայէնիւն, վասակիւն ու մհհհհհհ-նիւն:

Դասախօսը իր բանքը վերջացուց՝ ջերմ ծափառւ մէջ, պաթոսով յազնցած վերջաբանով մը կոչ ընելով հղբայրա-սիրութեան:

Պահ մը լռեց, կարծել տալով թէ վերջացուցած է իր խօսքը: Բայց այդ պէս չէր. ունէր կարեւոր ըսելիք մը, եւ արտայայտուեցաւ հաղորդական յուզու-մով.

— Եւ վերջապէս, վերջապէ՛ս, սիրե-լի հղբայրներ ու զոյրեր, միայն հաւա-գական, հարազատ հղբայրութեամբ է որ օտարներէն լքուած ու մեր մեռելներն գետին ինկած Հայկական Հարցը կրնայ բարձրանալ ու բացուի, իրքեւ ամէնօր-եայ խնդիր, միջին արդար կարգադրու-թիւն: Հայկական Հարցին օտարներէն լքուիլ՝ ամէնէն կարկառուն անբարո-յականութիւնն է աշխարհի: Իսկ Հայուն կողմէ Թողլուիլ՝ ամէնէն անգաւելի սրբապղծութիւնն է մեր: Հայկական Հարցը պէտք է հնչէ, ու ամենայն ինչ լռէ: Հայկական Հարցին հազաքն ու հուշիւն եւ հոգին հղբայրութիւնն է: Եւ առանց մե'ր հղբայրութեան, ո՛չ մէկ

հղբայրութիւն կրնայ յորուցանել Հա-կական Հարցը: Մեր դատին լուծումէն ետքն ալ, Հայուն հղբայրասիրութիւնը պէտք է ըլլայ ամէնէն երկարունակ խ-րողութիւնը մեր մօլորակին: Մեր թա-փած արիւնով՝ ամբողջական հայրենիքը ունենալն անգամ քիչ է, եթէ պիտի չու-նենանք հայրենիքը իրական գրոթոա-վայրի վերածող եղբայրասիրութիւնը: Մափե'ր, հոգիներու ընկերակցու-թեամբ:

Եւ որովհետեւ յայտարարուած էր թէ դասախօսութենէն ետքը կարելի է հարցումներ ուղղել, նախագահը յիշե-ցուց այլ պարագան, հրաւիրելով հար-ցում ունեցողները:

Փանի մը վայրկեան լուրճին ախ-րեց, ապա, կիս մը դասախօսին հար-ցուց.

— Ինչո՞ւ հղբայրութիւնն րառը կայ, բայց չկայ հղբութիւնն րառը...

Դասախօսը պատասխանեց.

— Այլ. հարցումը լեզուաբանական ըլլալով՝ իմ նիւթէս դուրս է:

Յայնմամ, ուսուցիչ մը խօսք ուղե-լով նախագահէն՝ ըսաւ.

— Որովհետեւ հղբայրն րառը այլ է ու կրնայ կազմել բառական ընտանիք: «եղբայրաբառին ընտանիքին անդամներն են. — հղբայրութիւն, հղբայրակցութիւն, հղբայրանալ, հղբայրասիրութիւն, հղ-բայրական, հղբայրօրէն կամ հղբայրա-բար, հղբայրասէր, հղբայրատեաց եւ հղբայրասպան:

Սարսուռ մը տնցաւ ներկաներուն մէջէն, վերջին բառին պատճառով:

Երկրորդ օւսուցիչ մը խօսք ուղե-լով՝ յայտարարեց.

— Սխալ է կարծել թէ հղբն րառը ընտանիք չունի: Ի՞նչ են հապա հետեւ-եալ բառերը. — քեռայր, քեռորդի կամ քեռորդեակ:

Առաջին ուսուցիչը աւելցուց.

— Ընդամենը զոյգ մը բառ, որ ըն-տանիք չի կրնար կազմել: Փոքրիկ ըն-տանիքի մը կազմութեան համար անգամ

անհրաժեշտ են տունուսան երեք բառեր կամ անձեր:

Ուրիշ հարցում ունեցող չլլալով՝ նախագահը վերջացած յայտարարեց դատախազութիւնը, աւելցնելով.

— Մենք միշտ այսպէս ենք: Կը կառնինք բառին կամ տառին, մոռնալով ուրիշ:

Արժէն ընդունեց շնորհաւորութիւններ:

Հօրեղբայրը ոմանց միայն յայտնեց՝ թէ Արժէնը իր եղբորորդին է:

Յ

Քանի մը օր ետքը, շարաթաթերթ մը եւ օրաթերթ մը արտայայտուեցան դատախազութեան մասին:

Օրաթերթը, ի մէջ այլոց, գրած էր.

— Դատախազը նիւթը արժատէն բռնեց. անսինքն սկսաւ Արժէն, աւելի ճիշդը կայէնէն ու Արժէն, եւ հասաւ մինչեւ մեր օրերը, մինչեւ մարդուն եղբայրութիւնը եղին ու այլ ընտանի անասուններուն հետ: Դատապարտեց եղբայրատեսակութիւնը, հայերէնին պարզեւելով քանի մը նորակերտ բառեր, ինչպէս «հայկաշինը», «մեքոպը», «վարդանէն», «մկրտչի», իրրեւ «եղբայրանալ» բառին հոմանիշներ, ինչպէս նաեւ «կայիկ», «վասակ», «մհրութանի», իրրեւ «ականիշներ»: Դատախազութիւնը ունկնդիրներու երկու խմբակներու կողմէ ընդմիջեցաւ, ինքնաբոլի կերպով երգուած մէջ մէկ խմբերգով: Փարիզահայ դատախազին մաքուր հայերէնը զարմացուց մեզ, իսկ կրօնական հետեւութիւնն ալ մեզ զմայլեցուց:

Շարաթաթերթն ալ, ի մէջ այլոց, գրած էր.

— Փարիզէն քաղաք ժամանած երիտասարդ մտաւորական Պրն. Արժէն Սուրճեանի «Նորայրութիւն» դատախազութիւնը եղաւ շատաշուք ապտակ մը, արժէն կարգի հղարարատեսներուն համար: Այդ ապտակը պէտք է շառաչէ նաեւ

Պէյրութի միւս թաղերուն մէջ ալ, կըրկնըւնելով այս աշխարհին, շահեկան ու շինիլ դատախազութիւնը, որ ստացաւ երաժշտական ու հայագիտական դարձեւածքներ, այնքան հաճելի կերպով: Դատախազը «մարդը մարդուն վայել» առածը բարեփոխեց, բարձրացուց ու ըրաւ «մարդը մարդուն եղբայր»:

Հօրեղբայրը այսպէս արտայայտուած էր Արժէնին.

— Դատախազութիւնը արամաղբութիւն ստեղծեց խմբերգելու: Որեւէ բան որ երգելու փոփաք կը պարզեւէ, կապուեցանէ իր ներդաշնակութիւն ըլլալը: Նոր շինած բառերը ալ շնորհաւորելի են: Մեր մէջ, նորութիւն մըն է, պանծալի մէկու մը անունը վերածել բայի, աւելի քան պանծացնելու զինքը: Քու ստեղծած նորութիւնը վստահարար պիտի շարունակուի, ու պիտի ստեղծուի նոր բառեր, որոնց բուն հայրութիւնը պիտի պատկանի քեզի: Մարդարէ ըլլալու պէտք չկայ, զուշակելու համար որ պիտի ստեղծուին հետեւեալ բառերը. — կոմիտասել, զոհրապել, մալիզել, (այս վերջինը խառնակելու իմաստով): Փալով վարժապետին ըսածին՝ թէ «քոյր» բառը ընտանիք լուծի, բացի «քեռայր» ու «քեռորդի» բառերէն, սխալ է: Ահա «քոյր» բառին ընտանիքին միւս պատուական անդամները. — քենի, քէպապ ու գինի:

Դատախազութեան ներկայ եղած էին, քառական ուշ գալով, ծինյողագին երկու աղջիկները, որոնք ջանալով անընկաշի մնալ, վարժապետուած էին, ու նախընտրեցին նստիլ ետեւի աթոռներուն վրայ: Օրիորդներուն նպատակը դատախազութիւնը ունկնդրել չէր, այլ տեսնել դատախազը:

Երբ աւարտեցաւ դատախազութիւնը, առաջին մեկնողները եղան ծինյողագ քոյրերը. փախչելու պէս հեռացան, եւ իրենց սեպական ինքնաշարժը նստելով՝ քնեցին դէպի համբա:

Ժամբան, կառքին մէջ, փոքր քոյր-

բը, որ վարորդն էր, ըստւ.

— Այս երեկոյ, պարոն Արմէնը նոր բառեր ստեղծեց, բայց լուր չունի որ բառ մըն ալ մե'նք ստեղծեցինք ու գործադրեցինք:

Մեծը զորմացած հարցուց.

— Ո՛րն է մեր ստեղծած ու գործադրած բառը:

— «Տղայահաս»ը, ինչո՞ւ ըլլայ «ազ-լիկտեա» ու լըլլայ «տղայտեա»:

Ու խնդացին:

Ապա, լրջացան, ու մեծը ըստւ.

— Տղեղ չէ պարոն Արմէնը:

— Տղէտ ալ չէ...

— Շատ եղբայրամուլ է:

— Կնամուլ ալ է անպատճառ:

— Կը կարծե՞ս...

— Գրեթէ վստահ եմ:

— Ի՞նչպէս...

— Որովհետեւ մոլութիւնը կը նմանի երկաթուղիի գիծի մը, որ յարաբերու-թիւն ունի միւս բոլոր գիծերուն հետ:

Կառքը կը սուրար, բեռնաւորուած Հիմնեան երազներու երկու ոսկի սըն-տուկներով, ինչպէս նաեւ նորակերտ երկու հայերէն բառերով.

— «Տղայտեա» ու «եղբայրամուլ»:

ԱՍՈՒԼԻՄ՝ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ

ԱՂԱՆԴԵՐՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Երեկոյ մը, տանը մէջ, ժամը հին-գիւ ատենները, Արմէն հօգեգործը ըստւ.

— Այսօր ալ խօսինք՝ Պէյրուսի ճա-շարաններուն, ըմպելարաններուն մէջ առաւոյ աղանդերներուն մասին, որոնք օտարականին ուշադրութիւնը կը գրաւեն:

— Անշուշտ. օտարականին ուշադրու-թիւնը կը գրաւեն իրենց առատութիւ-նով, պէսպիսութեամբ, ճոխութիւնով, չքողութեամբ: Մեր աղանդերները թ-րեկց որակով ու քանակով կը մնան ան-մըրցելի:

— Երկու հոգի երբ միմեկ շէշ մը օ-ղի կ'ապագրեն, երկու-երեք սեղան լե-

ցընելու շափ աղանդերներ կու գտն, մէկ անգամէն, փայտէ մեծատարած ափռէ-յ ներով:

— Եւ յաճախորդը ինքզինքը կը կար-ծէ դրախտի մէջ կամ Յէմնէքի: Կատար-եալ «կե'ր, ա'բբ եւ ուրախ լիբն» մը: Այնպէս չէ՞... Աղանդերներու պատ-րաստութիւնը ճարտարաւեստ մըն է եղած Լիբանանի մէջ: Ռոհանոցի դի-տութեան ու գեղարուեստի գլուխ գոր-ծոցն է աղանդերներու պատրաստութե-ւնը, որուն յերանանեանը կը մնայ անգե-րազանցելի: Պէյրուսի մէջ, պէյ կը կար-ծէ մարդ ինքզինքը, երբ կը բազմի ա-ղանդերներով զարդանկարեալ երկար սեղանի մը առջեւ: Պէյրուսի մէջ, պէյ կրնայ ըլլալ ամէն ոք, շարաքը անգամ մը գտնէ:

— Հօգեղբայր, քէշ մըն ալ խօսինք լըջօրէն:

— Վա՛յ, մինչեւ Հիմակ լըջօրէն չէի՞նք խօսեր...

— Ո՛ւ, հօգեղբայր. Հիմակ է որ պի-տի խօսինք լըջօրէն:

— Է՛, լա՛ւ: Խօսէ՛ տեսներք:

— Պէյրուսի ըմպելարաններուն մէջ բերուածները աղանդեր չեն, այլ աղ-մուկ, աղանդերի ամբիթ, խուճան, խառնակութիւն, խալապալըն, մեծ ու պզտիկ պնակներու պարտէզ — պարա-հանգէս բարեկենդանի: Պնակները շատ են, լիցուն են, բայց աւտելիք բան չը-կայ: Պնակներուն մէջ ամէն բան կայ, բացի ուտելիքէ:

— Դուն խենթեցած ես, ու մտադրած ես զի՞ս ալ խենթեցնել: Շէշ մը օղիի հետ բերուած աղանդերներով, ոչ թէ մէկ-երկու, այլ շորս-հինգ արարածներ կրնան կշտանալ:

— Համաճայե եմ կատարելապէս միջ-բերուածներով կրնան կշտանալ քանի մը օտարականներ, քանի մը հաւեր, քանի մըն ալ կատուններ, բայց չէք ուտելիք մարգարէի:

— Բերուած աղանդերները բերելի վայել են պէյի, փաշայի, օսութանի: Ե-

թէ դուն ատենցմէ մէկը չես խնդիրը կը փոխուի...

— Կրնայ ըլլալ որ Զանգիպարի սուրբանին քիմիայի յարմար ըլլան. բայց իմ քաղաքակրթութեան քիմիա կը մերժէ զտնոնք: Քանի անգամ է որ ծովեզերեայ ըմպելարանները կ'երթամ կը նստիմ, եւ աղանդները կու գան, ու դրեթէ եղանակէն պէս եւ կ'երթան: Կը հարցնեմ՝ օգիտի աղանդէ՞ր են հում թոքը, հում միւսք, հազարը, համառը, խմամառը, թապալուչէն, կուտը, ապակուած սոխը, շմթնով պէտքէ կը, մէթով մածունը, տոբակը, լէպլէպլում... Ա՛յ ո՞ր մէկը ըսեմ... Խառնիճազանք մը, խուրտխալապալը մը, հրմշուռք մը, բաթըրսը մը, բաճալիք մը, բարեկենդան մը անգանդեր... Աղանդերի աղանդ մը...

— Քիմիայի ճաշակի խնդիրները անվիճելի են, ըսուած է թէ եւ իրաւամբ. բայց մեր աղանդները վեր են այդ ճշմարտութիւնէն: Երբ ես կը բազմիմ մեր ըմպելարաններէն մէկուն մէջ, երբ մանաւանդ ան ըլլայ ծովեզերեայ կամ լեռնային, ինծի կը թուի թէ Յէմմէթին եօթներորդ երկնքին մէջ եմ, ու քովս նստած է հուրի մը, որուն համարները կ'ըմպեմ ու կը ճաշակեմ, ամէն մէկ գաւաթ օղիիս ու ամէն մէկ պատառ աղանդերիս հետ: Եւ դեռ ինչե՞ր...

— Կ'երեւի հուրիին համարներն են համառը աղանդներն: Իսկ ես որ հուրիի մը համարները չունիմ, զառնօրէն կը զգամ անհամութիւնը անպտեղանքութեան: Ատկէ զատ, զուն կը մեղանչես տրգայութեան մէջ:

— Մօ՛ խախտ, արքայութեան մէջ մեղանչելը արտօնուած է: Արքայութեան մէջ մեղք գործելը՝ մեղք չէ: Արդար հոգիները որոնք անմեղութեամբ ապրած են սա անցաւոր աշխարհի մէջ, իրաւունք ունին, յատկանշականութեան մէջ յատկանշական մեղանչելու: Ա՛ս է գերագոյն վարձատրութիւնը: Եթէ երկրի վրայ հաճոյքի սովի մէջ ապրողները՝ երկնքի մէջ ալ պիտի ենթարկուին զըր-

կանքի, ուրեմն ո՛չ կեանքը իմաստ ունի, ոչ ալ անմահութիւնը՝ նպատակ:

— Իմ գիտնալս ան է որ Յէմմէթին եօթներորդ երկնքին մէջ արդիւրուած է օղի խմելը, Այնտեղ կաթ կ'ըմպեն:

— Ճիշդ այդ պատճառով՝ օղիին համար ըսուած է՝ «առիւծի կաթ»: Բայց ես քեզի առած մը ըսեմ. քեզի, որ չեմ պնդատեր մեր անհատնում ու անմահական աղանդները...

— Ըսէ՛, հորեղբայր:

— Զե՛ս վշտանար տառակաբար:

— Զե՛ս վշտանար, քանի որ ըսողը զուն եւ հօրեղբայրօրէն:

— «Է՛ն ի՛նչ դիտէ՛» նույն ի՛նչ է՞:

— Բայց այսօրուան է՛չքն անգամ գիտեն թէ աղանդերը ի՛նչ է՛, գիտեն նաեւ թէ ինչպէ՛ս պիտի մատուցուի:

— Ըսէ՛ որ մենք ալ գիտնանք եւ բարձրանանք գիտակից իշու աստիճանին:

— Աղանդները ամէն բանէ առաջ, պէտք է տրուին չափով: Առատութիւնը աղանդերին մահն է, առատութիւնը անհամութիւնն է աղանդերին, առատութեամբ աղանդերը կը կորսնցնէ ոչ միայն համը, այլ հմայքը: Ատկէ զատ, ամէն ուսուցիչ՝ աղանդեր դառնալու միջոցը չունի: Մասնաւոր ուսուցիչներ կան՝ այդ շնորհքով օժտուած: Աղանդները կը բաժնուին երկու խումբի՝ ազդ ու տաք: Պաղ աղանդեր են լուրիւս, բողկը, ծիթապտուղը, կարիտուր, թթուները, պանիրը, ապուխտը, երչիկը, սիսեռը, անձրուկը եւայլն: Տաք աղանդեր են ապակուած ուլականջը, տապակուած ձկնիկները, փոքրիկ ճեմքները, հաւկիթով ապուխտը եւայլն: Նախ բերուելու են պաղերը, ապա տաքերը: Իսկ թէ՛ պաղերը, թէ՛ տաքերը բերուելու են չափով ու ճոխանալու են հետզհետէ: Միշտ պահելով քանակին չափաւորութիւնը, երբ ամէն ինչ մէկ անգամէն եւ տառաւորէն կը բերուի, ամէնը մէկ կը դառնայ մահամերձ կամ մեռել, եթէ նոյն իսկ իրական եւ ընտիր աղանդեր ըլլան: Ա՛յ չի մնար նորութիւն, չի մնար անա-

կրնակալ: Երբ երեք հոգի սեղանի մը շուրջ են, ու սեղանին վրայ, ի մէջ այլոց, կայ միայն զայդ մը բողկ, այդ բողկները կը բարձրանան իրենց համով, հմայքով, եւ կը գտնան ասան անգամ ցանկալի: Սեղանակիցներէն մէկը կ'առնէ կ'ուտէ մէկ բողկը: Կը մնայ միայն մէկ բողկ, երկու հոգիի համար: Այդ երկուքին աչքերը՝ այդ միակ բողկին վրայ կը մտնեն: Ի վերջոյ, կը կրնան ու կը ճաշակեն անսպասուելիքի մը նըման: Իսկ եթէ սեղանին վրայ գտնուէր պնակ մը լեցուն բողկ, այդ բողկները պիտի շունչենային հազուադէպ համ ու հմայք: Աղանդներ ըստածը ունի իր հոգեբանական գաղափարը: Առատութիւնը յագեցում կ'առնէ, իսկ յագեցումը՝ զընդամենը: Ձեր աղանդերի ճարտարաբանութեան լուսնի շափի, ընտրութեան, համի պաշտօններ, Ձեր աղանդները հեղեղներ են, որոնք կը պատճառեն ողորումներ, խնդրելով մարդկային ախորժակը: Եթէ աղանդեր պատրաստուել գիտութիւն է, աղանդեր մատուցանելն ալ արուեստ է: Դուք ո'չ գիտուն էք, ոչ ալ արուեստագէտ: Դուք եղածը լափող, լակող, լպպող էք:

— Այսինքն պարզապէս ըսել կ'ուզեն թէ շուտուելիք բաները կ'ուտենք իշու պէս:

— Ո՛չ, իշու պէս չէ, լէլէլի պէս:

— Կը նախատես:

— Լիբանանեան օդահղանը իր աղանդներն ունի կը նմանցնեն Էլէֆ խաղին, ճատրակին: Կերութիւն ընողները պարտուած են:

— Անշուրհ նմանութիւն: Իսկ ես օղին կը նմանցնեմ Թազուորի մը, որուն չքախումբը կը կազմեն մեր աղանդները: Ըմպողը եւ ռառողը ճաշակած կ'ըլլայ պալատի մը ու պարտէզի մը պարունակութիւնը — արքայ, աւագանի, ծաղկանոց — կանանոց, զինեալներ, պարուհիներ ու թմբկահարներ եւ փողահարներ: Իսկ մենք կ'ըմպենք յամբարաթ թազաւորը, ճաշակելով իր հետե-

ւորները:

— Սէ եղաւ շնորհք՝ միայն նմանութիւնը: Բարբարոս մը անգամ տղաքան բան պիտի չկրնար ստեղծել: Լիբանանեան օդահղանը իր աղանդներն ունի թաղմութիւն մը ու պղտիկ պնակներով կը նմանի կղզեխումբի մը, տեսակ մը Բոլիւնդ-պիա: Կղզեխումբ մը լարբերութեամբ, ուր ամէն մէկ կղզիի ու կղզեակի մէջ հակառակ ուտելիք մը ըլլալուն, Եւրոպայի մը չի կրնար գտնել իր թիմքին յարմար բան մը, եւ առատութեան մէջ կը մնայ սովահար:

— Առաջին անգամն է որ կը լսեմ թէ շատը անշուս է:

— Միթէ անշուս չէ՞ շատախոսութիւնը եւ շատակերութիւնը:

— Քու շատախոսութիւնդ գրգռեց իմ շատակերութիւնս: Սկսեմ, քեզի հետ ըմպելարան մը երթանք ու վայելենք մեր օղին ու աղանդները: Մեր աղանդներն ունեն մէկ տեսակ քեզի ներկայացնում ու ներբողում, որպէսզի ճանաչեանք ինչպէս նաեւ ճանչնան ինքզինքդ: Այո՛, ճանչնան ինքզինքդ ու հրաժարին ինքզինքէդ, այսինքն թիւր մտածումներէդ եւ զգացումներէդ: Բարձրանաւ Եօթներորդ երկինք: Վերէն նայիս աշխարհի վրայ: Քանի մը ժամ դառնաս երանելի: Գանձես կանխավճար մը անժառանգներէն:

— Ձմռանամ ըսել, սիրելի հօրեղբայրս, որ Պէյրութահայոց բոլոր ապարկներուն մէջ, տեսայ մարդիկ, որոնք մեր աղանդներն ունեն շատ անհամ են ու անշուրհ: Որոնք չեն մարտաւիր, որոնց վրայ նայել անգամ գրեւոր է: Սակայն անոնք, դժբախտաբար, միշտ սեղանի վրայ են...

— Այդ մասին կը խօսինք օդահղանին շուրջը: Բայց պիտի դա՞մ թէ ոչ...

— Կու գամ, հօրեղբայր, կու գամ, որովհետեւ ի՞մ սիրած աղանդներն ուն պէս համով մարդ են:

— Եթէ համով եմ, համա կը պարտիմ աղանդներն ուն Լիբանանի:

ԱՍՈՒՆԻՍ՝ ՄԱՀՈՒԱՆ ՄԸ ԱՌՅԻՒ

Առաւօտ մը, օրուան թերթերը ու նամակներ ընդունելէ, ու անոնց վրայ աչք մը նետելէ հտքը, հօրեղբայրը Արմէնին ըսաւ.

— Գիտե՞ս, մեր բարեկամ Մկրտիչ Մկրտիչեանը մեռած է։ Աստուած ողորմի հոգւոյն։ Լոյսհրու մէջ հանգիւի։ Ախր ա՛հ, բիւր օփսոս։ Ի՞նչ մարդ էր, ի՞նչ մարդ։ Մեր ժողովուրդը աղուոր բացատրութիւն մը ունի. կ'ըսէ — «Մեռնելիք մարդ չէր...»։ Այս խօսքը շատ կը պատշաճի Մկրտիչեանին։ Իրապէս մեռնելիք մարդ չէր։ Տակաւին ուրիշ բան. Եւրոպայէ մարդ ալ չէր։ Բայց թէ՛ Եւրոպայէ, թէ՛ մեռաւ։ Իր մէջ ճիշդիկ մը կար, ճիշդիկիկն մէջ ալ միմ մը կար։ Բայց թէ՛ միմին, թէ՛ ճիշդիկիկն կը հըրամայէր՝ իր խորքին մէջ զտնուող Հայր։ Գոյնի նմանող այս մարդը համակ կենսունակութիւն էր։ Ամէն գործի մէջլէն կ'ելլէր։ Երբ գործ կ'ըսեմ, արհեստ չկարծես. աղագային գործ։ Կ'եփէր, կ'եռար, կը փրփրէր։ Գործ չկողած ատենը ամէնէն տիտուր մարդն էր։ Անպիտանը շատ պիտանի մարդ էր։ Միշտ յաջողած, միշտ յաղթած է։ Իր միակ պարտութիւնը իր մահը եղաւ։ Այդ միմին, այդ ճիշդիկիկն վրայ ճիշդ մը յարձակեցաւ, ու մեր Մկրտիչը գետին զարկաւ։ Իրապէս մեռնելիք մարդ չէր...։ Ա՛հ, ո՞վ պիտի գգնտնէ, զինքը զարնող ճիւղաղբ...։ Հինգ շաբթի յուզարկաւորութեան պիտի երթամ։ Պէտք է դուն ալ դաս, Արմէն։

Արմէն պատասխանեց.

— Գալը անշուշտ կու գամ։ Բայց թերթերը բան մը չըրեցին։ Այդ Մկրտիչեանը ե՞րբ, ո՞ւր, ի՞նչպէս զարնուեցաւ։ Ոճրագործները որո՞նք են... Բլուշեալ Ե...

— Ինչո՞ր գուրս կու տաս... Մարդը բնական մահով մեռած է... Մահացաւ քաղցկեղէ...

— Ի՞նչ... Լիրանանի մէջ բնական մահով մեռնողներ ալ կ'ըլլան...

— Հապա ի՞նչ... կը կարծէիր որ տեղացիները միայն զիրար զարնելով կը մեռնին... Աս ի՞նչ գէշ կարծիք ունիս մեր մասին։

— Բայց լաւագոյն կարծիքը ունիմ Լիրանանի մասին։

— Քեզի ըլլալ այդ լաւագոյն կտրծիքը։ Եթէ Լիրանանի մէջ մարդիկ ըլլանաւ մահով չմեռնէին, բոլոր մարդիկ հոս կը խուսէին։ Իսկ եթէ Լիրանանի մէջ բոլոր մեռնողները եղբայրասպան զնդակի զոհ ըլլային, մէկ հոգի, մահաւանդ մէկ հայ չէր մնար հոս։

— Ես արդէն կը զարմանամ որ Լիրանանի մէջ Հայեր կը բնակին... Այս իրողութիւնը կը վերադրեմ Լիրանանի հայութեան քաջութեան, ու կը զմայլիմ։

— Թոյլ տուր որ ես ալ հիանամ քո՛ւ քաջութեանդ վրայ, որ այդքան գէշ կարծիք ունենալով հանդերձ Լիրանանի հայութեան մասին, անվախօրէն Պէյբուլթ եկար... Իրապէս հերոսական շուշորթ մը ունիս...

— Ես Պէյբուլթ չեկայ զարնելու կամ զարնուելու համար։ Ես եկայ սիրոյ համար, համայնքային համընդհանր համար։

— Քու համայնքային համընդհանր սածիղ ի՞նչ ըլլալը գիտեմ։ Վաղը եթէ բնտրած հայուհիդ համբուրես, ամէն ինչ կը լուծես...

— Կը բողոքեմ։

— Կը վերլուծես։ Հիմա՛կ ալ կը բողոքես։ Բայց նայէ որ համընդհանր կարուած չուտես...

— Եթէ իմ սիրածս զիս հարուածէ, նախ ինքզինքս կը սպաննեմ, ապա՝ զինքը։

— Կը գուշակէի որ բացառիկ հերոս մըն ես։ Դիցազունի մը չըրածը՝ գուն կրնաս ընել, այսինքն նախ անձնատպան կ'ըլլաս, ապա ոճիւր կը գործես, անշուշտ պահ մը յարուսթիւն տոնելով։ Դուն Պէյբուլթ եկած ես հրաշքներ գործելու համար։ Ամենայն զէպս նշանակէ

մեղադրութիւնը մէջ. հինգշաբթի յուզարկաւորութիւն:

— Դամբանակա՞ն պիտի խօսիս...

— Ես դամբանախօս եմ ողջերուն համար միայն:

— Ուրեմն կը պատահմ ինծի համար խօսելիք դամբանականիդ:

— Դամբանականը մէկ անգամ կը խօսուի:

— Ճիշդ է: Մէկ անգամ կը խօսուի դամբանականը, ու զայն չի կրնար լսել մեռելը կամ ողջ մեռելը:

— Որոհուրդ մը տամ քեզի. երբ այստեղ տեսնեմ փողոց ելլես, ուշադրութիւն ըրէ՛, ու պիտի տեսնես, ամէն, օր, պատահելու վրայ, փակցուած մահազգները: Ու պիտի դիտես ուր այդքան մարդիկ մեռած չեն կրնար ըլլալ սպաննուելով...

— Ես շատոնց է որ տեսած եմ այդ մահազգները: Բայց ես կը կարծէի որ լիրանանի պէս անմահաբար երկրի մը մէջ, մարդիկ չեն մեռնիր, եթէ չըստանան...

— Եւ բոլոր մեռեալները մահափորձի՞ ենթարկուած կը կարծէիր...

— Ո՛ր: Ես կը կարծէի որ անմահութեան այս երկրին մէջ, մեռնողները մեռելաբարմեններ, մեռելաթաղներն են, որոնք զորք չունենալով՝ մահացած են սովահարութենէ:

ԱՍՈՒԼԻՄ ՄԵԾԱՆԿԱՐ ՈՒ ՄԱՆՐԱՆԿԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Առաջու մը, նախանշէն քիչ մը ետքը, երբ խօսք եղաւ կուսակցութիւններու մասին, Արմէն ըսաւ.

— Այդ մը, որքան կարելի է, պէտք չէ ըլլայ բաժնուած, արուեստական ազդերու վերածուած: Մահաւանդ մեր ազգը: Կուսակցութիւնները կը ոտնդնեն բաժնուածներ: Կուսակցութիւնները պէտք է ծառայեն ազգին, մինչդեռ իրենք մէյ մէկ ազգ եղած են, ու կ'ուզեն որ ազգը իրենց ծառայէ: Կուսակցութիւնները պէտք է հայրենակիցներու

մէջ արծարծեն սէրը, մինչդեռ տակաւորին կը սերմանեն կամայ ակամայ:

Հորեղբայրը պատուախանց.

— Եւ ասոր համար, դուն իբրեւ կրկնապէս սիրոյ առաջնալ, եկած ես մեր մէջ: Թէ՛ ազգային սէրը հրահրելու, թէ՛ քու անհատական սէրդ հետապնդելու: Տղա՛ս, ազգի մը անհատները միեւնոյն կազապարէն կամ քիթէն ինչ կած չեն: Կայ խառնուածքի խեղդիր... Ամէն մէկ ազգ բաժնուած է դատակարարութեամբ, դատաւարութեամբ, կուսակցութիւններու, նոյնիսկ կրօններու:

— Կրօններու՞ ալ. կը չափազանցես: Ո՞ր ազգն է որ ունի քանի մը կրօնքի պատկանողներ:

— Ամէն մէկ ազգ: Դուն երեւոյթէն մի՛ դատիր: Միթէ ամէն ազգի մէջ չընկաւ մահաւատականներ, մովսիսականներ, հեթանոսներ ու քրիստոնեաներ: Եւ այս վերջինները փոքրամասնութիւն են: Այդ մը միակտուր, միատեսակ չի կրնար ըլլալ: Ատիկա դէժ է բնութեան: Ոչինչ կայ միանման: Սէրը չէ որ կը տիրապետէ, այլ՝ պայքարը: Այս այսպէս է մինչեւ անգամ զիւղի մը մէջ: Եթէ կուսակցութիւնները կազմուած են ազգին համար, ազգն ալ ստեղծուած է կուսակցութիւններու համար: Եւ ո՛վ որ կուսակցական չէ, զորք չի կրնար ունենալ ազգին մէջ: Զանձոյթէն կամ ուրիշ պատճառով կը մեռնի: Եւ կամ պէտք է կազմէ մանրանկար կուսակցութիւն մը, որուն նմանները տեսայ որեւէ լիան քաղաքի մը մէջ:

— Ի՞նչպէս... Պատմէիր...

— Ծանցայ երեք քայրեր, որոնք կազմած էին մէյ մէկ կուսակցութիւն: Ունէին անդամներ ու համակիրներ, թէ՛ իրենց զերդաստանին պատկանողներէն, թէ՛ իրենց ծանօթներէն:

— Բայց ի՞նչ կուսակցութիւններ էին անոնց կազմածները...

— Կուսակցութիւնը ըսելու ձեւ մըն է: Կարեւորը այն է որ այդ երեք քայրերը յաջողած էին թէ՛ իրենց զերդաստան

նը, թէ՛ իրենց ազգած քաղաքին Հայկ-
բը բաժնել երեք մասի: Անշուշտ պայ-
քաբի մը մէջ էին կատարէ: Երեք քոյ-
րերն ալ ամուսնացած էին, եւ ունէին
իրենց ընդունելութեան օրերը: Երէց
քոյրը կազմած էր կծծիներու կուսակ-
ցութիւնը: Միջնակը կազմած էր խնա-
յառէրներու կուսակցութիւնը, իսկ կըլտ-
սեր քոյրը կազմած էր շաւայիներու, չը-
քիզներու կամ էջ Շարաններու կուսակ-
ցութիւնը: Այդ երեք կուսակցութիւն-
ներուն պայքարի զենքերն էին զրպար-
աութիւնները: Երեքն ալ ունէին անըս-
պառ զինարաններ ու զինուորական
բանքառանքի: Ամէն մէկը ունէր իր փի-
լիսոփայութիւնը:— Գիշիւ, խնայել, մե-
տել, Թէեւ այդ երեք կուսակցութիւն-
ները սերմանած էին աստիւթիւն, թէեւ
զիրար կը վիրաւորէին անխնայ, թէեւ
քաղաքին Հայութեան խաղաղութիւնը
խանգարած էին, բայց պէտք է խոստո-
վանիլ որ աստիւթած էին մշակութային,
գեղարուեստական, ազգային շարժում-
ներ, ու մեռնալ քաղաքին պարզեւած
էին կրակոտ կեանք:

— Այդ կուսակցութիւններէն ո՞ր
մէկն էր ամէնէն կենսունակը...

— Աւելորդ հարցում: Անտարակոյս,
երբորդ քրոջը կուսակցութիւնը, այո-
թեքն ուսողաց եւ խմողաց կուսակցու-
թիւնը: Անոնց հաւաքոյթները, աւելի
նիւղը անոնց հաւաքոյթները եւ
հացկերոյթները չքեղ էին, չէն էին եւ
յաճախազէպ: Եւ ունէին բազմաթիւ ան-
զամներ, մանաւանդ համակիրներ: Միջ-
նակ քրոջը կուսակցութիւնը միջակ վի-
ճակ մը ունէր, իսկ երէց քրոջը կծծիներ-
ու կուսակցութիւնը վիճակ մը ունէր
ոգորմելի: Անոր կ'անգամակցէին միայն
պոստանները:

— Բայց, ի վերջոյ, ի՞նչ է կեանքին
նպատակը. խառնակութիւնը թէ խա-
ղաղութիւնը:

— Խաղաղութիւնը ցնորք է: Կեանքին
նպատակը ո՛չ ոք գիտէ: Ամէն մարդ նը-
պատակ մը նստիւած է կեանքին, Կեան-

քը աննպատակ է. բայց ունի իր օրէն-
քը, որ կոխէն է: Անշուշտ յանուն նպա-
տակի մը, քանի որ նպատակ չըլլալուն
համար, կան նպատակներ: Կոխը հա-
մայտարհային է, որ պիտի դառնայ
տիեզերական: Կոխը որ գոյութիւն ունի
ցամաքի վրայ, ծովերու եւ օդերու մէջ,
վաղը պիտի ընդարձակուի ու պիտի ծա-
ւալի նաեւ արբանեակներու եւ մոլորակ-
ներու մէջ:

— Ինչու՞ չծաւալի նաեւ արեւուն
մէջ...

— Արեւուն մէջ կոխ չի կրնար ըլ-
լալ: Կոտորները կ'այրին: Բայց կոխ
կրնայ ըլլալ արեւուն համար: Կարելի է
արեւը գրաւել, գերեվարել ու գործածել
ըստ մեր կամքին: Եւ տուրք գանձել օդ-
տըւողներէն, այսինքն բոլորէն: Ահա
կառավարական կուսակցութեան մը հա-
մար գերագոյն գործ մը: Արեւէն գրաւ-
ուել, ու արեւը գրաւել:

— Նոր արեւապաշտութիւն մը:

— Եթէ՞ հակառակը արեւապաշտու-
թեան: Ծոյց պիտի տրուի որ արեւը ա-
րարիչ ըլլալով հանգերձ, Աստուած չէ,
այլ գերագոյն գործիքը կենսաստու: Յա-
ռաջգիտութիւնը ամէն բան կուսակցու-
թիւններուն կը պարտի:

— Հօրեղբայր, քիչ առաջ խօսեցար՝
արեւելեան քաղաքի մը մէջ գտնուող ե-
րեք ընտանեկան կուսակցութիւններու
մասին: Փարիզահայութիւնը ունի շատ
աւելի ընտանեկան կուսակցութիւններ,
որոնք բուսած են պզտիկ գետնի մը վը-
րայ:

— Կ'երեւի բուսաբանական հրաշք
մըն է:

— Ո՛չ, հրաշք մը չէ, քանի որ Ծլած-
ները տարաշխարհիկ ու հազուադէպ
ծաղիկներ չեն, այլ սովորական սունկեր
թունաւոր: Ֆրանսական պարտաւ հողը,
հայկական հունաբը գործակցած են եւ
ծնունդ տուած տասնմէկ ընտանեկան
կուսակցութիւններու, միակ արուարձա-
նի մը մէջ, ուր հաստատուած են տա-
նըմէկ հայ ընտանիքներ: Եւ ամէն մէկ

ընտանիք, այսինքն կուսակցություն, ունի իրեն յատուկ օրիանքաստիճանը, Այդ կուսակցություններին ամեն մէկը գտնուած է, չի խօսիր միաներուն հետ։ Ասկէ զատ, ամեն մէկ կուսակցութիւն ինք իր մէջ պարտականուած է։

— Շատ չահեղան երեւոյթ է։ Կրնայի՞ր ըսել թէ այդ անընդօրինակելի ընտանիքները ինչ օրիանքաստիճաններ ունենին։

— Ահա՛. օրիանքաստիճան՝ յամբողջ թաց մուշումի, օրիանքաստիճան՝ արագ այլաներումի, օրիանքաստիճան՝ բացարձակ անտարբերութեան, օրիանքաստիճան՝ անբարոյականութեան, օրիանքաստիճան՝ ազոռաւայրի (ապստողներ ժառանգութեան), օրիանքաստիճան՝ ուրիշները եւ զիրար կողոպտելու, օրիանքաստիճան՝ զիկ-զիկ երթալու, օրիանքաստիճան՝ յետադիմութեան, օրիանքաստիճան՝ անդունդի, օրիանքաստիճան՝ խրդային, օրիանքաստիճան՝ դժոխախուզութեան, օրիանքաստիճան՝ հարստութեան, հիմնական հնարքներով, օրիանքաստիճան՝ որեւէ օրիանքաստիճան չունենալու, Ահա՛։

— Բայց եղաւ տասներեք օրիանքաստիճան, մինչդեռ զոյութիւն ունին ընդամենը տասներեք կուսակցութիւններ, ինչպէս ըսիր։

— Ընտանիքներ կան՝ որոնք իբրեւ կուսակցութիւն օրիանքաստիճան չունին։ Կան ալ որոնք ունին երկու-երեք օրիանքաստիճաններ։

— Եւ որոնք են այդ ընտանի կուսակցութիւններէն յաղթականները։

— Ամէնն ալ յաղթական են։ Պարտուողը Հայութիւնն է, ինչպէս միշտ։

— Շատ ճիշդ։

— Զի՞շտ. ըսողը դո՞ւն ես, հօրեղբայր։ Բերնէդ փախստական վիճակի մէջ դո՞ւրս փախաւ Հայտ ճիշդը...

— Այսինքն միաժամանակ սխալ ալ է։

— Բայց բան մը կրնո՞յ թէ՛ ճիշդ, թէ՛ սխալ ըլլալ։

— Ինչո՞ւ չէ...։ Զկա՞ն միթէ՛ մար-

դիկ՝ որոնք թէ՛ ծոյլ են, թէ՛ աշխատանէր։ Որոշ զործերու համար ծոյլ են, որոշ զործերու համար ալ աշխատանէր։ Զկա՞ն միթէ՛ մարդիկ՝ որոնք թէ՛ ազնիւ են, թէ՛ զեղեցիկ։ Օրինակ. զլուսով ազնիւ, իսկ մարմնով զեղեցիկ։ Զկա՞ն տակաւին մարդիկ, որոնք թէ՛ ախմար են, թէ՛ խելացի։ Զկա՞ն, ըսէ՛, չկա՞ն մարդիկ ալ որոնք թէ՛ առողջ են, թէ՛ հիւանդ։ Որոշ չափով այսպէս, որոշ չափով ալ այնպէս։ Ա՛յ, ես ինքս։ Քաջառողջ մարդ եմ ամէն կողմերովս, միայն անիծեալ լիարգս է որ դաւաճանած է առողջութեանս դէմ։ Ուրեմն հիւանդ առողջ մըն եմ կամ առողջ հիւանդ մը։ Ուրեմն ինչո՞ւ բան մը թէ՛ ճիշդ, թէ՛ սխալ ըլլայ։

— Հիւանդ մը պարտի երթալ բժշկի։

— Զեմ երթալ բժշկի։ Պիտի հարցունես պատճառը։ Ըսեմ. չեմ սիրեր բժշկիին ճշմարտութիւնը։ Զեմ սիրեր, բնականաբար, իր սխալն ալ։ Զեմ սիրեր նաեւ իր սուտը, նմանապէս կ'ատեմ հաւատակորդին ճշմարտութիւնն ալ, որ խալն ալ, սուտն ալ։ Դուն աս Փարիզահայերդ տար բժշկի։ Անոնք զլուսով հիւանդ են։

— Իսկ քու զլուսիդ, հօրեղբայր...

— Ես վերնատունով առողջ խելի մըն եմ։

— Իմ ըմբռնելու կարողութիւնս կանգ կ'առնէ այստեղ։

— Ուրեմն այլեւս այս մասին խօսիլը աւելորդ է։ Դառնանք տասներեքի։ Ի՞նչ է պատճառը որ այդ տասներեք անկըրկենի հայ ընտանիքները չեն կրնար իրարու հետ հաշտ ապրիլ։

— Պատճառը պարզապէս հայ ըլլալն է։ Իրենց հայութիւնն է պատճառը՝ իրենց անջատողական շարժումներուն, իւր իրենց անջատողական շարժումներն են պատճառները իրենց հեռանալուն հայութենէ։ Զե՞ս գիտեր որ հայը հայուն հետ չի կրնար ապրիլ։ Ամէն մէկ հայ ունի չեղտուած անհատականութիւն, առկա-

ւին կարկառուն նախանձ, մոլեռանդութիւն, բռնակալութիւն, ստրկութիւն, կարծեցեալ հմտութիւն: Հայը հայուն հետ չի կրնար ապրիլ: Բայց հայը հայուն հետ կը մեռնի, զիւցաղնարար մեռացընելով, ու մեռնելով հերոսաբար:

— Ուրեմն կեցցե՛նք Պէյրուսիականքը...

— Կեցցե՛նք Փարիզականքը, որովհետեւ հակառակ ամէն բանի, չենք զաւցած մինչեւ ծայրը, մինչեւ եղբայրասուպանութիւն:

— Բայց դուք, Փարիզականքը, եղբայր չունիք, որպէսզի ըլլաք եղբայրասուպան:

— Ուրեմն մեր եղբայրասուպաններ չըլլալուն պատճառը՝ մեր իրարու հետ եղբայր չըլլալն է: Զեղի կը մնայ զաղրել իրարու եղբայր ըլլալէ:

— Բայց եղբայրութիւն քարոզելիք, մեր եղբայրութիւնը աւելի ամրապնդելով:

— Ի՛նչ ահաւոր սխալ մը գործեցի... Զարալար մեղանշեցի...

— Ինչո՞ւ, այդ տասնութէկ ընտանեկան կուսակցութիւններուն համար դատախոսութիւն մը չես սարքած...

— Սատանան անպամ զանոնք չի կըրնար բերել քով թովի:

— Ընչէ՛ք է. փոքրիկ գործերու հեղինակը սատանան է: Մենք Պէյրութի մէջ, շունինք ո՛չ մանրանկար, ոչ ալ ծաղրանքկար կուսակցութիւններ: Մեր կուսակցութիւնները ընտանեկան չեն, այլ ընկերական են: Մեր կուսակցութիւնները կամ մայր են, կամ մեծ են, կամ մօրաքոյր են: Բազմանգամ են, ու անոնց հեղինակը՝ հրեղէն հրեշտակն է:

— Եւ դուք հրեշտակին ձեռքէն խլած էք սուրը, նախ հրեշտակը ջարդելով, ու ապա, սուրը իրարմէ խլելով և գործածելով...

— Պէյրուսիականքինը պատիւ ունի: Պէյրուսիականքինը սատանաներ սատակեցուցած է, բայց երբեք չէ եղած հրեշտակասպան:

Հօրեղբօր հրաքիային սրտմտութեամբ վերջացաւ այս վտանգաւոր ասուխտը:

Ջոհնեցաւ միայն սկահակ մը տուրճի, երբ հօրեղբայրը բռնեցք մը իջեցուց սեղանին:

ԱՍՈՒԼԻՄ՝ ՊԷՅՐՈՒԹԻ ՈՒՆԵՑԱԾՆԵՐՈՒՆ ԵՒ ԶՈՒՆԵՑԱԾՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Օր մը, Արմէն ըսաւ հօրեղբօրը.

— Սիրելի հօրեղբայրս, միշտ ներդաժիտ գտնուելով բաց սիրտ արատայտութիւններու համար, խոստովանէ՞ թէ ծնած ես ընդդիմախօսելու համար:

— Ըսածիդ համամտութիւն կը յայտնեմ, եթէ զընդդիմախօսութիւն քառին տեղ՝ գործածես ճշմարտախօսութիւնը:

— Համաժիտ գտնուած ատենդ անգամ կ'ընդդիմախօսես:

— Երանդը եղանակը կը փոխէ: Երեսած եմ ճշմարտախօսութեան համար: Կոչումս է այդ:

— Կոչումդ վերածած ես մոլութեան, որով ծնած ես ճամբէն:

— Ըճմարտախօսութիւնը սրբազան մոլութիւն մըն է: Երեսած եմ այդպէս, ու կ'ապրիմ այսպէս: Իսկ դուն, սիրելի եղբօրորդիս, չե՛ս կարծեր որ կը մեռնիս՝ եթէ չընդդիմախօսես:

— Ուրեմն ես ալ կոչումը ունիմ ճշմարտախօսութեան:

— Մոռնալու չենք որ կրկնապէս նման ենք իրարու. ըլլալով թէ՛ ազգակից, թէ՛ ազգական: Դժբախտութիւնը այն է որ ամէն հայ ի՛ր ճշմարտութիւնը ունի:

— Ըճմարտութիւնը մէկ է, հօրեղբայր: Հայերուն համար, ճշմարտութիւնը եղած է Կաղանդ Պապա մը, ինք անդոյ, բայց իր գերը կատարողները բազմաթիւ ու տարբեր իրարմէ:

— Դուն խօսէ Պէյրութի մասին: Նոր նիւթ մը ունի՞ս... Բայց չունենաս կ'ըլլա՞յ...

— Պէյրութը կը պարծենայ իր եւրո-

ստանալան արդիական շենքերով, ամերիկեան կառքերով ու ծխիկներով, իտալական սկզզներով, զորքերով ու մորթերով, ֆրանսական կաշիներով ու կերպասներով, անգլիական լեզուով, ասոր կրթարաններով եւ համալսարաններով, ակովտիական ուխտերով, սպանիացի երկօտկ պարողներով, ռուսական բանջարեղներով, Հայկի ԲՆԱՍԱՍՈՎ, եղիպտական Գուրով, Զահլի օղիով եւ Շթոբայի մածուկով, Պէրուի սեպական արտադրութիւն ըլլալով ի՞նչ ունի...

— Պէրուի մ'չ ազարակ է, ոչ ալ գիւղակ: Պէրուի մեծ քաղաք է, ապաքան մեծամեծ է: Կոչուած է ըլլալ մայրաքաղաք մայրաքաղաք: Ի՞նչ որ կայ այնտեղի մէջ, իրեն կը պատկանի:

— Ըսածներդ փրփրած ջուրեր են: Զուր ըսի ալ յիշեցի ձուկերը: Պէրուի ծովը ձուկ անգամ չունի: Ի՞նչ եղած են իր ձուկերը...

— Մեծ ձուկերը ցամաք ելած, լեզու ելած, ու ձկնորս եղած են...

— Իսկ պզտիկ ձուկերը:

— Փախած են խուճապահար:

— Ուրիշ վարձանայի պարտեզ մըն ալ նկատեցի: Պէրուի մահաշուքի մէջ չկան Պէրուի թիւեր: Պէրուի մահաշուքի մէջ կը բաղկանայ Կիլիկիաներէ, Հալկապոլիսներէ ու հարաւէն եկած միւս մը չեմ տեսներէ:

— Աս ալ իր մեծութեան ապացոյցներէն մէկն է: Նիւ Եօքի մէջ քանի՞ մարդ կը գտնեն Փարիզի...

— Ինչո՞ւ. այն տեղերը ծնունդներ չկա՞ն...

— Կրնան ըլլալ: Բայց տեղացիները առաւելապէս մասնագէտ են վիժումի: Դեռ անցեալները, դուն կ'ըսէիր թէ ամբողջ Մարտիի մէջ, հազիւ հարիւր զտարին Ծրանասցի կարելի է գտնել: Իսկ այդ հարիւր Ծրանասցիներուն մէջ թիւի Մարտիի մէջ ըլլալով՝ կարելի է գտնել միայն երկու հոգի: Մարտիուր ե Օլիվը, այսինքն երեւակայական տարւոներ:

— Նորէն ասկէն ելար: Բայց ունի՞մ ուրիշ նկատողութիւն մըն ալ: Այստեղ, ամէն ասպարէզի մէջ, աւատապետութիւններ կան: Պէրուի թնակչութիւնը ընդհանրապէս, իսկ Պէրուի հայութիւնը մասնաւորապէս, կը կառավարուին աւատապետական կարգերով:

— Այնտեղի վրայ ո՞րք այդպէս չէ: Ամենայն տեղ կան աւատապետութիւններ, առաւել կամ նուազ զգալի: Աւատապետութիւնը յաւիտենական է: Այնտեղի վրայ ոչինչ կը կորսուի, ոչինչ կը ջնջուի: Աւատապետութիւնը բացառութիւն չէ:

— Ուրեմն պարապ տեղը եղած են պայքարներ, արեւահոսութիւններ, յեղափոխութիւններ...

— Բոլորովին պարապ տեղը չեն եղած: Աւատապետութիւնները զարձած են հիմա աննկատելի:

— Ուրեմն Պէրուի մէջ պէտք ունի է, այսինքն աւատապետներով: Զօրեղութեամբ, անդրադարձած եմ որ ոչ մէկ լեզուի մէջ, պետքով այնքան բառ կայ, որքան հայերէնի մէջ: Հաւաքած ու ծոցատներին մէջ նշանակած եմ այդ բառերը խառնիխառն: Կարդա՞մ...

— Կարդա՞մ, Կարդա՞մն աղուր բա՞ն կայ: Եւ միշտ կարդալով քնացայ, մանաւանդ կարդալով արթնցայ: Զմուռայ կարդալ նաեւ կեանք գիրքը: Կարդա՞մ:

— Ահաւասիկ պետերու երկար կառաւարդութեամբ, աստուածապետ, հայրապետ, հովուապետ, կրօնապետ, եպիսկոպոսապետ, քահանայապետ, վարդապետ, աղագապետ, լուսարարապետ, դպրոցապետ, դիւանապետ, գանձապետ, կայապետապետ, տաննապետ, նահապետ, աւատապետ, նախարարապետ, վարչապետ, ժողովրդապետ, ազնուապետ, փառաբանապետ, կուսակցապետ, արարողապետ, սպարապետ, հազարապետ, հարիւրապետ, յիսնապետ, տասնապետ, պահապետ, դասապետ, ցեղապետ, վարժապետ, ուսուցչապետ, ուսումնապետ, խմբապետ, գլխապետ, սեկրետարապետ,

սրճարանային, ճաշարանային, պան-
դոկային, մատենատնային, դրախտ-
բանային, ճարտարային, վիրաբու-
ժային, բժշկական, խմբավարային,
զրաշարային, գերադասային, յուշա-
բարային, գերձակային, կօշկակարա-
յին, զործային, վարային, պահեստա-
յին, մայրային, մառանային, պըն-
դային, վաշտային, կարային, կա-
ռային, երաժշտային, նոսրային,
նաւային, տոնային, աւազակային,
սենեկային, սնդանային, տակաւա-
յին, ուտիկանային, մաքսային, բա-
րապանային, բանտային, հրտային,
խոհարարային, դարբնոցային, քըր-
մային, ֆաղաքային, թաղային, նա-
հանգային, զաւառային, գիւղային,
պարային, իշխանային, հրեշտակա-
յին, սատանայային, դժոխային, տի-
րային, կարաւանային, սկսուտային,
սխտային, լրտեսային, դահճային,
ներքինային: Ահաւասիկ ֆանի մը հաս

ալ նորակերտ բառերու:— անառակա-
յին, խայտառակային, խաչագողա-
յին: Ձմռանը որ պետիւն հոմանիշ են
նաեւ իշխանը, տէրը, գլուխը, առաջ-
նորդը, ռաշվիրան, վարողը: Կարգա-
ցած ցանկն ամբողջական չէ: Հիմա, ը-
սէ՛, հօբեղբայր, թէ ի՞նչ ցոյց կուտայ
պետերու այս բազմութիւնը, ճիշդ 93
տեսակ եւ ամէն մէկ տեսակէն ֆանի մը
հաս:

— Այդ պետերէն ոմանց առջեւ կը
խոնարհիմ յարգանքով: Միւսները ցոյց
կու տան պետերուն անպէտ ըլլալը: Յոյց
կու տան նաեւ իրական, տիրական պետի
մը բացակայութիւնը, տակաւին՝ զոյու-
թիւնը հայկական հիւանդութեան մը, որ
կը կոչուի պետախտ:

— Մեր մէջ, առանց պետի մնացած
են դրողները, նկարիչները, հիւանդները
ու մեռելները...

— Պատճառն այն է որ աս ըսածներդ
անիշխանականներ են կամայաւանդաւ:

Ն. Պ.

ԱՇՈՒՂԱԿԱՆ

Օրերուս մէջ դուն սոսն ըլլաս,
Ու երգերուս մէջ ձօմ ըլլաս,
Ամէն գիշեր խնջոյքներուն,
Նոր հաքսի պէս դուն հոմ ըլլաս:

Աչքերուս մէջ դուն քոց ըլլաս,
Ու գաղտնիքի պէս ցոց ըլլաս,
Որ սրտիս մէջ երբոր բացուի,
Կախարդանքով դուն հոմ ըլլաս:

Միրոյս համար դուն բոյն ըլլաս,
Տառապանքիս ալ տաղ ըլլաս,
Դաւուկ տշման դեռ չթօշնոզ
Քարման վարդի դուն գոյն ըլլաս:

ՇԱՀՊԱՆ

Ա Ռ Ա Կ

ՀԱԿԱՏԱԳԻՐԸ...

Սանն ապարի՛ մաքրամաքուք,
 Սանն ապարի՛ փայլուն, մաքունք,
 Եւ անհրապոյր թիթեղն ազրի՛
 Խոհանոցին մէջ իրարու
 Հանդիպեցան օր մը տօնի:
 – Ի՞նչ դատրն խաղ ճակատագրի,
 Ամսնն աչքի բոսւ տըխուր.
 Միեւնոյն տան ըսպասարկու
 Մենք ընկերմե՛ր ըլլամք շրկու
 Բայց փայփայենք քեզ շարունակ,
 Տանին սեղան միշտ կոչումի,
 Զիս՝ խո՛րթ զաւակ,
 Բըռնած յանկէս՝ անփառունակ,
 (Ոչ իսկ ձեռքով մը գուրգուրատ,
 Գուրգուր մ՛աղտո՛տ)
 Շըպրտեն դո՛ւրս, դնեն փողոց...
 Ո՛չ, արդար չէ սիրտը մարդոց:
 – Զըմեմք խօսքը արդարութեան,
 Բայց պատճառ մը կա՛յ անպայման.
 Ինչո՞ւ ընեն քեզի յարգանք,
 Թիթե՛ղ քարակ,
 Զես դիմանար կըրակին քարկ՝
 Կ՛ըլլաս ծակ–ծակ,
 Զուրեմ գուլալ՝ կը բռնես ժանգ.
 Ազը կըսուսես ընդունակ,
 Ու կը տաքութեա փողոց շիտակ:

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

Բ. ԿՈԱՆՆԵԱՆ

Հանրապետություն **ԿԱՆԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ**

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

Հետևի համար երանութիւն էր իր ուսուցիչը վերագտնելը։
Նախ, անոր կապուած էին իր դպրոցական քաղցր տարիները, ապա, բարեբախտութիւնը ունէր հիմա՝ շարունակելու իր ուսումը։ Աղամեան հմտութեան զանձարան մըն էր։ Կը նմանէր Հելլադայի փիլիսոփաներուն։ Կը սորվեցնէր սեղաններու շուրջ, հաւաքոյթներու մէջ, դրոյցներու եւ պտոյտներու ընթացքին։

Ոչ միայն խորիմաց հմուտ մըն էր, այլեւ ոգի, որ կը ներշնչէր, կը կախարդէր, կը մղէր։ Կը զգար ու կ'ապրէր իր ըսածը։ Դեռ դասարանի օրերէն, կը յիշէր՝ թէ ինչպէս մէկէն արիւնը կը խուժէր երեսը եւ աչքերը կը լեցունէին երբ կ'ըսէր — Հայոց լեզու, Հայոց մշակոյթ։

Օր մը, Աղամեան աչքէ անցուց իր գրական փորձերը եւ, ի մէծ զարմանք եւ երանութիւն իրեն, հաւնեցաւ։

— Թող մօտս մի քանի օր, — ըսաւ Աղամեան, ու գրպանը դրաւ Թըզթիկները։

Նոյն շաբաթ օր, երբ աչքէ կ'անցընէր «Յուսարեքի գրական շաբաթօրեակը, չհաւատաց աչքերուն։ Երկրորդ էջին վրայ, կը թրթռար իր քերթուածը։ Աչքերուն չհաւատաց։ Քիչ մը սրբադուած, ստորագրուած՝ Հետն Սարունի։ Մածկանուն, զոր ուսուցիչը յղացած էր իրեն հարաւ։

Ուրեքը գետնէն կարուած էին։ Ամէն էակ կը յիշէ իր առաջին սէրը, որովհետեւ երանագոյնը այդ է։ Առաջին ու նախնական փորձառութիւնը։ Անկէ ետք, կրկնութիւն է միայն։

Առաջին քերթուածին հրատարակւիլը նման է առաջին սիրոյն։ Ուրեքը կարուած էին հողէն։

Ինքզինք ասուաւ. կարդալու :

Կը կարդար ինչ որ ուսուցիչը կը թելադրէր: Եւ կը լսէր, կը լսէր: Սպունակի մը պէս կը ծծէր խօսքերն ու զաղափարները:

Յուզումը կը յորդէր: Եւ կը դրէր: Էութիւնը միշտ խռով էր եւ քիչ անգամ կը խաղաղէր:

Պաշտօնին մեջ հետադարձ լույս մը բացուած էր: Կարծես դառած էր իր ուղղութիւնը: Այսօրին անգամ իր կենսաշին մէջ, կը հասնէր երջանկութեան: Այդ էր ուղին:— գրել: Արտայայտել իր հոգին: Ըսել խորունկ, ցեցող բաներ:

Երեկոները յաճախ կ'երթար իր ուսուցչին սենյակը: Համեստ, սպիտակ կարմուխով տան մը տանիքի սենյակը: Յրեկները, քովի սենյակներուն մէջ եպիստոլիներ լուացք կ'ընէին: Բայց դիւրեւերը խաղաղութիւն կը տիրէր: Ուսուցչիւր արդէն միայն դիւերը տուն կը գառնար:

Այս սեփական միջոցներով մեծ ունեւոր, Իսահանյան ոչ ոք պիտի կրեար երեւակայան, թէ այդ խեղճ ու կրակ տանիքի սեփական նման կերպարանադրութեան կրնար ենթարկուիլ:

Գորգեր, գեոինը եւ պատերոմ, արեւելեան խորհրդանշական, զու-
նադեղ միջավայր մը իր ստեղծելին: Նկարներու չաբան մը պատերոմ: Դա-
սական նկարներու զուեւոր վերադարձութիւններ, պարզ շրջանակներու
մէջ: Այլաբարձիք, Սպարսն, Ռէյպրանտ: Հայկական տարրերնակ, Հնա-
սենի երեղեցիներ: Փնայլներ, մասաւրականներ, գրողներ: Սեղանի վը-
րայ պարսկական ծաղկաման: Եւ զբեր, զգողներու մէջ, սեղա-
նին, սրահին, գետնի վրայ: Պատուանի մէջ մարդիկ թաղարներ:

Երբ ներս մտնէիր, անպայման կարգալու վրայ էր: Լուսամոփոփ ծօտ նստած, կը սուզուէր դիրքերու մէջ: Դեղին լոյսը կը փայլէր լայն ճակատին եւ Թաւ, եւ ալ զոգահուն, պրտառած յոնքերուն մէջ կը կորսուէր: Անկերը ռուփ մէջ կը Թաղուէին, խորտիկան զգացուող մը: Այն ձեռքին յոցանաւոր ալային դարձ կ'ըլլար, երբ կը կարգէր: Մտանքներ կ'ուր եւ կարճ էին: Արհեստաւորի մը ձեռքերը ունէր: Եւ կը սրէր ձեռային աշխատանքները: Տարիներ վերջ, Լիբանանի լեռներուն վրայ, գիւղի մը մէջ, էր իսկ ձեռքերով չինջէր իր տունը եւ առաւօտ մըն ալ մեռած զանուեցաւ իր տան մէջ: Տարիներ վերջ:

Երեսին յրժարիկի հնաբեր կային։ Մորթը անհարթ էր, հողմերէն
 եւ արեւէն ծծեռուած պտուղի նման։ Մնտին՝ փոքր, դիտնականի մօրութե
 ժը, որուն մէկ ճերմակ թեւեր էին ինկեր։

Երեկոյ մը, Լեւոն դժգոհ չբերած ժամանակ, խոշոր հատոր մը պրտաւ, որ լեցուն էր հայկական հին եկեղեցիներու յատկապէտներով ու նշկարներով: Գիւտ մը ըլլած էր: Աւերած տարօրինակ հուրով մը կը փայլէին: Թորածանձանի դիքքն էր:

Տուն տարաւ, վառեց լամպը, մխրճեցաւ գիրքին մէջ Կորսուեցաւ Կախարդական աշխարհ մը փոխադրուած էր։ Ուզած էր ճարտարապետական ըլլալ, բայց միայն ճարտարապետութիւնը չէր, որ զինք կր կախարդէր։

Այս պահիցսկի, մակերեսները, քանդակները, ներքին կամարները ~ ծանօթ էին իրեն, հարազատ էին: Ո՛ւր տեսած էր:

Կէս դէկտրը անցաւ: Աբաղաղ մը խօսեցաւ: Յուշուած, գերադպրո՞ւ
մի՞նակ մը ունէր: Կոպկերը կը ծանրանային, աչքերը կարմրեր էին: Դեռ կը
կարդար, չէր կրնար ձեռքադառնուիլ:

Ինչ յիմար կեանք մըն էր ապրելու ժամանակը յիմարօրէն վատնելու էր: Ինչ որ հոն էր, մօտը, զայն փնտռէր հեռուները, օտար անդամստաններու մէջ:

«Հայ հոգին իր բարձրագոյն արտայայտութեան հասել է հայ բանաստեղծութեան եւ ճարտարապետութեան մէջ...»

Ի հարկէ, ի հարկէ, իրաւունք ունէր ուսուցիչը, միշտ իրաւունք ունէր: Սատանայի մը պէս ամենագէտ էր այդ մարդը, ամէն ինչ կը զգար, ամէն ինչ կը թափանցէր:

Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին առինքներ էր միշտ զինք: Այդ խորանարդային զանգուածը, սլացիկ գմբէթը, ժուժկալ քանդակները, մանաւանդ ներքին կիսամութ, միստիք միջավայրը: Այդ խաչածեւ, սլացող կամարները, ընդհանուր միութիւնը: Ամէն ինչ խոյանք էր, վերացում, ներհայեցողութիւն: Կշռոյթ:

Ուշած էր գիտնալ տեւիլին, վերլուծել, բայց միջոցները պակսեր էին: Եկեղեցիին որմնակարները եւս զինք չփոխէր էին: Ձէր կրցեր ըմբռնել այդ բարբարոս, դաժան դէմքերը: Արքայիկ նկարչութեան մասին զաղափար իսկ չուէր: Հետագային, երբ զարդացաւ, ըմբռնեց, որ Խտաւացի նկարիչը չէր կրցեր իր լատինականութիւնը մոռնալ: Հայկական որմնակարչութեան եւ մանրանկարչութեան զգացումը տարբեր էր: Հոպին ուրիշ էր, բոլորովին ուրիշ: Տարբեր էին ոճը եւ գոյները: Մեր սուրբերը, Աստուածածինը, Յիսուսը, աւելի մարդկային են: Քաղցութիւն մը եւ թախծութիւն մը կայ անոնց աչքերուն: Միտէ ու ոսկորէ կերտուած են, այս աշխարհին են, կ'ապրին ու կը զգան: Երբեմն, մինչեւ իսկ, տկարութեան, փորձութեան դող մը ունին: Ոչ մարմնական մեղքի, այլ հոգեկան փորձութիւններու:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին զմայլելի կառոյց մըն էր, բայց թերի մը ունէր, զոր Լեւոն նկատեր էր շատոնց: Դրացի բնակարանները կը խաթարէին եկեղեցւոյ սպաւորութիւնը: Ոչ մէկ առնչութիւն կառուցողական, ընդհակառակն, հիմնովին տարբեր, աններդաշնակ, ներհակ: Հայկական եկեղեցին իր միջավայրին մէջ չէր: Բերուած էր հեռու տեղէ, իր արմատներէն պոկուած եւ զետեղուած օտար վայր մը: Վստահ էր, որ եկեղեցւոյ ապաւորութիւնը մեծապէս պիտի շահէր, եթէ աւելի ընդարձակ զետեղի մը վրայ եւ պարտէզի խորը կանգնած ըլլար:

Հիմա որ կը դիտէր այս նկարները, կը հաստատուէր իր դիտողութեան մէջ: Ընդհանրապէս կառոյցը բնական ու արամարանական ծընունդն է իր աշխարհազրական միջավայրին:

Սրբ, հետագային, աւելի խորը ուսումնասիրեց հայկական ճարտարապետութիւնը, մանաւանդ, երբ աւելի ուշ այցելեց Վերին Եգիպտոսի տաճարները, լիովին ըմբռնեց իր զգացածը:

— Մի նայի՛ր, նայի՛ր, — ըսաւ Աղամեան:

Նստեր էին տանիքի սենեակը, ժամերէ ի վեր կը խօսակցէին: Մոտեցեր էին ժամը, որ կէս գիշերը անց էր:

— Ձկարծես, որ հայ ճարտարապետը միամիտ է... որ միայն զեղեցկութեան եւ իր զգացումներին կը հետեւի: Նա անհունօրէն հմուտ է եւ գիտուն... Ոչ մի պատահմանք, ոչ մի արկած... ամէն ինչ խորապէս ուսումնասիրուել է, գիտական տարազների վրայ կ'ըմբռնէ... Ոչ մի ժխտաբանութիւն, եւ ոտկայն, հրաշքն էլ հող է... Զարմանալի է, ուղղակի զարմանա-

լի... Նա կարողանում է տիրապետել նիւթին եւ օրէնքներին... Նրանք կտտարում են իր հրամանը, հպատակում իր կամքին... Նրա գերագոյն ձեռնարկը կառուցողական է...

Մէկէն կեցաւ, կարծես մոռցաւ ըսելիքը, սուղուեցաւ խոր մտածումի մէջ: Նայում էր մեկնեցաւ, հեռացաւ, ծփաց: Յուզումը խուսեց զէմքին, աչքերը կարմրեցան ու թացցան: Լոյս մը փայլատակեց աջ աչքին:

Հոգի պատուհանէն ներս յաստիկի բոյր մը նետեց: Լուսթիւնը բարձրացաւ, տիրապետեց տիեզերքին:

— Տարօրինակ է, Լեւոն ջան, տարօրինակ... զփուար է հասկանալ... Ուզում եմ ասել, այն ինչ որ երկար փնտրում էի, հիմա, մէկէն յայտնուեց... Գիտական հմտութիւնը, զեղազիտական զգացումը, կառուցողական հանճարը բաւական չեն բացատրելու հայկական ճարտարապետական կոթողները... Ետին, խորը, աւելի մի մեծ մղում կայ, ասեմ՝ ոգեկան, ոգեզէն, չգիտեմ... Զգում եմ, բայց չեմ կարողանում բացատրել... Քիչ առաջ, մի պահ, կարծեցի... Մի բան որոշ է, որ հաւատքը մեծ դեր է խաղում... Հաւատք ասելով, չհասկանաւ սովորական դարձած կրօնա-ծիսաւորական հաւատքը, այլ առաջին քրիստոնէաների հաւատքը, անպարտելի ուժը, որ մահուան նուաճում էր, լեռներին շարժում... Սա մի անհասկանալի ուժ է, տպւելու եւ տեւելու մի անբռնաբարելի պոռթկում, որ ընդդիմանում է ժամանակին, տարերքին, մահուան... Այլապէս կարելի չէ ըմբռնել...

Կրկին լռեց, ինչպէս երազանքի մէջ: Դժգոհ արտայայտութիւն մը տարածուեցաւ զէմքին:

Յլան տանիք: Եղիպտական գիւղերը պարպեր էր թովչանքը: Մտաւկայ արմաւենի մը կ'օրօրուէր ծովին մէջ, երկնքէն հաղիւ պանաղանուլով: Ոչ մէկ տեղ երկինքը այնքան յստակ է եւ աստղերն այնքան անհամար:

«Գիշերն ամոյշ է, գիշերն հեշտագին,
Հաշիշով օծում ու բալասամով...»

— Հաշիշով օծում ու բալասամով... ամբողջովին արեւելք է. Լսիր... Յաստիկին բոյրը լեցուց մթնոլորտը: Կէս գիշերէն վերջ, ծաղիկները արեւելի հեշտանքով կը բուրեն:

— Լսիր... լռութեան ձայնը... այստեղ լռութիւնն աւելի խօսում է... Դարաւոր Եղիպտոսն է... Ամենյան ինչ լեցումն է ոգիներով եւ աստուածներով... Դու պէտք է Այրարատեան դաշտում քայլես... Մարդիկ բոլոր ննջում են հիմա... Մի՞թէ... Գիտակցութիւնը ննջում է, կոպերը փակ են, բայց ենթագիտակցականն աւելի ազատ է, ձերբազատուած բանականութեան հակակշիռից եւ տեսողութեան պատրանքներից... Ենթագիտակցականը երբեք չի քնում... Կոպերը փակ են, բայց աչքերը նայում են աշխարհների վրայ... Եղիպտոսը ճանաչում էր... Եղիպտացին եւս չի ապրել ներկայի համար, նա աշխատել է, ստեղծել է, զուարճացել ու տրեւել միշտ յաւերժը նկատի ունենալով... Իր բոլոր ստեղծագործութիւնները ժամանակին յաղթահարելու եւ տեւելու ձգտումին են միտում... Հայր մի քիչ տարբեր է...

— Ի՞նչ ըսել կ'ուզէք:

Ուռուցիկը լուռ մնաց:

Յաստիկին բոյրը կը յամենար: Արմաւենին մեղմօրէն հեւաց: Աստղերը վար էին իջեր, տանիքի պատերուն կը դալչէին:

Հեռուներէն, լուսնան ծովը կը թաւալէր ու կը փշրէր հեշտօրէն աանիքի ափերուն:

— Մի ուրիշ տոթիւ, — Հծծեց ուսուցիչը, — մի ուրիշ տոթիւ... Դէ, բարի գիշեր...

Լեւոն կը բնակէր քանի մը փողոց անդին, ուրիշ տանիքի մը վրայ: Փողոցները ամայի էին: Տեղ տեղ արար խանութպաններ կամ չըլիկ վաճառորդներ քնացեր էին՝ կծկուած իրարու մօտ: Անտէր եւ անտուն աղ- ջրնակներ ու տղաք, պատերու տակ կը ննջէին: Զգոյշ պէտք էր ըլլալ՝ ա- նոնց վրայ չկոխելու: Արեւելքը, որ միշտ հարուստ է եւ միշտ աղքատ: Պալատներ ու խրճիթներ, մարդարէներ, մուրացիկներ եւ ստահակներ:

Լեւոն չէր ուզեր խուցը բարձրանալ: Առոյժ էր: Ուսուցիչը գիտէր էութիւնները տակն ու վրայ բնելու արուեստը: Կը կասկածէր, որ յաճախ գիտակցաբար կ'ընէր: Սաղայէլ մըն էր:

Վերջին պահուն, մէկէն չըլեր էր պատկերը: Շփոթ մը ստեղծուել էր Լեւոնի մտքին մէջ: Հայաստան եւ Արեւելք: Երեւութեամբ որեւէ կապ չէր տեսներ: Ինք միշտ կառչած էր Հայաստան հելլենական մտքի ջահա- կիրը վարկածին վրայ: Միտքը կը ջոնար երկու ուղղութեամբ ընթանալ միաժամանակ, բան մը՝ որ անհնար էր եւ ջղային վիճակ մը կը ստեղծէր:

Վստահ չէր, որ վերջին պահուն, ուսուցիչը, գիտակցաբար եւ դի- տումնաւոր կերպով չէր յարուցած երկուութիւնը:

Մէկէն յիշեց Թորամանեանի խօսքը, զոր կարդացած ժամանակ իր ուշադրութիւնը գրաւած իսկ չէր:—

Հայկական ճարտարապետութիւնը արեւելեան է...

Ահա թէ ինչ:

Մարտիկ Աղան պետերուն արդուզարդին լծուած էր: Անուշահոտ իւ- ղերով կ'օծէր եւ, մատնիքը թուրտնէլէ ետք, սուր ծայրերը կ'ոտրէր, հա- կ'ոտրէր, մինչեւ որ ցից մը կ'այնկին այտերուն վրայ, աչքերուն գիմաց:

Մարտիկ Աղան մեծ խնամք կը տանէր իր պետերուն, զանոնք համա- բելով իր աննականութեան ամենացայտուն ապացոյցը: Արու կենդանիներ կոտոր ունին, Մարտիկ Աղան ալ պետերովը կը հպարտանար: Ամէն օր խա- նութը երկար պահեր կը տրամադրէր իր աննականութեան ապացոյցը հա- մարուող բուսականութեան: Գլխուն՝ մազի հետք չկար, ոչ ալ մարմնին վրայ: Բնութիւնը իր ամբողջ ճիշդն ու բեղմնաւորութիւնը կեդրոնացուցած էր այդ պետերուն վրայ: Մարդուկը իրաւունք ունէր այնքան գուրգուրա- լու: Փորձած էր մօրուք մըն ալ բուսցնել, մտաւորականի եւ հանրային մարդու հովեր առնելու համար, բայց ջրաբաշխական եւ բեղմնաւորման իր բոլոր ճիշդը ապարդիւն էին անցեր: Բնութիւնը անողոք էր եղած:

Այս առաւօտ իր պետերով խաղալը՝ ջղայնութեան արդիւնք էր: Յայտնի էր, որ նախորդ պիւնրուայ հոգաբարձական ժողովին, անհաճոյ գէպք մը պատահած էր: Առհասարակ, ժողովներու յաջորդ առաւօտը ջր- զային կ'ըլլար: Նախնական էակ մըն էր եւ գործին մէջ որքան խորամանկ ու արամբանող, անձնական հարցերու մէջ ծայր աստիճան զգացական էր:

Գ'ոտրէր պետը, հա՛ կ'ոտրէր:

— Զանք, ըլլալիք պա՛ն է... այս հերիքները խելք չունին ինչ է... Տեսնալու պան էր... Ի վերջոյ, ասանապետը հսա էմ թէ չէ... Յարգանք

ըստազը չէ մնասեր... ոտքը, գլխը յայտնի չէ... Մեր ժամանակ պաշտօն էր...

Դարձաւ Լեւոնին, կռիւ կը փնտռէր.

– Ո՛ւր էս, վո՛ր դա՛կը մա՛եր էս... Հոս եկուր, դժ...

– Այս սուրճը սաւառե՞լ է...

– Այո, Մարտիկ էֆէնտի, այդպէս ալ ըսի:

– Ըսի՞ր մի... մէյ մը համին նայէ... էղազովը շաքար է...

– Տանիմ, նորը թող եփէ:

– Հա՛, տա՛ր... բայտ դուն շիտակ պէտք է հակըսներ... խելքեր-նիդ գլուխնիդ չէ որ... Դուն ան ըսէ, այդ վարուժան... մականունը ի՞նչ էր... Դուն գիտես, ազգային գարտը օգնական ուսուցիչ է...

– Վարուժան Զօրեմ՞նք:

– Հա՛, հա՛, ասիկա... Դու կը ճանչնա՞ս դի՛նքը...

– Ի հարկէ, ընկերս է, ձեզի ըսած էի...

– Հա՛, հա՛... կէսիւր, մոտսիւր սուրճը հիմա... դուն ան ըսէ... Նըստէ, օղլում, նստէ հոս...

Լեւոն հասկցաւ, որ մարդուկը կարեւոր ըսելիք ունէր, նման պատիւ դեռ ընծայած չէր իրեն Աղան:

– Ինտո՛ր էս, օղլում, դո՛ւ էս գորզէդ... Քեզի համար մէջ ապա-դայ հոս, էսս քեզի զուկիս պէս կը նայիմ, զուկիս պէս...

Պիտիւրը կրկին սկսան զայարուել ջղային ժառանգրուն մէջ:

– Ը՛ր... Ի՞նչ գիտես այդ տղուն մասին... Իր անսեւալը, ընտանիքը, զապափարները...

– Շատ լաւ տղայ է:

Աղան տհաճոյ, շտկուեցաւ:

– Օ՛:

– Պօղոսեան վարժարանը միասին աւարտեցինք: Հայրը շատոնց մե-ռած է, մայրը ասեղ զարնելով կարդացուց զինք: Շատ փայլուն եւ պար-կեշտ երիտասարդ ծըն է:

– Հը՛մ... Ըսել կ'ուզեմ... Ը՛ր... այդ կուտակութեան...

– Այո, դաշնակցական է:

Մարտիկ Աղան մէկէն զսպանակի վրայ նստածի նման՝ ցատկեց եւ ձեռքը սեղանին զարնելով.

– Գիտէի, գիտէի... Դաշնակ... անոնք է, որ միշտ կռիւ կը հա-նեն... ազգին թշնամիներն էն... Սոփոսիմներ... Գիտէի... Այս էրկիրը էկեր նստեր էնք, հանգիստ հաս մը կ'ուտենք, մեզի բան ըսող չկայ... Հա-լազանք, ջարդ չկայ... Մոռա՞նք այդ օրերը... հիմա ասոնք էկեր ազգը փորսանքի մէջ կը դնեն... օտարին առջեւ մէկ պետին կը զարնեն...

Մէկէն աչքերը յառեց Լեւոնին.

– Դո՛ւն ալ անոնսմէ էս:

– Ի՞նչ ըսել կ'ուզէք... եթէ անդամ ըսել կ'ուզէք, դեռ չեմ...

– Հը՛, փա՛ռք Ասազոյ... Պեղդ գլուխդ կանչէ... Ձըլլայ, որ ա-նոն միանաս, ոսխըն էղիր, հա՛... Ատոնք լաւ մարդիկ չեն... ազգին օ-գուտ շունենալէ զատ, վնաս կը հասնեն, վնաս...

Մէկէն ձայնը ցածցուց եւ գրեթէ փսփսալով.

– Տղա՛ս, ասոնք էին ջարդերուն պատճառ... Դուն պզտիկ էիր, չես գիտեր, դուն չես գիտեր... Քու հօրդ, եղբայրներուդ, քոյրերուդ մահ-ուան պատճառը ասոնք էին... Հանգիստ նստեր էինք տեղերնիս, Թուրքին

հետ ախպար էինք... Առ չէթէները էկան եւ տուններնս քանդէին... Էհ, օղուլ, ուղեղներն ջուր է կտրէր, ի՞նչ ազատութիւն, ի՞նչ անկախութիւն... մենք վո՞վ ենք... խեղճ ենք... մենք վո՞վ, անկախութիւնը վո՞վ... Բոլոր շարժներուն պատճառը անոնք էն... Հիմա, դեռ, խօսքերս ականջիդ օղբի... չըլլայ որ... Գնա՛, ի՞նչ կէսեր էս, դեռ դորդիդ... էս սրի հա՛ս ունիմ բաժնիք... Գնա՛, հայտէ՛... Եւ ի՞նչ էր իմ հարցը... Եւ ի՞նչ էր իմ հարցը... Եւ ի՞նչ էր իմ հարցը...

Այդ դիմեր, ժամերը կը քաշկռտուէին, Լեւոն չէր կրնար քնանալ։ Մարտիկ Աղային խօսքերը փոթորկեր էին իր ուղեղը։

Մանր, ահաբեկ վճիռներ էր արձակէր մարդը։ Ընդէն էին։ Իր հաւաքատները, անապատի անմոռանալի ողբերգութիւնը, մօրը պատմածները, մահը — բոլորը արթնցեր էին կրկին ու, ահաւոր լափերու հասած, կը տուայտէին իր հոգին։ Հաղիւ դուրս էր իր խաղաղութիւնը...

Ատմուխեան նման զգացում մը կը պարզէր Մարտիկ Աղային Տիգրանին, որ այս շարժերն աղբիւրն էր։ Տարտամ կասկած մը ունէր, որ մարդուն խօսքերը մաղձ կը պարունակէին։ Իր բնազդները կ'աղաղակէին, որ սխալ էր, սխալ էր։ Սակայն, կ'ուզէր համոզուիլ։ Ինք մինա՛կը, դատաւարանի նստիլ ու դատել։ Միեւնոյն ժամանակ դատած էր թուրքեր։

Իր ընտանիքին պատահածը, իր ցեղին պատահած անասելի ողբերգութիւնը արթնցած էր կրկին։ Ի՞նչպէս կարելի էր մոռնալ։ Իր ամբողջ մանկութիւնը, պատանութիւնը, գիշերներն ու ցերեկները, շնչած օդը՝ վառ կուած էին այդ ողբերգութեամբ։ Աղբիւր էր անոնց հետ, հալածուէր, անօթի ու ծարաւ մնացեր, ծեծուէր, նախատուէր ու ջարդուէր էր բիւք սնուած։

Ու Մարտիկ Աղային։ Իր զարհուրելի ամբաստանութիւնը։ Մի՞թէ։

Անկողնին մէջ կը դառնար, կ'այրէջր կրակներու մէջ, կը յառէր պարպին։ Կը ճգնէր խորհրդանշաններ, գրեթէ գտնել՝ քակելու համար առեղծոսանքը։

Իր ուսուցիչը, խմբապետ Համօն — ինչպէ՞ս կարելի էր։ Անհնար էր։ Ուսուցիչին ընտանիքը մնացեր էր Երեւան։ Համայնապար իշխանութիւնը թոյլ չէր տուէր, որ միանան։ Կինը եւ երկու զաւակները, տարիներէ ի վեր, չէր տեսներ եւ տեսնելու յոյսն ալ չունէր։ Մինչեւ մահը։ Զգացեր էր երբեմն, արցունքին խորտակելու ուսուցիչին աչքերուն, երբ ընտանիքի խօսք կ'ըլլար։ Իր կիները գէպի հայ լեզուն, մշակոյթը, գէպի մէջն ինչ որ հայ կական է։ Իր նուիրումը։ Ինչպէ՞ս կարելի էր։

Պատկած էր բաց պատուհանին առջեւ. աստղերը ներս կը թափէին։ Յամբիկի բոյրերով օծուն հով մը կը շոյէր մորթը։

Հապա խմբապետ Համօն։

Կը պատմէին, որ ամբողջ ընտանիքը մորթեր էին, երբ ինք կը կըռուէր Թուրքիոյ գէտ, Սասնոյ լեռներուն վրայ։ Սրտին քար էր դրեր ու շարունակէր էր կուր։ Յետոյ, ի՞նչ զրկանքներ, անօթութիւն, ցուրտ։ Կը մօթէր դարձած, հաղիւ կրցեր էր իր խումբին հետ տեղ հասնիլ։

Դեռ կը շարունակէր այդ խորհրդաւոր մարդը։ Գիշեր կը խօսէր, զրբկըւած կեանք մը կ'ապրէր։ Կը շարունակէր պայքարը։

Մինչ Մարտիկ Աղային, խոզի պէս կը յգգանար։ Որեւէ զօհ չէր տուէր, զրկանք չէր կրնար։ Մաքուր հայերէն մ'իսկ չէր խօսէր։ Կէս մը թրջացած էր իր լեզուով, սովորութիւններով, հոգեբանութեամբ։ Բայց հայ էր։ Աղաւթի դործերու կը մասնակցէր, երբեմն դուռը մըն ալ կու տար, երբ

ապահով էր, որ բարձրագույն պիտի յայտարարուէր: Կ'արժէր նման պաշտօն, տեսնել իր կեղծ կարծիքը եւ համեստութեան հովեր առնելը:

Անկողնէն դուրս նետուեցաւ, լոյսը վառեց, բացաւ Հայոց Պատմութեան գիրքը:

Դեռ յեղափոխական կուսակցութիւնները ծնունդ չառած, նորէն թուրքը կը ջարդէր Հայերը: Ասկէ աւելի առաջ՝ Արաբները, Քաթարները, աւելի առաջ Պարսիկը: Պարզապէս պատմութիւնը կը կրկնուէր:

Իսկ եթէ յեղափոխական շարժումը բնաւ ծնած չըլլար... այլապէս, դանդաղ, անպատիւ մահ:

Ի՞նչն էր, որ Մարտիկ ազաններուն այդպէս մտածել կու տար: Ահաւոր վճիռը նետել եղբոր ճակատին: Ո՛ւր էին թաղուեր արմատները այս ընդհարումին, ցեղային ո՛ր հեռաւոր խառնուրդներու ժառանգականութեան մէջ: Երկուստեքն չայկական հողին, լոյսի ու մութի կռիւը:

Արդար կ'ուզէր ըլլալ:

Արդեօք ճիշդ էր Լորտ Պայրնի, որ կ'ըսէր, որ Հայոց յատկութիւնները բնածին են, իսկ թերութիւնները՝ եկտոր:

Մարտիկ Ազան ալ Հայ էր: Կը սիրէր իր ազգը, մանաւանդ եկեղեցին: Նուիրում ալ ունէր, թէեւ սահմանափակ, թէեւ սակարկուած: Բայց չը փոթ մը կար անոր կեցուածքին մէջ: Ինչ իր մէջ խռով էր մարդը: Երկուստեքն մը կը առայայտէր իր հողին: Իր հայութիւնը եւ շրջապատին յարմարելու եւ կեանքը ապրելու համակերպումը:

Հայութիւնը պահանջկոտ աստուած մըն էր: Զրկանք, հալածանք, եւ հպարտութիւն, եւ հոգեկան հաւասարակշռութիւն: Միւսը դիւրին, գործնական, դիմումի ճամբան էր:

— Ի՞նչ կ'ըլլայ, օղու, Թուրքիոյ մէջ՝ ճիշդ է լիզունիս կորսնանելու վրայ էինք, բայց մեր եկեղեցին դռնէ ազատ էր... մեր հայրերուն Աստուազը մերն էր... Համբերելու էինք, վաղուան հետ ինչեր կը զադին... Ի՞նչ պէտք ունէինք զէնք բարբարոսներու, մենք վո՛ւմ էինք, ափ մը ժողովուրդ... ոչ հրասան ունէինք, ոչ փամփուշտ... Մենք վո՛ւմ էինք... Սպասելու էինք, համբերելու էինք, Աստուայ ապաւինելու էինք...

— Հապա եթէ համբերէինք, համբերէինք եւ Աստուած օգնութեան չդար, — անհամբեր հարցուց Լեւոն.

— Օղու, մեղա ըսէ, ի՞նչ ըսել է Աստուազ օգնութեան չգար... Կու դայ, միշտ կու գայ... բայց, եթէ քու ըսողիդ պէս ալ ըլլար, նորէն համբերելու էինք, ջարդուելէ լաւ էր...

Լեւոն կրկին ընդմիջեցաւ.

— Այդ կերպով... Հապա մեր քոյրերու, մայրերու անպատուութիւնները... Մեր ստրկական անարդ դրութիւնը... Մարդկային վայելչութեան կոխկոտուի՞լը... Ատոնց ի՞նչ ունիք ըսելու... Մինչեւ Ե՛ւր կարելի է ստորնանալ...

— Էհ, օղու, լիզունիդ շափը գիտսիր, որո՞ւ հետ կը խօսիս դու... — Շա՛տ լաւ, շա՛տ լաւ... Ըսել կ'ուզեմ, եթէ համակերպէինք, վրտաւարար, անդարձօրէն, կամայ կամայ պիտի մեռնէինք, եւ ամէնէն առնարդ մահով... Երեք հազար տարիներու ազնուական, ստեղծագործ եւ հերոսական Հայ ցեղը պիտի անհետանար առանց փառքի ու պատուի, որդի մը նման դաւարուելով...

Ազան լռեց.

— Էհ, օղու, եթէ Աստուայ կամքը այդ էր, թող այդպէս ալ ըլլար,

ժառանգորդները կրնայինք Աստուծոյ գործերը փոխել... Ըստապէս է՝ Եղիսի կամքը Բ...:

Լեւոնին համար խնդիրը պարզուեցաւ:

Քանի որ Բ... է փոխադրուած էր Գահիրէ:

Թագուհիին լուր չուներ: Այդպէս ուզած էր Թագուհի:

— Աթոյթակցինք: Անյոյս սէր մըն է: Թերեւս բաժանուած լուծէ խնդիրը: Ծամբաները հոս թող բաժանուին:

Ամիսներ անցեր էին, Լեւոն չէր կրցած մոռնալ Թագուհին: Հացի, օգի եւ ջուրի նման կենսական էր սէրը: Ակումբը, հաւաքօթները, ընթացքին, կը հանդիպէր աղջիկներու: Ծանօթացեր էր մէկ քանիին: Իրեն հասակակից, գրութիւն աղջիկներ, բայց իր սիրտը կը փնտռէր Թագուհին: Անիկա անբաժան մասն էր իր աշխարհին: Կապուած իր պատանութեան, մօրը, ցեղին: Նոյն միջավայրին մէջ էին Ենիք: Իրենց կեանքերու պատահարները խաչաձեւեր էին գիրար, հիւսուիք էին իրարու, հոգեկան անտեսանելի հոսանքներ ու մակերթացութիւններ փոխանցուելու էին իրենց միջեւ: Եւ ժամանակը հիւսեր էր պահերն ու ընթացքը իրարու: Կեանքը մեկուսացած եւ անհասկանալի միտք մը չէր, այլ մէկ անբաժան մասը աւելի մեծ հոլովոյթի մը: Ետքումն կեդրոն մը, որ ընդունակ էր անսահման առաձգականութեան, եւ հաղորդակից՝ այլ խաչաձեւ կեդրոններու, եւ տեսարար, ձգողականութեան ալիքներ արձակելով եւ ոտանդակով:

Թագուհին պատահականը չէր, որ իր կախարհող երգը կ'երգէ պատուանիկ տակ ու կը մեկնի: Թագուհին մնայուն էր, անխորտակելի էր, նստած ընթացքով, արեւանդ, հոգեւանդ մէջ: Թագուհին սկիզբէն էր:

Օրուայ ժխորին ու գրադուսներու ընթացքին կը մոռնար զայն: Երեկոյթներու առեւ եւս քիչ կը յիշէր զայն: Միայն՝ երբ առանձին մնար, կամ երբ կտրուէր ներկայէն, կու գար Թագուհին ու կը մնար երկար: Խորունկ, լայն զգացում մը կը գրկէր աղջիկը: Աւելի ճշգրիտ պիտի ըլլար ըսել: Թագուհին միշտ հոն էր, իրեն հետ, իր անբաժան մասը: Իր գիտակցութիւնն է, որ կը փակէր ու կը բանար վարագոյրը:

Եւ կիրքը անպակաս չէր այս սէրէն: Ոչ անմիջական եւ տրագիկ գրգռուել, այլ համայնական ցանկութիւնը, այնպէս ինչպէս չոր հողը կը տենչայ անձրեւին:

Քանի անգամ ուզեց դիմել ի վերջոյ, պայմանադրական արգելք մըն էր գիրենց կեցնողը: Տարիքի տարբերութիւնն ալ պայմանադրական պատճառ մըն էր: Ինչն էր, որ կը բաժնէր գիրենց: Յաճախ հարցուցեր էր ինքզինքին այս հարցումը: պատասխանը անզոյ էր:

Եւ որոշեր էր գրել: Սկսել էր նամակը, բայց ամէն անգամուն ալ անորոշ զգացում մը կեցուցեր էր գիրենց:

Ամբողջ տաք գիրքներ կ'ունենար արեւան ընդհանրութեան: Եզրպատական տաք կլիման կը հրահրէր բեղմնաւորման հոյզերը: Տարին տասներկու ամիս կանաչ կամ սպիկ են արտերը, ծառերը միշտ ծլած: Նեղոսը կեանքով յորդուն, երակ մ'ինչպէս կը հոսի ու կը տրոփէ: Արեւը միշտ կը թափէ իր հեշտոտ ճառագայթը:

Ամբողջ գիրքները, երբ խաւարը թափանցիկ է եւ արմաւենիները հովին մէջ կ'օրօրուին, զուռային դարձաբաժնի, սիրատու իր երգը եւ տափերուն կրճատ տրոփը կը Ենիքն անպակաս ցանկութեան: Եզրպատականներու մարմիններն ալ կ'արբենան հեշտանքով: Իրենց պինդ կտրծքերուն եւ սեւ

կերպասի տակ տուտանող մարմիններուն ընդմէջէն եւս կ'անցնի նոյն յաւիտեանական կանչը բեղմաւորումի:

Եւ երեսակայութիւնը թեւ կ'առնէ, կը խիզախէ փակ փեղկերէն ներս, կը սողոսկի զգեստներու բացուածքներէն եւ կիսամութի մէջ սքօզուած մերկութիւններու շուրջ կը յամենայ:

Ամբոսն դիշերը, երբ կը կոթնէր տանիքի եղբին ու կը նայէր վար, պատշգամբներու մէջ, եզրկտուհիներ անփութօրէն իրենց սրունքներն ու զիստերը բացած, նուազուն նայուածքով կը հեւային տաքին: Իր ծարաւի աչքերէն իսկ շէին զգուշանալ եւ յոյսօրէն կը ցուցադրէին յորդութիւնն իրենց միտերուն: Նեղոսի յուսիսի հովիտին մէջ ամէն սերմ կը ծլէր, մէկի տեղ հաղար, հաղարի տեղ բերաւոր: Կեանքը կ'ուռէր, կը պայթէր, կը յորդէր: Կեանքի այս հզօր սէրն էր, որ կերտէր էր հին Եզրկտոսի վէպը: Եզրկտոսը խիզախէր էր յաւիտեան ապրիլ: Եզրկտուհիներու նայուածքին մէջ տեւական, հեռաւոր եւ անժամանակ խորութիւն մը կար:

Միայն Փաթման զգոյշ էր եւ գիտակից: Նախանձախնդիր կերպով կը պահէր իր մարմինը Լեւոնին: Իր քովի սենեակը կը քնակէին մայր ու աղջիկ: Մայրը տունները կ'երթար լուացք ընելու, իսկ Փաթման տունները ըստ պատահական կ'ընէր: Ծարաւի օրերն ալ Լեւոնին սենեակը կը մաքրէր: Գիշերը խօսէր, միայն կը նայէր ու կը ժպտար, զաղտնի, տարօրինակ ժպտիտով մը: Հրաւէր մը, ապա, սիրտը կարգացող հեգնանք: Դժուար էր ըմբռնել այդ ժպտը, այդ ալ սովորական, անտաշ աղջկայ մը մօտ: Դուրսէն ինչ որ Լեւոն կը տեսնէր ու կը զգար, միայն իր մէջէն էր: Դժուար էր ճշգրէլ:

Լեւոն սակայն, նմանութիւն մը կը զտնէր անոր ժպտին եւ հին եզրկտոսական արձաններու ժպտներուն միջեւ: Առեղծուածային բան մը: Ժամանակը հեզնոյ: Մեծ զաղտնիքը գիտցող ու զաղտնիքը իրեն պահող: Քարէ, տեւական: Տարիներ ետք, երբ Վերին Եզրկտոս այցելէր, աւելի պիտի շեշտուէր սպաւորութիւնը:

Այս աղջիկը միջավայրին ծնունդն էր, անկասկած: Այս եզրկտական դարաւոր հողին, Նեղոսի ջուրին եւ Եզրկտոսի թրծող արեւին ծնունդը:

Միալ էր մտածել, որ հին Եզրկտոսը մեռած էր: Նոյն Եզրկտացիները, — որոնց կերպարանքն ու հողին սեւեռած են կրանիթի վրայ, — զեռ կ'ապրին, կը քալեն Եզրկտոսի հողին վրայ, Նեղոսէն ջուրը կը քաշեն կամ կը կրեն ուսերու վրայ: Հուժկու, լայն ուսեր, արեւէն այրած խորունկ նայուածքներ: Օրինակ՝ այս աղջկան ժպտը: Միայն դիտելու է մակերեսէն անդին, ինչպէս հին արուեստագէտները:

Գիշեր մը, ինչպէս սովոր էր, մարեց լոյսը եւ տանիք ելաւ: Թաղարները տարաշխարհիկ բոյրեր կը ծաւալէին: Քաղաքին հեւքը, անորոշ ու շփոթ, ջուրերու պէս կը բարձրանար: Թափանցիկ խաւարին մէջ կը տեսնէր արմաւենիներու եւ մզկիթներու ուղղահայեաց սլացքը: Հեշտոտ Արեւելքը լեզուին գիշի, աչքերուն կրակ, վաւաչոտ շրթներով կախարդական հեքիաթներ կը հծծէր:

Լեւոն կոթնեցաւ պատին ու լսեց: Իմաստութիւն մը կար այս դարաւոր դիշերուայ մէջ: Անհնար էր, որ հազարաւոր տարիներու կեանքը Թաղուած ըլլար աւաղի տակ: Անհնար էր, որ խօսքը, բանը, կորսուած ըլլար միջոցին ու ժամանակին մէջ: Լեւոն տարտամօրէն, բայց հաստատ, կը զգար, որ տիեզերքի մէջ ամէն ինչ կը տեսնէր: Կը զգար, որ եթէ ահանջ-

Ներք լարէր, պիտի լսէր Գեղեցիկ Նեֆէրթիթիի սիրոյ միտմանները. որ եւթն հալուածքը յարէր Թափանցիկ խաւարին մէջ, պիտի տեսնէր անցեալի մարդիկն ու զէպօքերը: Ժամանակը պայմանադրական սահման մըն էր:

Եւ ահա, շրշիւն մը լսեց: Դէմքը դարձուց: Սլացիկ կերպարանք մը, խաւարէն ձեւաւոր եւ անկէ միայն երանդով մը զանազանելի: Ոգի մը, որ հազիւ կը շարժի:

Մութին մէջ կրցաւ տեսնել աչքերուն կրակոտ սեւեռումը եւ լրբնեւորուն յամեցող ժպիտը: Եղիպտական արձան մը, որ Գալաթէայի նման, կեանքի հրաշքը կը զգենուր յանկարծ:

— Գիշերը անոյշ է, — չնչաց Ֆաթման:

— Ինչո՞ւ ձայն չհանցիր, կէս ժամ է հոս կեցած էի...

— Մի բարկանար, խալիկա, քեզի համար տարբերութիւն պիտի չընենք...

Լեւոն լուռ մնաց: Ձդիտցաւ ինչ ըսել: Կոթնած էր տանիքի պատին: Թաղարի մէջէն մեխակը այտերուն կը քսուէր: Ֆաթման կեցած էր քիչ անդին:

— Ուշ է, ներս գնա, — ըսաւ Լեւոն:

— Այա րասի, Կա խալիկա (գլխու վրայ, պարոն) ըսաւ եւ քալեց զէպի դուռը: Ոտքերը ձայն չհանցին, հաւանաբար թողիկ էր: Մահեցաւ խաւարին մէջ, որուն հարազատ քնակիչն էր կարծես:

Դուռը ճոնչաց ու փակուեցաւ:

Նոյն պահուն, խմբապետ Համօն եւ Ուտուցիյը նստած էին վերի սենեակին մէջ: Սմբան տաքին, ծուխը դուրս քշելու չափ օդ չկար: Գրասեղանի վրայ վառող լամպը հազիւ կը լուսաւորէր սենեակի անկիւնը: Բոսոր անձերը հալեր էին ծուխի մշուշին մէջ եւ անիրական հակներու կը նըմանէին:

Ժամերէ ի վեր կը խօսէին: Պահը կէս գիշերը անց էր: Դէմքերու վրայ ոչ մէկ յոգնածութիւն, քնատութեան ոչ մէկ նշան:

Ժամերէ, դարերէ ի վեր կը խօսէին: Նեֆթը մէկ էր — Հայոց Ժողովուրդը: Այս մարդիկը այս աշխարհէն չէին: Ընդ է, կ'ուտէին, կը զլարճանային նոյնիսկ, բայց այս ժողովրդակին վրայ չէին ապրեր: Իրենց լուրջ կեանքը կը հոսէր, կ'ազմէր, կի յորդէր: Իրենք, կարծես անշարժ, նոյն կէտին վրայ կը տնտնային:

Հայոց Ժողովուրդը:

Այդ էր գերագոյն նպատակը: Յուզիչ, ներշնչող բան մը կար այս մարդոց հաւատքին մէջ: Փոքր ժողովուրդ մը, — շատ փոքր, — ցրուած երկրագունտի վրայ, ամէնէն աննպաստ պայմաններու մէջ եւ՝ օժտուած անկախութեան անպարտելի կիրքով մը:

Հարկ էր վերագնահատել մեր ըմբռնումներն ու չափանիշերը: Քանակին պէտք էր հակադրել ուժականութիւնը: Հին բառով — հաւատքը: — Զարմանալի է, զարմանալի է:

Ուտուցիյն էր:

Լեւոն քննադատական միտք մը ունի: Յաճախ ինքզինքին կը հարցնէ. «Արդեօք չի՞ չափազանցեր... արդեօք իր սէրը եւ պաշտամունքը զէպի իր ժողովուրդը՝ զինք չե՞ն մոլորեցներ...»

Զանոցեր է հակաճառել (իր մտքին մէջ) թխտել անոր համոզումները, պաշտամունքը — ժիշտ ալ ձախողեր է:

Մենք քաղաքը քուն է, բայց տանիքի սենեակին խաչածեւ երկաթեւորով պատուհանը վառ է դեռ։ Տանիքի յատակին կը ցույց բոսոր լոյսը։ Խաչածեւ ստուերը կը կտրէ դայն։ Հեռուէն, Բուրգերու մօտերէն, անսպասուի շունչը կը հասնի եւ մենք լռութիւնը կը սողայ հողիներէն ներս։ Թաղարին ծաղիկները շունչներն են բռնած են։

Ներսը, այս հրաշքին անտարբեր, զոյգը նստած է ծուխի մշուշին մէջ։

Ճակատները մտահոգ են։

Սանճաղը յանձնուած է Թուրքերուն։ Հայեր արագ կը դադրեն։ Դէպի Սիւրիա, Լիբանան, աւելի հեռուները։ Միշտ անապահով, անկայուն, դադրական։

— Մի լքեր ժողովուրդդ, Տէ՛ր։

— Ինչո՞ւ մեզմէ դարձուցիր երեսդ, Տէ՛ր...

Ողբերգական դրուագներ կը պատմեն։

— Մեզք է այս ժողովուրդին, — կ'ըսէ Յմբապետը, — ա՛ւր պիտի վերջանայ... Եթէ ուժ ունենայինք... Ափ մը հոս, ափ մը հոն... Եթէ համախմբուած ըլլայինք... Գիտես, Նիկիլ, պիտես ո՛ւր է մեր ողբերգութիւնը... Առանձինն փողը ենք միւր ճակատագիրը դարբնելու եւ, նոյն այդ փողը քանակի պատճառով, անզօր ենք դիւանագիտութիւնը հրաւիրելու մեր կողմը...

Յմբապետ Համօն ինք ալ պիտէր, որ մենք խօսք մը չըսաւ։ Սիրտը չատ լնցուն էր։

— Ուզում ես ասել, — յարեց Արամիան, — որ մեր թիւն է մեր տկարութիւնը... Տեսակներէ վերապրումի պայքարում մենք թոյլ ենք եւ, ըստ այդ տեսութեան, պիտի կորսուած, անհետացած լինէինք... Եւ ասկայն, վերապրել ենք... Հազարաւոր տարիներ... Վերապրում ենք, էլի... եւ ոչ որպէս տկար, ներքիացած, այլասերած... Դեռ պահել ենք մեր առնակապութիւնը, ստեղծագործում ենք, լիանում ենք... Ուղիղ է ասուած Համլետում։ Դեռ այնքան անիմանալի բաներ կան երկրի եւ երկնքի վրայ...

Հովը ռեհանի բարկ բոյր մը նետեց պատուհանէն ներս, ծուխը դաւարուեցաւ, ինք իր վրայ դարձաւ, կրկին անշարժացաւ։

— Գոյութեան պայքարը միայն ուժով չէ, որ հետապնդում է... Կան աւելի հզօր, աւելի տեւական միջոցներ... Բնութեան մէջ միայն Ֆիզիքս-պէս ահեղները չեն, որ վերապրում են... Հսկայ տինտոսները ու մամուլ-ները կորել են, մրկելն ապրում է...

Յմբապետ Համօն աչքերը այնքան կծկեր էր, որ զժուար էր ճշդել, թէ քո՛ւն էր թէ արթուն։ Ձայնը խորունկէն կու գար։

— Բո՛ւ ասածը ճիշդ է եւ ճիշդ չէ... Ուժը կեանքի հիւթն իսկ է... Հարկ է նսեւ կռուել... Հոն ուր այլ միջոցները անզօր են, ուժը կ'ապահովի յաղթանակը... Պարտութիւնը կամ յաղթանակը չէ կարեւորը, այլ կրուելու ընդունակութիւնը... Աշխատող երկաթը չի ժանդոտում...

(Շար.)

Բ. Կ.

ԱՐՄԱՆՑ

Ո՛Վ, ԲԱՐԲԱՐՈՍ ԴԱՐ

Ահա իմ դիմաց՝ ծարաւից ճափած
Սափորն է հոգու .
Անապատն այս անբար մեր հոգու՝
Թէժ է անարկու ,
Եւ ռվասիսի կայ ոչ մի նշոյլ --
Սով է, հոգու սով ու՝ ծարաւ մի բոք ,
Որ յափիզում է հէ՛ք կուրծքը մարդու :



Կարօտ եմք, կարօ՛տ՝
Պուտ մի հաւատի ,
Պատառ մի հրկնի ,
Մի բուռ շէն հոգի ,
Անուշ մի հոգու ,
Որ յագեցնեն ծովը այս մաշող
Ու սարսափազդու ,
Ու շոյեն, շոյեն որք հոգին մարդու :



Աշխարհն ամբողջ տենդ ունի
Եւ գառանցում է ու հեւում, հեւում :
Հիւլէ մարդն է անցնում քրկնամերձ
Շէնքերի տակից ,
Անցնում է, անցնում, անցնում հեւասպառ ,
Կապարի պէս ծանր
Բռն իր միսի՝
Իր ուսին, ուսին ,
Դռում է, սողում, ու վազում, վազում ,
Ու մերթ կանգնում է, նայում շեղակի ,
Ու յաւում է խուլ հեծքը ջղերի ,
Որոնք պրկուած՝
Ոգնաշարից իր միջեւ գանգը բարկ՝
Դռում են, տնքում
Չոր մատներն տակ
Պիպո մի վհուկի...



Ու հնչում է յամբ մաքած զանգի պէս՝
 Գամգը տօթակէզ,
 Ու շուրջը նրա՝ խեղկատակի պար,
 Հրքիւրուց անհամ,
 Ու հայեացք կռվի,
 Ու հոգի, հոգի՝
 Ճափած ու դատարկ սափորի մեջ,
 Որ իր ձայնն է կեղծ,
 Ու ծախուած կախարդ
 Հընավահառի՝
 Գնով շա՛տ ածան...



Եւ անցնում է մա,
 Անցնում երկնամերձ շէնքերի տակից,
 Որոնց զագաթից
 Գլխիվայր կախուած կատուի պէս նօթի
 Իր հոգին, հոգին՝
 Մըլատում է յար ու պաղատագին:
 Ու շուրջը նրա՝
 Պողպատ ու արմին, եւ աղիւս ու կիր,
 Հագար աչք պղտոր, ձայներ խուլ ու բամբ,
 Հագար նիշ, շառաչ,
 Լայսի ծով անծիր,
 Եւ լոյսի վեբայ՝
 Թանձրախիտ սեւ ամպ:



Տե՛ս, անցել է արդ
 Հանց մի ակնթարթ՝
 Մ'օտ աղջ ճսան դար,
 Ու մաշել ես դու շեմքերը բոլոր
 Դպրութիւնների,
 Բախել ես դուռը
 Բոլոր գիտութեանց,
 Ու աշտօր, աշտօր՝
 Աւելի սնանկ, մերկ ու անօթի
 Քան՝ երբեք, երբեք,
 Հագուստ մէջ տխուր կայ հսկայ մի վիհ,
 Եւ զգում ես, որ նօթի ես, նօթի՝...



— Ինչո՞ւ, ի՞նչպէս, ե՞րբ,
 Օ՛, ասէ՛ք, ասէ՛ք,
 Հաստե՛մ մե՛նք յանկարծ՝
 եզրին անդունդի այս մահաաւարտու-
 Ու դեռ չըզիտենք ո՞ւր կ'երթանք, մենք՝ ո՞ւր,
 Ու դեռ յըզիտենք մե՛նք՝ այնքան, այնքան,
 Որպէ՛տքի գիտնանք,
 Որ կեանքն աներազ՝
 Յաւ է, գառանցանք.
 Որ կեանքն առանց սէր՝
 Մ'աղձ է ու հեզմանք.
 Որ կեանքն այս մեր՝
 Կեանք չէ, կեանք չէ,
 Այլ՝ սովից սատկած
 Շան միտած դիակ,
 Ու նրա շուրջ մե՛նք՝
 Ազգանքն անյազ,
 Որ կուսելով անվերջ ու երկար՝
 Բզկտում ենք յար՝
 Հռտած լէշն այդ ու՝ սիրտն իրար...



Օ՛, աւազ, աւա՛զ,
 Մնացին որպէս մոռնիներ անթազ,
 Եւ որպէս լույ խօսէ՛
 Որք սէրն անմիտ,
 Գեղեցկութիւնը մերկ,
 Ճշմարտութիւնը վե՛հ, —
 Սառսոյցի վրայ գլուած միայն խօսէ:



Տէ՛ր, Տէ՛ր, Տէ՛ր, ո՛վ Տէ՛ր,
 Բուժիր, ա՛հ, բուժիր բոլր հոգու մեր,
 Տուր տեսնելու այ՛ք, լսելու ականջ,
 Տուր խաղաղութիւն
 Տուր մեզ անմիտ սէր, —
 Սէր, սէր, սէր, սէր, սէր,
 Տառապանքն անուշ՝
 Ա՛հ, տուր մեզ, տու՛ր, Տէ՛ր...



Սի՛րտ, սի՛րտ, սի՛րտ իմ, սի՛րտ,
Համդարտիք մի քիչ:
Լսի՛ր...
Յամաշեց կեկորդը թռչումի,
Այնքան, որ երգեց մա գովքը զարմամ.
Ամբողջ ամիս է, որ մտաացել ես մայել երկնքին
Ու ծծել, բմպել կապույտ այդ գինին:
Օ՛, կապույտն այդ խոր, ամսահման առ ջիւղ,
— Ո՛վ գու շափիւղայ սափոր աստղակուռ
Օ՛, երկինք, երկինք, եւ աստղունք՝ քուռ—քուռ:
Մի պահ թող գտնեն ռոմերդ անվարժ՝
Քեզ այս քաղաքից դուրս տանող ճամբամ
Ու հանեն թող քեզ բլուրի գլխին՝ մեկուսի, մեմակ.
(Մի՛թէ արդէն միշտ դու մեմակ չէիր):



Տե՛ս, տես, տես ինչպէս
Ոչխարի մման ամմեղ մատաղի՝
Քո ռոմերի տակ հեզ՝
Ծումկի է եկել հովիտը վայրի:
— Օ՛, շնչիր, ծծիր, դու անյագօրէն
Խնկաւէտ աւ մուրք օդը լիաթափ,
Շփիր կուրծքդ վառ,
Ու լսիր, լսիր հեւքն արիւնիդ
Ու՛ երգն իր կարմիր, երգը արմավառ,
Որ անմղենքիդ օրօր է ասում
Ու խշշում, խշշում:
Եւ թող արիւնի անուշ տխրութեամբ
Հագիդ անօթի,
Ու կայլակ, կայլակ շիթեր թող ցայտեն
Քիւնջ աչքերից քո
Ու արտասուիր դու:



Լա՛ց, հոգիդ իմ, լա՛ց,
Եւ աստղերը քեզ ձայնակցեն պիտի.
Լաց, որ թեթեմաս,
Լաց, որ զգաս դու,
Ստեղծես, սիրես,
Լաց, հոգիդ իմ, լա՛ց,
Դու անօթի ես, դու անօթի ես.

Կարօտ ես, կարօ՛տ՝
 Պուտ մի հաւատի,
 Անուշ մի հագու,
 Պատառ մի երկնի,
 Շիթ մի գով ցօղի,
 Մի բուռ շէկ հողի,
 Մի բուռ շէկ հողի,
 Մի բուռ շէկ հողի,
 Որ յագեցրնեն սովըդ այս մաշող
 Ու գաղտագողի...



Ա՛հ, մի օր, մի օր, լուսակաթ մի օր՝
 (Ջգում եմ արդէն շոյում է հագիս շունչը մեղրածոր)
 Երբ աստամդական քո հոգին գրկած՝
 Հանգչես քո հողին, հողին, քո հողին,
 Ու մի խոնրէմեմով անուշ ու քարի՝
 Քրտիմդ խառնես
 Քո հողին, ջրին
 Ու հոգեվարքը դիտես արեւի,
 Մինչ քո փռոտած ալիքի փեղկի դէմ
 Կը դողայ մարգարտածաղիկը վայրի՝
 Արեւի վերջին համբոյրին կառչած,
 Եւ գեփիւտը պաղ շրթերը կը հպի
 Հակտիդ տօթակէզ՝
 Հոգուդ մէջ կ'ընկնի
 Երկնքից այն վէս՝
 Ու քո ուսերից ինչպէս մի մեծ ժայռ՝
 Աշխարհն իր ցաւով
 Կը գլորուի վաթ...

.

Օ՛ր, դու բարբարոս,
 Բարբարո՛ս դու դար...:

ԱՐՄԱՆՏ

Թեհրան -1955 թ.

3. ԶՈՐԵՑԻ

ՅԵՏ (ԵՐՐՈՐԴ) ՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

«Մարդկությանը գոյութեան պայմանները ստորադասական մեծ է: Խաղաղութեամբ համար, պատերազմի արաւետը աւելի՛ եւս զարգացնելու, զօրացնելու ցաւագին տեմդը ունի: Կեղծ լուստեանութեամբ պէտք չկայ: Ուշ կամ կամուսի պիտի պայթեցնէ՝ Երբորդը մեղանուր պատերազմը, դարձեալ... Խաղաղութեամբ համար:

Պատերազմի արաւետը տեսար կատարելութեամբ հասցնող մոյմ ա՛յդ գիտնականները կը մտածեն մտեւ յետպատերազմեան մարկային կեանքի գոմէ սահմանափակ եւ մախնակամ կարելիութիւնը ապահովող գիտելու մասին:

Գրողին կը մնայ, յետպատերազմեան կեանքը ներառելայեւ լով, ապագայ աւանդութիւններու պատշաճ թելադրականութեամբ՝ գրականութեան մշակել, որպէսզի հիմ աւանդութիւններէն ժառանգուած սերերը թերեւս կարելի ըլլայ ամէնք զանեղ վերապրողներու հագին մէջ:

ՄԻՇԵԼ ՊԻԹՈՐ

Պատերազմը, որ երբորդն էր համաշխարհայիններուն, եւ անշուշտ՝ մեծ, վերջացաւ:

Հին ճակատամարտներու հերեմեանքաբ կամ «առանձնայ» տիտղոսը չուենցաւ թիւ 3-ը:

Շատ կատարելագործուած ըլլալուն՝ շատ կարճ տեւեց:

Հիւլէական, ջրածնային, կորիզային եւ... կեղեւային բազմահազար ուռածքեր արձակուցան զանազան կողմերէ,

Անպարագիծ տարածութիւններ տւերող հրթիռներ սլացին աշխարհի չորս ծագերէն՝ դէպի իրենց թիրախները:

Դիւային հանճարներու յղացած՝ ալ շեւ գիտեր ինչպիսի՞ դժոխային ականներ պայթեցան իրենց խորհրդաւոր թաքտոցներէն,

Եւ, ընդամենը՝

Յրեան վայրկեան, տասը երկվայրկեանէն վերջացաւ համաշխարհային երբորդ եւ (առժամաբար) վերջին

մեծ պատերազմը՝ իր հետ վերջացնելով շատ բաներ:

Արեւուն շուրջ դարձողը չենաղ երկրագունտը չէր այլեւս:

Հասարակ ժողորակ մըն էր: Աւերուած, ժոխրացած տարածութիւններով դորդ զանգուած մը պարզապէս:

Անջրպետը ի դուր ժոխրոտել փորձելով կը թաւալէր անիկա՝ ուշադրոյս եւ մեծղի հրէջի մը պէս, որ այրելէ՝ վերջ իսկ մեռնել չ'ուզեր կարծես:

Արեւը թարի է միշտ:

Անոր կենսատու, թանկագին ճառագայթները կ'իջնէին ժոխրացած տարածութիւններու վրայ, կը սպրդէին ժոխրի սեւ ծոցին մէջ եւ ողջ մանրէ մը կը փնտռէին, չայրած հատիկ մը, գոնէ հիւլէ մը բնութիւն՝ նոր, նախնական կեանք մը բեղմնաւորելու համար:

Բայց՝ անգուտ:

Աթոռական, ջրածնային ու միջուկային ուռճերով աւերուած վայրերու

արդաստարութիւնը՝ Աստուածային նոր ըստեղծագործութիւններու պէտք ունէր։ Ամալութիւն, աւեր, մոխիր ու մահ մէջն կողմ։

❖

Հէյ կիտի աշխարհ...

Ի՞նչ էր, ի՞նչ եղաւ...

Ինչ՞որ ունէր այս քրիշապ աշխարհը։ Ի՞նչ հրաշալիքներ։ Բնական եւ արուեստական ինչպիսի՞ր զեղեցկութիւններ։

Ոչինչ ունի սակայն հիմա։

Մէկ վայրկեանէն միւսը, զետիւն քերցիւն Նիւ Եօրթի. Իմրաշր Սթէյք Պիլ-տիմիլը եւ արեւմտեան ալլ քաղաքներու երկնաքերները։

Պիկպլեյմը լուսն, աշտարակը կընցաւ։

Ծովամոյն եղաւ Պարտօլտի մեծդէր արմանը, իր կզդիով միասին։

Էյֆէլի երկաթեայ ոտքերն իսկ կըթոռեցան եւ իրենց բարձր բեռը վար մզեցին՝ ծերացած, ուժասպառ բռնակիրի մը պէս։

Մոսկուայի՝ զանգակներու ճաթած արքան, «Աար Քոլոլը», աւելի՛ եւս ճաթեալ ու խորտակուեցաւ՝ քաղաքը մըթ մայր տաճարին հետ։

Օ՛ր, ամէն մէկը՝ տասը դժոխքի կըբռնէ յառաջանող դիւային ոտմերբը, հիւլէականացած կամ կործակուող Մէֆիսթոֆելէսները, տակաւին ի՞նչ մեծ աւերներ գործեցին չէն, զեղեցիկ աշխարհին վրայ։

Սիւմանթոն ողջ ըլլար եւ կարծիք լուրեր եղեալգրէր։

Սպիտակ Տան, Քրէմլինի, մեծ ու չքեղ բոլոր ապարանքներու լայնահաստ պատերը, աւերակ առ աւերակ, իրարու վրայ կործանեցան հիւլէասարսափ օր մը կործկապալթումի օր մը, օր մը հրթիռի՝ զէրենք եզերող չքեղ փողոցներու բազմազար ինքնաշարժներու վրայ...

Ամերիկայի մէջ երգող կամ զոռացող Նիակարան ու Նարատան լուսին, մեռան...

Ու կոտորեցան արբիկեան դրախ-

տաղեղ անտառներու բոլոր, բոլոր ծառերը...

Եւ այն զետերը, որոնք Մոսկուայէն, Փարիզէն, Լոնտոնէն, Մատրիտէն կ'անցնին, մի՛ հարցնէք, ցամաքեցա՞ն, ցամաքեցա՞ն...

Օ՛ր, չքացած երազ են այլեւս Ֆրանսական քաղաքներու հրաշային զիշերները՝ իրենց զեղեցիկ վանդակներով կամ Ֆոլի Պէրժէրներով...

Այլեւս չքացած տեղիք՝ Եւրոպայի ծովեզերեայ ցերեկները՝ ջուրի եւ սիրոյ համար ստեղծուած անհամար ցնծուհիներով։

Երանութեան անցան երջանկացող բոլոր տեսակի երանութիւնները, զեղեցկութիւնները...

Երեւակայեցէք։ Տակաւին ինչե՞ր կային աշխարհիս վրայ եւ ինչե՞ր չկան հիմա։

Երգ, երաժշտութիւն, կարկաչ ու հռուդիւն կար։ Կար լուսն ու ծիծաղ, ազօթք ու նախապիտէ, ճիշդ ու ճառ, վարնասուն ու վէճ, ազմուկ, ազաղակ...

Բոլորը ոչ եւս են հիմա։ Աշխարհակալը լուրթիւնն է սարսափելի եւ անարժապանգ։

Մարդիկ կային։ Իմաստուն, տղէտ, հարուստ, աղքատ, ճերմակ, սեւ, ուժեղ, տկար, ազնիւ, անսիրտ, մարդիկ կային միլիոնաւոր։

Իսկ հիմա՞ մի քանի տասնեակ անձեր միայն, համաշխարհային երբորդ մեծ պատերազմի համայնակուլ երախէն հրաշքով ազատուած։

Անոնք, իրարմէ հեռու, աշխարհի զանազան մասերու վրայ, ապաղայ նոր ազգերու նախահայրերը ըլլալու կոչուած են։

Անկառիկ, չար սատանան կարդաց ազգերու պատմութիւնը, դիտեց զուճաւոր պատկերները, շտապ հետաքրքրական գտաւ զայն եւ փափաքեցաւ կրկնութիւնը կամ տարրերակը տեսնել իր սեփական (ճիշդը՝ սատանայական) աչքերով։

Ջրհեղեղ մը բրած էր Աստուած։

Սատանան ալ, քաղաքական մեծե-

սարանները: Դժուարահաս վիզաները
անշուշտ չէին կրնար չայրել՝ ի փառս...
ճամբորդական բացարձակ ազատու-
թեան:

Դրա՞մ: Ծանապահածա՞խոս:

Այս պարագային, երեք «կեցցէ՛»,
երեսուներեք «պատի՛ւ»՝ համաշխարհա-
յին երրորդ ընդհանուր պատերազմին՝
սակի՛ի այդ կլորիկ ու կաւա՛տ կայսրու-
թիւնն ալ կործանած ըլլալուն համար:

Դրամը գոյութիւն չունի հիմա:

Դրամի պէտքը՝ ժամանակավրէպ:

Դրամը յանուն ինչի՞ վերջապէս:
ճամբորդական ո՞ր միջոցին համար:
Կա՞ր շողեհաւ մը որ ընկղմած չըլլար:
Կա՞մ՝ շողեկառք մը, որ երկաթուղիէն
գուրս ելած ու խորտակուած չըլլար:
Մնա՞ց սաւառնակ մը, ինքնամուղ մը,
Միկ մը, որ երկնքէն ինկած չըլլար ու
շմխար:

Գիտութեան պարզեւած ճամբորդա-
կան միջոցները, որոնք երրորդ աշխար-
համարտէն առաջ անմատչելի էին հա-
մետ բանաւոր Արմէնին համար, գոյու-
թիւն չունէին այլեւս:

Կար սակայն Աստծո՛յ պարգեւածը՝
հայ երիտասարդի իր ջղուտ ոտքերը, ո-
րոնցմով Արմէն կրնայ հասնիլ հայրե-
նիք:

Ձարմանալու պատճառ չկայ երբեք:
Հայոց հին նախնիքները, Արմէնները,
քալելով չհառա՞ն Արարատի հողերուն:

Ուրիշով ժխտական է պարագան՝
նոր Արմէնին համար:

Հայրենի՛ք...

Այո՛, հոն ալ (անէ՛ծք՝ երրորդ աշ-
խարհամարտի... դերձիթէր խենթե-
րուն) աւերակ է, մոխի՛ր: Հիմա հոն ալ
լուծութիւնը կը թափաւորէ՝ անարժանագ-
ահաւորութեամբ: Բայց հայրենի՛ք է ի
վերջոյ, մոխիրն ու աւերը՝ պապենական,
սո՛ւրբ:

Ցեղայինօրէն՝ փինիկի դեր մը երբ
վերապահուած է Արմէնին, իր ինչո՞ւն
պէտք օտար աւերն ու մոխիրը...

Ճ

Համաշխարհային երրորդ մեծ պա-
տերազմը աշխարհը մեռցուց. բայց
կեանք տուաւ իսկական, իտէա՛լ խաղա-
ղութեան եւ ազատութեան, որոնք շատ
սուղ գին ունին:

Մարդկութիւնը՝ հիւլէական, միջու-
կային պատերազմ մղեց, ունեցածն ու
չունեցածը (ինքի՛նքն ալ) վրայ տալով,
վերջապէս կրցաւ վճարել այդ թանկ գի-
նը:

Եւ ահա՛

— Pax! Pax! Pax!... Խաղաղու-
թի՛ւն, ազատութի՛ւն ամենեցուն...

Ինչ հոգ թէ յետ-պատերազմեան
«ամենեցուն»ը հաղիւ մի քանի տասնակ
անձերէ կը բաղկանայ:

Ի՛նչ հոգ: Իտէալ խաղաղութեան եւ
ազատութեան հաստատումը ասելի ցան-
կալի է, քան՝ ազատ ու խաղաղ ապրիլ
չդիտցող (զիտցողին ալ զիտցածը քի-
թէն բերնէն բերել տուող) բազմաթիւ
բազմութիւնները:

Քան՝ քաղաքականութեան ու դիա-
նապիտութեան այն մեծ ախոյեանները,
որոնք աթոմական, ջրածնային բարերար
ուժերով, հսկայ գիտնականներու հրա-
շագործ էֆուսսիոններով՝ ազնիւ քաղա-
քակրթութիւն մը իր անդերազանցելի
բարձրութեան հասցնելու մարդավայել
աշխատանքին դասալիքները եղան:

Շատ ազգեր մահացան, որպէսզի
ապրող ժողովուրդները, հոգ չէ թէ մի
քանի անձերէ բաղկացած ըլլան անոնք,
վայելեն՝ գարեհո՞ւլ, գարեհո՞ւլ երազ-
ուած իսկական խաղաղութիւնը, իրա՛ւ
ազատութիւնը:

Արմէն, հիմա, անձ մը ըլլալէ աւե-
լի՝ ազգ մըն է, հա՛յ ազգը, վերջնակա-
նապէ՛ս ազատապարտած, կատարելապէ՛ս
ինքնիշխան:

Հիմա, դէպի Հայաստան տանող իր
ճամբան բաց է՝ սրտին պէտ:

Ու, մոխիրներու վրայէն, սակայն,
ճակատը՝ աստղերուն, կը քայլէ նոր դա-
րաշրջանի Արմէն Առաջինը՝ հին Արմէն-

բուհ հոգիին ու խիղճին ներս մտնելով,
կրցաւ յաջողցնել ուժը հեղեղը:

Ախոս՝...

Աշխարհը աւերուեցաւ, մարդկու-
թեան միջնաւորութիւնը իջաւ տոսնա-
ւորի:

Եւս զայն տարիննը, որպէսզի ա-
մէն բան սկսէր իջնալ, Արմէնը պատ-
մութեան առաջին էջի առաջին գլխա-
գիրէն:

Տ

Արմէն վերապրող հայ մըն է:

Երիտասարդ, անվեհեր, խելացի:

Հեռուէր երկրի մը քանդուած մայ-
րաքաղաքին մէջ, վերը՝ Աստուած, վա-
րը՝ ինք:

Տիւրք է, տիւրք:

Կը խորհրդածէ մարդկային յառա-
ջացած եւ ապա՝ չքացած քաղաքակրթ-
ութեան ու մշակութի մասին:

Կ'ափսոսայ՝ կատարելութեան լու-
սաւոր գազաթնդուն հասած գիտու-
թեան, որ, երրորդ աշխարհամարտով,
համաշխարհային յաղթանակ չհաջողա-
լով, իր շահը չարարար պարտութեամբ իր
չհաճեց:

Ինչ հրաշալի, ինչ բարեբար գիւ-
տեր կորսուեցան: Ամէն մէկը ակազե-
միա մը արժող ինչ գերհանճար գիտ-
նականներ մահացան: Քանի՜, քանի՜ մա-
տենադարաններ, համալսարաններ, աստ-
ղագիտարաններ, քանի՜ միլիոն դործա-
րաններ աշրեցան...

Ան գիտութիւնը, հազար տարուա-
նոյն եղաւ իր իսկ յաղթանակին: Նա-
խապատերազմեան յառաջացողն էր,
յիստապատերազմեան նահանջողը եղաւ,
երեսուն վայրկեանէն՝ երեսուն դար ետ
գնաց, նախնականացաւ եւ նսեմացաւ:

Ի տես համաշխարհային աւերին ու
մոխիրին, Արմէն, որպէս իրա՛ւ մարդ,
այո՛, կը տխրէ, անհունօրէն կը տառա-
պի: Խորտակուած հրթիռի մը մէկ կառ-
քին վրայ նստած՝ ազալով կը խորհրդա-
ծէ, անկեղծ վշտով կ'ափսոսայ:

«Մե՛ղք եղաւ աշխարհին...»

Սակայն, որպէս հայ, ոտքի կ'ելլէ
յանկարծ:

Հայը այսպէս է միշտ: Երբ կը սը-
ղայ, նստած չի մնար երկար ժամանակ:
Արդէն, սուգի՛ մէջ իսկ կանգնե-
լուն, իտէալ ունենալուն եւ պայքարի
գիտնալուն շնորհիւ տեսած է Հայու-
թիւնը:

Աշխարհաւոր ուժը հեղեղը չէր կրցած
աւերել Արմէնի հայկական ներաշխարհը:
Վիթխարի աշտարակներ քանդող
պատերազմը՝ քա՛ր մ'իսկ վար չէր կը-
ցած առեւել անոր իմացութեան տոկոս
կառոյցէն:

Ահա կանգնած է ան արդէն:

Մեծ սուգ ունի, վի՛շտ ունի արտին
ու հոգիին մէջ:

Իտէալ ալ ունի սակայն:

Սուգը նոր է: Բայց իտէալը՝ հին,
սուգէ՛ն աւելի վսեմ:

Արմէն հայրենիք մը ունի, պապե-
նական սուրբ հող մը, որուն վրայ ապ-
րիտ մտածեւեռումը, մանուկ օրերէն,
կայծեր արձակած է հոգիին, մտքէն
ներս՝ կրակներու ամէնէն՝ աղուորն ու
տաքը վառելով հոն:

Համաշխարհային երրորդ պատե-
րազմի համատարած հրդեհները մարե-
ցան: Բայց իր հոգիին այդ աղուոր կը-
րակը անմար կը մնայ տակուին:

Արմէն սիրած է Արմէնիան՝ խորունկ
սիրով: Երազած՝ արթուն միտքով, ան-
քուն հոգիով: Արմէնը՝ իրա՛ւ, լմա՛ն Ար-
մէն է:

Պատերազմէն առաջ՝ պետութիւն-
ներ կային, պետական բիրտ օրէնքներ
կ'իշխէին, գրամի կայսրութիւնը կը ախ-
րէր, երկաթէ վարագոյրը գծուար կը
բացուէր, ու երբ բացուէր՝ մեծ-մեծ
ծախսերու գուռը գոց չէր մնար աղքատ
Արմէնին առջեւ: Վերապէս, անկարե-
ւիտութեան հաղար ու մէկ փշենիւրով
լեցուն էր ճամբան:

Պատերազմը պետութիւն չձգեց աշ-
խարհիս վրայ: Բիրտ օրէնքները փճա-
ցան: Հրոճարակ եղան բոլոր հիւսկատո-

նետքւ ճանապարհէն, Հին Արմէններու արի հոգիով:

Եւ, իբ վճռական առաջին քայլին իսկ՝ կը սկսի յետ-համալսարհային եր-
րորդ պատերազմեան Հայոց Պատմու-
թիւնը, զոր ի դուր վերջացնել ուզած
էին նախապատերազմեան անարդար պե-
տութիւնները:

Այլեւս գոյութիւն չունէին անոնք:
Իրականացած էր բանաստեղծ Թէ-
ֆէեանի գուշակութիւնը: Թուրքը ինկած
էր, հոգն ու ժողովրդ ճանկոտելով մե-
ռած՝ զինք յաճախ փրկողներու կողմէ
զարնուելով:

Ձէին փրկուած նաեւ՝ Թուրքին եր-
բմեմի փրկիչ պետութիւնները՝ իրե՛նց
խիւ նախաձեռնած՝ Հիւլէական պատե-
րազմէն:

Բոլո՛րը, բոլո՛րը անէացած էին՝ ի-
րենց անարդարութիւններուն հետ:

Փաղաքական բոլոր տեսակի բռնու-

թիւնները բռնկած ու փոշիացած էին
բռնակալներու ոսկորներուն պէս:

Մինչ Հայը, մեծղի անդապահի մը
քայլերով, կը քալէ ահա դէպի հայրե-
նիք:

Ճամբան շա՛տ երկար է:

Բայց Արմէնի սրունքներուն ուժ
տուղ կայ, հոգիին՝ խա՛նդ:

Ուժ տուողը՝ հայրենիք հասնելու
անհո՛ւն իղձն է:

Իսկ խանդը կու գայ՝ դէպի Արմէ-
նիա տանող ճամբուն վրայ արմենուհիի
մը հանգիստելու եւ անոր հետ ազգն ու
ճամբան շարունակելու անսխա՛լ հաւատ-
քէն, որ տակաւ կը մեծնայ իր հոգիին
մէջ, ու նահապետական վեհութեան մը
գիտակցութիւնը կը շնորհէ յետ-պատե-
րազմեան մարդու իր ետին:

Թ. Չ.

Հալէպ



ՎԵՐԱԴԱՐՁ

Յ.-իմ:

Ճամբաներէն անծանօթ, կածաններէն զայարուն,
Վերագառնաս պիտի դուն, շատ աւելի ազուարցած,
Ջգջումի վիշտը սրտիդ, մագերդ արձակ հովերում
Աւազներով սիրազեղ հիմ օրերով գինովցած:


Պիտի դառնաս մահաճոռ ու ֆայլերով երերում,
Բախես դուռը մտերիմ, տրտում, լքուած հոգիիս,
Որ զերդ մեհեան մը քափուր, զամբուդ վրայ, շատ հեռուն,
Քեզ կը սպասէ անկազիմ ով յամեցող փրմուհիս:

Պիտի գրկեմ ես Ռոբէն մարմինդ ջերմադուր,
Պիտի պատմեմ քեզի ես, հոգիիս ցաւը անհուն,
Համբոյրներով հոգեսպառ, զգումսներով անամուն:

Սպասումիս մէջ երկար, վերադարձիդ կտրօտով
Պիտի հոգիս երկիւղած քեզի համար աղօթէ,
Որ դուն դառնաս ետ ինծի, իբրեւ երազ մը լուսէ:

Հոգիս այսօր լռութեամբ քեզ ըզմանում կը սպասէ...:

Ա. ԳԱԼԱՅՃԵԱՆ



ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՄԵԾՆ ՍԻՆԱՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

Գրեց՝ ՓԱՍԿԱԼ ՓԱՊՈՒՃԵԱՆ

Յաճախ օտարներուն առջեւ բարդոյթ – Գոմրիէքս – մը ունինք, – պըտտիկ ազգէնք դոնէ թիւով:

Սակայն պզտիկ ազգէնք մեր տաղանդներով – մենք ալ ունինք մեր հըսկաները – բայց առիթ չենք ունեցած զոնոնք ճանչնալու:

Մեր վարպետ Սինանը – առանց չտփազանցութեան – կրնայ մըցիլ աշխարհահռչակ ճարտարապետներու հետ: Սակայն, ցաւալին այն է որ ան ոչինչ տուաւ հայ մշակոյթին. Սարոյեաններուն եւ Թրուայաններուն պէս ան ալ հարստացուց օտար մշակոյթը, անդամ մը եւս փաստելով որ հայ ժողովուրդը կըրնայ համաշխարհային չափանիշով գեղարուեստագէտներ ունենալ:

Ժողովուրդներու պատմութեան մէջ կը հանդիպինք զարաշրջաններու, ուր, սքանչելի զուգարդիպութեամբ, անհրաժեշտ պայմաններ – հարստութիւն, շինարարութեան պահանջ եւ գեղարուեստագէտներ – կը միանան, ի յայտ բերելու ճարտարապետական կոթողներ:

16-րդ դարը եղաւ ճարտարապետութեան ոսկեդարը՝ օսմանեան ժողովուրդին:

Այդ ժամանակաշրջանին, իսլամ կամ իսլամացած օսմանները կ'ապրէին ամենափայլուն, ամենարագաւաճ, ամենաերջանիկ օրերը:

Անոնց բանականը, յաղթական բոլոր ճակատներուն վրայ, քրիստոնեայ պետութիւններուն հարստութիւնը դէպի Պոլիս կը փոխադրէին, ուր իշխաններ, իշխանուհիներ կը մըցէին իրարու հետ, կառուցանել տալով աւելի մեծ, աւելի չքեղ պալատներ, մզկիթներ, դամբարաններ:

Բայց այս յաղթանակները շարունակելու համար պէտք էին զօրաւոր բանակներ, որոնց շարքերը կը ցանցառանային պատերազմի դաշտերուն վրայ: Անոնց շարքերը լեցնելու համար, պետութիւնը կը դիմէր զօրահաւաքի – տէլլիբիմէ – բռնի հաւաքել կու տար քրիստոնեայ ընտանիքներուն զեղեցիկ եւ առողջ երիտասարդ տղաքը. այս տէլլիբիմէներն էին որ կը կազմէին պետութեան ամենաընտիր բանակը՝ ենիլլերիները:

Ենիլլերիներու շարքէն եկած գեղարուեստագէտներէն մէկն էր Մեծն Սինան,

որ կերպով 16-րդ դարում օսմանեան
հարապատկանութիւնը:

Այս յօդուածին մէջ պիտի աշխա-
տիմ:

ա. Հուսարանի տնոր ծագումը:

բ. Տեղեկութիւններ տալ տնոր կեան-
քին մասին:

գ. Բացատրել տնոր քանի մը գլուխ
գործողները եւ մասնանշել տնոնց գե-
ղարուհատական արժէքը:


Ա. ՍԻՆԱՆԻՆ ԾԱԳՈՒՄԸ

Մինչեւ այս վերջին տարիները, ոչ
մէկ վստահելի փաստ կար տնոր ծագման
հարցը լուսարանող:


Սմանք կ'ըսէին թէ տն Աւստրիացի
էր, Պուլկարացի կամ Կրետացի: Շատեր
կը պնդէին տնոր Հոնգարացի ըլլալուն
վրայ:

Բրիտանական Մեծ Հանրագիտարա-
նը - 1910-1911 - թ., Սինանին հայ ըլլալը
կը յայտնէր, բայց անժխտելի փաստ չէր
տար:

Երեսուն տարիներ առաջ Թուրք
պատմաբան մը՝ Ահմէտ Բէֆէ, կը



ԱՅԱ-ՍՈՖԻԱՅԻ ՅԱՏԱԿԱԳԻՆԸ



ԱՅԱ-ՍՈՖԻԱՅԻ ՆՈՐՍԸ

հրատարակէր 50 վաւերագրեր Սինանի մասին: Անոնց թիւ 22-ը հրամանագիր մըն է հին թրքերէնով, որ լոյս ահաւ թուրք թարիխը էնտումէի Մէհմուտաւը հանդէսին մէջ (նոր շարք, Ա. հատոր, 5-րդ թիւ, Յուլիս 1930, Մայիս 1931 էջ 10):

Ահա թարգմանութիւնը այդ հրամանագրին:

«Ազատագիր դատաւոր Հիւսէին Ջաուշին, բարձրէն կ'արձակուի հրամանայէս — ներկայիս արքունի ճարտարապետներուն գլխաւորը մեզի նամակ ուղարկելով՝ կեսարիոյ հպատակներուն, կիպրոս տեղահանութեան հրովարտակով հրամայուած ըլլալուն, իր բնակավայրը Աղընաս անուն գիւղի ժողովուրդը եւ ուրիշ գիւղ բնակող ազգականները Քըշի, Պէօրի, Գիւլի մէջ Տիւկէճի Սարը օղու եւ Իւրկիւզ գեղէն Ուլիսա եւ Քօտ նշան անուն հպատակներուն դէպի կիպրոս տարագրութեան համար ներման խնդրագիր մատուցուած ըլլալով, վերոյիշեալին (ճարտարապետին) բնակավայրը եւ զոչ յիշեալ գիւղի մարդիկը եւ ազգականներէն յիշատակուած հպատակներուն, կիպրոս աքսորանքէն ներում չնորհեցի եւ նաեւ հրամայեցի, որ եթէ այս գիրս հոն հասնելուն, վերոյիշեալին վաղուց բնակած յիշեալ գիւղին բնակիչներէն եւ ազգականներէն եղող յիշեալ հրապատակներուն կիպրոս աքսորի համար արձանագրութիւն ալ կայ տոմարներուն մէջ, ջնջուի եւ կիպրոս աքսորութիւններէն է ըսելով նեղութիւն չտուի, եւ այս բարձր վճիռս պահեստի տոմարին մէջ արձանագրուելէ յետոյ ձեռքերին հասցնէք:

Վարպետ Մէմէտի յանձնուած 7 բամազան 81 (1573) տես Գարամաճեան գրպանի տարեցոյց 1932, էջ՝ 202-203:

Ինչ կրնանք եզրակացնել այս հրամանագրէն:

Երբ Սուլթան Սէլիմ Բ. գրաւեց կիպրոս կղզին 1571-ին հրամայեց որ ժողովուրդը զրկուի հոն՝ երկու նպատակի համար:



ՍԻԻԼԵՅՄԱՆԻԷ ԳՄՐԵԹՆԵՐՈՒ ՏԵՍԱՐԱՆԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

ա. կղզին բնակչութիւնը բաղմայընել

բ. Անոր Յոյն բնակչութեան աղքատութիւնը նուազեցնել

Ուստի կղզի փոխադրուելիք ժողովուրդը պէտք է յոյն ըլլար:

Հոն կը փոխադրէին պատիժի արժանի թուրքեր կամ քրիստոնեայ — ոչ յոյն — գերեւեք, հայեր:

— Հրամանագրերը կեսարիոյ շրջանին է ուղղուած. կեսարիոյ շրջանի այդ ժամանակի բնակչութիւնը թուրք, յոյն եւ հայ էր:

— Հրամանագրին մէջ յիշատակուած յատուկ անունները հայու անուն են, ինչպէս:

1. Քըշի, կեսարական բարբառով փոքր կը նշանակէ:

2. Ուլիսա, ինչպէս Մարիցա, Նուրիցա, կեսարիոյ մէջ գործածուող անուններ են:

3. Քօտ նշան
— Քօտ կեսարական բարբառով կը նշանակէ խոշոր:

— Նշան Պահլաւերէն կամ Պարսկերէն բառ է. բայց հայոց մէջ է որ իբր յատուկ անուն կը գործածուի:


Ուրեմն Սինանի ազգականները հայ էին. հետեւաբար Սինան հայ էր ծագումով, բնակավայրը, կարելի է ծննդավայրն այ Աղբնասս պիւզն էր, որ կը դրոշմէր Կեսարիոյ Հիւսիս-արեւելքը, Աթաթուրք այդ պիւզը Սինան քնոյ անուանեց:

Ձմռանը Եւել որ մինչեւ այսօր, թուրքերը եւ անոնց բարեկամները կը ջանան լուռ անցնիլ այս անժխտելի իրողութեան վրայէն:

Բ. ՍԻՆԱՆԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Սինան պիտի է ծնած ըլլար 1490-ական թուականներուն, եւ 1512 թուականին Պոլիս եկած՝ ուրիշ տէլէիւրմէներուն հետ:

Հետ տէլէիւրմէներու սովորութեան՝ ան ապրած էր երկու կամ երեք տարի, իսկած հողագործ ընտանիքի մը մօտ, հետ իսլամացած եւ աշխատելով հողագործներուն հետ՝ վարժուած չարքաշ կեանքի:



ՍԻՆԱՆԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՆԱՐԷՆ

Պոլիս հասնելուն, տեղաւարտեցաւ Իպրահիմ փաշայի պալատին մէջ, Աթմէյատան. հոն մնաց երեք տարի, սորվելով զրեւ կարգաւ, եւ արհեստ մը՝ աստղագործութիւն. Սինան ճանչցաւ ժամանակի աչքառու ճարտարապետները՝ Աճէմիսա, Քայրէտտին: Իր դաստիարակութենէն ետք ան մտաւ բանակ եւ քան երկար տարիներ թափառեցաւ օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ:

Սուլթան Սէլիմ Եւփուզի բանակին մէջ, իբր պարզ պիւնուր, մասնակցեցաւ Պալտրանի արշաւանքին, բանակներուն հետ յաղթական մասա թուրքի, պտտեցաւ Պարսկաստանը:

Երկու տարի վերջ զինք կը գտնենք Գահրէ, Բիտանիէի պատերազմէն ետք:

Սուլթան Սելէյման Գանուշի բանակին հետ ան այցելեց Պելլիստ եւ Հընոզոս եւ առաջին անգամ ըլլալով ցոյց տուաւ իր կարողութիւնը՝ Բրուտ գետին վրայ 13 օրուայ ընթացքին կամուրջ մը շինելով:

1526 թուականներուն զայն կը տեսնենք բարձր տնտեսանի սպայ: Եսեա պաշը (Fevziye):

Լութֆի փաշայի հրամանին տակ իբր կառուցանող սպայ (Oftisiye) տր ժէնի) հետեւեցաւ բանակին եւ վանայ լիճին վրայ շինեց նաւակներ, բանակներու փոխադրութեան համար, այցելեց Նաբեկայ վանքը եւ Աղթամարի տաճարը:

Երբ վերադարձաւ Պոլիս, արժանացաւ ենիչերիներուն ամենաբարձր տիտղոսին՝ Աղա կամ Հասաքի:

Լութֆի փաշային եւ Քայրէտտին Պարպարոսին հետ գնաց Գորֆու եւ տեսաւ Հարաւային Իտալիոյ քաղաքները: Արդեօք կրցա՞ւ ուսումնասիրել իտալական վերածնունդի ճարտարապետութիւնը:

Այս երկար տարիներու ընթացքին՝ Սինան ապրեցաւ օսմանեան բանակներուն ամենափայլուն շրջանները: Մասնակցեցաւ անոնց խանդավառութիւններուն, զուարճութիւններուն, քայց եւ

այնպէս ամբողջ այս շրջանին ան այցե-
լեց շատ մը զեղարուեստի կեդրոններ,
Յաճախ ան երկարօրէն կը գիտէր ճար-
տարապետական կոթող, կ'ուսում-
նասիրէր, կը բաղդատէր զանոնք: Անոր
միտքը կը զարգանար, ճաշակը կը նըր-
բանար:

Անատուրի մէջ Սելճուքեան ճար-
տարապետութեան կը ծանօթանար, Գարակապետ կամարները, զմբէթները
տեսնելով կը սքանչանար:

Արտաշէսներու եւ Օմայաւներու
արքայական ճարտարապետութենէն Սի-
նան կը տիրանար զուեւորումի պաշտ-
նիքներուն: Եղիպտոսի Մեմլուք Սուլ-
թաններու հրաշակերտներուն առջեւ իր
զեղարուեստագէտի զգացումները թռիչք
կ'անէին դէպի ապագայ: Ինչպէս կը
զբէր իր բանաստեղծ բարեկամը՝ Սալի-
«Մինակը կը թափառէր ժամերով,
բայց մեղուի նման կը ծծէր հիւթը ա-
մէն ծաղիկի»:

Իրօք մշուշը արդէն փարատած էր
անձին շուրջ: Ենթերիններուն ազան էր
ան, բայց իր զեղարուեստագէտի համ-
բաւեւ ալ հա չէր մնար:

1535-ին Այսա փաշա, Սուլթանին
Մեծ վեզիրը, կը մահանար: Ինչպէս
նաեւ իր ճարտարապետը՝ Աճեմ Իսան
ալ մեռած էր արդէն:

Լուիֆֆի փաշա Սինանը ներկայա-
ցուց Սուլթանին որ, յիշելով իր արժա-
նատը ծառան, զայն անուանեց իր ճար-
տարապետը:

Այս թուականին կը սկսի Սինանին
փայլուն ճարտարապետի ասպարէզը, որ
կը տեւէ 50 տարի, տալով օսմանն ակե-
տութեան 300-ի մօտ շէնքեր ամէն տե-
սակի, — մզկիթ, դպրոց, հիւանդանոց
եւն:

Այդ շրջաններուն զինք կ'անուանէին
«զարուս երկրաշարժ ճարտարապետը»,
«զարուս Ուքլիտէսը», Մեծն Սինան:
Կարգ մը կտակներու մէջ կը կար-
դանք իր տնունը իբրեւ թաղաւորներու
ուսուցիչ: Իրօք Սինան կը դասաւանդէր
նոս պահչէ եւ վեֆա (ձաֆէր Զէլէյի):
Արքայական ընտանիքի շատ մը զաւակ-

ներ հոն կը յաճախէին իր դասերուն եւ
շատ հաւանօրէն Սինանէն մաթեմատիքի
եւ ճարտարապետութեան դասեր առած
ըլլան՝ Սելիմ Բ., Մուրատ Գ. եւ Մէհ-
մէտ Գ., երբ զահաժառանգ իշխաններ
էին:

Սուլթան Սելիմ Բ. օրով Սինան
կառուցանեց, 1564-ական թուականնե-
րուն, այսինքն 71 տարեկանին, Սելի-
միէի մզկիթը: Այս իր վերջին գործը ե-
ղաւ:

Կ'ուղեմ մասնաւորապէս շեշտել ա-
նոր նկարագրին քանի մը յատկանշական
զիծերը: Անվախ, խիզախ մարդ էր:
Հակառակ Ենթերիններու այն միջավայ-
րին ուր ան մնաց երկար տարիներ, հա-
կառակ իր յաջողութիւններուն եւ իր
համբաւին, հակառակ իր հակայ հարթ-
տութեան, ան մնաց խղճամիտ, համեստ
եւ պարզ, իր ընկերներուն հետ, միշտ
պաշտպան՝ իր օգնականներուն:

Իր մահէն չորս տարի առաջ ուխ-
տագնացութեան դնաց Մեքքէ, եւ վե-
րադարձին զործին գլուխը շանցաւ ալլ-
եւս: Իր աշակերտը Մէհմէտ աղա իրեն
յաջորդեց: Ահա թէ ինչ կը գրէ Սալին
այս մասին:

«Մէքքէէն վերադարձին Սինան շատ
ծերացած էր. կը բնակէր Սիւլէյմանիէի
մօտ: Արեւոտ օրերը ան կը պտտէր միշտ
տունձին, իր մզկիթին շուրջ:

ճիւղներն ու ծերը հեռացած էին իր-
մէ, բայց ան չէր կորսնցուցած իր նա-
յուածքին փայլը...»

Կը մեռնի 1584-ին, ապրած ըլլալով
98 կամ 100 տարի...

Թաղուած է Սիւլէյմանիէ մզկիթին
մօտ. դամբարանին պատուհաններուն
վրայ Սալի փորագրել տուած է հետեւե-
նալ տապանագիրը.

«Ճարտարապետն եղաւ ամ Սուլէյմանիմ
Սուլթան,

երկնքին մէջ՝ Նիք Կաթինի մման
Պայծառացուց կայսրութիւնն օսմանեան
Եւ ալիք մը յորդանոսամ
Դազկեցաւ քաղաքն Սուլթանական
Յաւիտեանականութիւն չէ տրուած
որդւոյն մարդկան»:

Գ. ՄԵԾՆ ՍԻՆԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Մեծն Սինանի անունը կորսուած պիտի ըլլար, ինչպէս կորսուած են հազարաւոր միւս Ենիշերիներուն անունները, եթէ անոր գործերը, որոնք կ'ապրին չորս դարէ ի վեր, եւ պիտի ապրին դեռ երկար դարեր, կենդանի չպահէին անոր համբաւը:

Երբ կը թերթենք զբոյսի՝ թեզէ-րէթ-իւլ-էպիյէ, որուն մէջ ինք արդէն ցուցակադրած է իր գործերը, կը տեսնենք թէ ան կառուցած է հետեւեալ յուշարձանները.

21 մեծ մզկիթներ

55 զպրոցներ (մետրիսէ)

50 փոքր մզկիթներ (մեսհիտ)

33 բաղնիքներ

19 դամբարաններ

եւ բազմաթիւ հիւանդանոցներ, կամուրջներ, ջրուղիներ:

Այս յուշարձանները ցրուած են օսմանեան կայսրութեան բոլոր սահմաններուն մէջ:

Կարեւորագոյնները կը գտնուին Պուսոյ մէջ, զիւրի գործոց մըն ալ կը գրտնուի էտրնէ, իսկ հալէպի մէջ ալ կը գտնուի Քոսրուլիէ, Դամասկոսի մէջ՝

տէրվիշներու զպրոցը եւ Սուլթան Սելիմի մզկիթը:

Գործը հսկայական է, արժէքներն ալ՝ հսկայական: Այդ գործերէն մէկն իսկ բաւական պիտի ըլլար անմահացնելու արուեստաշէտ մը:

Սինան զերծ չմնաց քննադատութիւններէն:

Վերջին տարիներս՝ կ'ըսուէր թէ իր գործերը պարզապէս ընդօրինակութիւններ են Այա Սոփիայի:


Ճարտարապետական կոթող մը դատելու համար՝ պայման է չմոռնալ իրողութիւն մը. ոճը չէ անոր գեղարուեստական արժէքը:

Դարեր շարունակ պիտի յիշուին Իկոսինոս եւ Կալլիկրատէս ճարտարապետները՝ Աթէնքի Պարթենոնին, Իդիոտը եւ Անթեմիոս, ճարտարապետները Այա Սոփիայի, Պրամանդէ եւ Միքէլ Անճելօ, ճարտարապետները Ս. Պետրոսի:

Բայց Պարթենոնէն առաջ՝ զորական ոճով տասնեակ մը տաճարներ կառուցուեցան իրարմէ ճիշտ տարբերութեամբ. Այա Սոփիայէն եւ Ս. Պետրոսէն առաջ հարիւրաւոր եկեղեցիներ շինուեցան, նոյն ոճով՝ գմբէթ մը չորս սիւներուն վրայ: Ո՞վ կը յիշէ սակայն առաջին

MOSQUEE DE MIHRIMAH

VERS 1550



ՄԻՀՐԻՄԱ ՍՈՒԼՔԱՆԱԿԱՆ

փորձողներուն անհանձնելը:

Վերոյիշեալ ճարտարագետները կրօցան այս ոճը կատարելագործել եւ մնացին անգերազանցելի:

Կարեւորը զեղարուեստագէտին այդ ոճին վրայ դրած անհատականութիւնն է:

Գմբէք մը՝ չորս սիւներու վրայ՝ ոճ մըն է ճարտարագետական. այս ռեք կարծես ամենամասնականն, ամենախապուրիչն է անցեալի ճարտարագետութեան:

Շատ ազդերու ճարտարագետներ փորձեցին զայն:

Ս. Պետրոս՝ Հռոմի

Պանդէոն՝ Փարիզի

Ս. Պօղոս՝ Լոնտոնի

Գափիթոլը՝ Վաշինկթոնի

բայց ամենայայտնի, ամենաազանչելի, ամենակատարեալը Այս Սոփիան է՝ իր ներքին կառուցուածքով:

Մենք Սինան որ ամէն տաւառ կը դմայէր տեսնելով զայն, չէր կրնար ազդուած չըլլալ անկէ, Այս Սոփիայէն: Ընդօրինակե՛ց զայն: Ոչ:

Այս Սոփիան ներշնչարան եղաւ անոր, ուստի յաճախ պիտի բաղդատեմ Սինանի գործերը Այս Սոփիայի հետ:

Ի՞նչ է Այս Սոփիան, եւ անոր ծրարակերը:

Եկեղեցի մը, բայց աւելին, եկեղեցի մը՝ ամբողջ Բիզանդական կայսրութեան:

Յուստինիանոս որ զայն շինել տրւաւ 535-ին, ուզեց, որ ըլլար համադրութիւն մը հելլենական ճաշակի ներդրութեան, եւ արեւելեան ազդերու ճաշակին Մեծ Դիօնիօսէն, վեհաթեոսն եւ յանդրգնութեան:

Կողմնակի դասերը — նաւերը — եւ վերնատունները կարենային պարունակել հազարաւոր այցելուներ, զաւտուներէն խուփած, միանալու համար մայրաքաղաքին հաւատացեալներուն:

Մէջտեղի դասը արքայավայել, որուն նմանը տեսնուած չըլլար:

Բացման օրը, ինքը՝ Յուստինիանոս, չըլլապատուած իր պալատականներով՝

պիտի մտնէր արքայական գոնէն եւ չըքեղարար յառաջանար մինչեւ խորանը, ուրկէ ան պիտի դռնէր՝ «ՍՈՂՈՍՈՆ ՅԱՂԹԵՑԻ ՔԵՅԻ»:

Այս տեսարանը եզակի՝ պէտք էր դրոշմուէր ամբողջ ներկաներուն վրայ, եւ յիշուէր ապագայի օրոշողներուն կողմէ:

Իդիոտը եւ Անթեմիոս հասկցան այս ծրարկը եւ շինեցին հսկայական կեդրոնական դաս մը (նէֆ) 77 մ. երկարութեամբ, ծածկուած 31 մ. արամապիծ ունեցող զմբէթով մը:

Բայց մզկիթի մը ծրարկըր տարբեր է եկեղեցիէն:

Մզկիթը խոշոր սրահ մըն է, ուր հաւատացեալները կը հաւաքուին աղօթքի համար. հոն արքան եւ պարզ ժողովուրդը մէկ շարքի վրայ կը կանգնեն:

Մզկիթէն կը պահանջուի, որ ամէն աղօթող տեսնէ եւ լսէ իմամը, որպէսզի կարենայ հետեւիլ անոր շարժումներուն:

Ասոր համար երկար դառ մը անյարմար է. սրահը լայն եւ կարճ պէտք է ըլլայ: Ուստի անհրաժեշտ էր պատշաճեցնել եկեղեցական Այս Սոփիայի ոճը, վերածել զայն նոր ճարտարագետական կառուցուածքի:

Սինանի 50 տարուան աշխատանքը պիտի կայանայ այս խնդիրը՝ լուծելուն մէջ, ուր պիտի երեւին իր քաղմակողմանի, անսպառ երեւակայութիւնը եւ տաղանդը:

Ա. ԵԱՀԱՅԱՏԵԻ ՄԱԿԻԹԸ

Սուլթան Սուլէյման խեղդել տուած էր իր երկու զաւակները, Շահապէ Մէհմէտը եւ Մուսթաֆա ճիհանկիւրը իր կնոջ Թոքալանի (Թոքսըլան) դրդումով, որպէսզի իր որդին Սուլթան Սելիմ Բ. ը իշխէր:

Սուլթանը, զղջալով իր ըրածին վրայ, շինել տուաւ այս մզկիթը, նուիրուած իր երկու զաւակներուն:

Մզկիթը մեն քառակուսի սրահ մըն

բուժեամբ ճակատոր եւ ինչպէս յաջողած է խուժարի միօրինակութենէն:

Այն հակայ պատերը, որոնք կը բռնեն եւ կը հակակշռեն զմրէթի ճնշումը՝ ծածկուած են փորթիքներու մէջ, որոնց խմբաւորումը կը ստեղծէ կշռոյթներ, ինչպէս 2. 3. 2. 3. կարծես դաշնաւորուած երաժշտական էջ մըն է:

Լայն քիւ մը կը պսակէ այդ փորթիքները իր զօրաւոր շուքովը եւ կը սահմանէ այս ճակատին վրայ եւս հաստացնելիս պատկանող մասը:

Բայց Միւլէյմանիէն իր ամբողջ առաւելութիւններով դեռ շատ մօտ է Այս Սոֆիային:

Սինանի պէս արուեստագէտ մը չէր կրնար զոհացում գտնել այդ շափով:

Պ. ՄԻՆԻՐԻՄԱ ՍՈՒԼԹԱՆԻՆ ՄԱԿԻԹԸ.

Կառուցուած 1558-էն առաջ, Միւլէյման՝ Սուլթան Սուլէյմանի ամէնէն սիրելի աղջիկն էր:

Իշխանութիւն կը սերէր կեանքը, լոյս ալ, ազատութիւնը, ուրախութիւնը եւ զուարճութիւնը:

Սինան ուղեց շինել մզկիթ մը, որուն մէջ աղօթողը չզոյալ թէ չըջապատուած է պատերով:

Յատակազիծը կը բաղկանար 23 մ. ճառակուսի ծածկուած զմրէթով. տղ ու ձախ զասեր որոնք կու տան սրահին ուղղականիւն ձեւ մը, աւելի լայն ճան երկայն ձեւը՝ որ կը փնտռուի իսլամական սրահին համար: Ի՞նչ կը ներկայացնէ ան տարածութեան մէջ: Այն ճարտարութեամբ որուն զազտները գիտեն մեծ վարպետները միայն, Սինան կը ցաւ պատկերացնել այս շէնքին մէջ իշխանութիւն ամբողջ նկարագիրը:

Ճարտարապետութիւնը վերածուած իր վերջին երկրաշափական պարզութեան, կ'արտայայտէ գուրսէն ներքին տարածութիւնը առանց որեւէ զարդարանքի:

Գմրէթին չափաւորութիւնը, կամարներուն նորութիւնը, սիւնները, ճակատամէջերը (թիւրքմէ) իրենց բազմաթիւ

պատուհաններով կ'առնեն լոյսը, կեանքը սրահին մէջ, եւ կը կազմեն ամբողջ զարդարանքը որոնք բաւական հզած են ստեղծելու զեղարուեստական սքանչելի կոթող մը:

Բայց Սինան գիտէր նոյնպէս հակառակը ընել: Ռուսթոմ փաշա, Միւլէյմանի ամուսինը խոստ, կծծի, նիւթապաշտէր: Պատմիչները կ'ըսեն թէ երբեք ժողովրդ չէր տեսներ անոր երեսին վրայ: Սինան անոր համար շինեց մզկիթ մը (Ռուսթոմ փաշայի մզկիթը) մութ, տըխուր, վարձու խանութներուն վրայ. կ'արժէ այցելել պայն, մէջը գտնուող յախճապակներուն համար:

Դ. ԻՊՐԱՀԻՄ ՓԱՇԱՅԻ ՄԱԿԻԹԸ.

Միւլէյմանի զբան մօտ, 1551-ին շինուած այս պորժը նմոյշ մըն է Սինանի նորը նկարիչի ճաշակէն: Պաշտօնական աշխատանքներն են այդ զարդարանքները, որոնց ամենակատարեալը այս մըլէթի թիւնն է:

Այս մզկիթը իր յատակապնդով իր գլուխ պորժոցէն առաջ վերջին փորձն է: Այս յատակապնդին մէջ միակ նորութիւնը այն է որ փոխան չորս սիւններուն՝ վարպետը բարձրացուցեր է իր զմրէթը ութանկիւնի մը զազաթներուն վրայ: Սակայն ինչ որ անկարելոր նորութիւն մը կը կարծուի, հանճարեղ գիւտ մըն է, որ իրեն յօրինել տուաւ Մէլիմէթի Մզկիթը:

Ե. ԱԷԼԻՄԻԷ ՄԱԿԻԹԸ

45 տարուայ աշխատանք եւ փրկարարութեամբ պէտք եղած էր Սինանին ձեռնարկելու համար իր պուրի գործոցին: Երեսուած Սուլթան Սուլէյման Գաշուսի որդին Սուլթան Ալիմ Բ. ի համար:

Սինան կ'ըսէր.

Շահգաւտ իմ աշակերտի գործն է,

Սիւլէյմանի զաւթայի գործն:

Սէլիմիէ իմ գլուխ գործոցն է:

Ամենամեծ զմրէթը զոր շինեց իր

կենսաբերն մէջ՝ Սէլիմիէինն է, 31,50 մ. տրամագիծով ան կը բարձրանայ 8 սիւններուն վրայ գետեղուած ութանկիւնի մը զապարհներուն. եւ վարպետը գտած է խաւովական աղօթքին ամէնէն յարմար սրահը:

Այս մզկիթին առիթով պիտի տեսնենք Սինանին քանդակագործի տաղանդը: Ամբողջ շէնքը գունաւոր քարերէ շինուած է. արեւմտեան ճակատին վրայ փորթիքները ողնափայտի ձեւով շինուած են, դունաւոր կամարաքարերով կամարները միեւնոյն բացութիւնը շուրհին եւ այս մասը, միշտ շուրհի մէջ է եւ արեւին ու անձրեւէն պաշտպանուած մարդոց կը պատկանի:

Ատկէ քիչ տարածութիւնը կ'ընթէ: Ութ սիւնները, որոնց վրայ կ'ընած է զմբէթը, դուրսէն վերջաւորուած են ութը մոմերով, հաւասարակշիռու գլմբէթին ճշուով:

Միւս կողմէ ալ անոնք կ'արժեւորեն կեդրոնական զմբէթը:

Սինանը արձանագործի մը պէս քանդակած է անոր արտաքին կերպարանքը, պարտադրելով ուղիներ արեւին ճառագայթներուն, որոնք կը ցոլացնեն լոյսի շողեր, բազմաթիւ ցցուն կէտերէ:

Այս կէտերը կը լուսաւորուին, կը մարին արեւածաղէն մինչեւ արեւամուտ, մասնակցելով արեւին շրջանին, անոր կեանքին:

Սէլիմիէի մինարէն 83 մ. բարձրութիւն ունի: Էյֆէլի աշտարակի շինութեանէն առաջ ամենաբարձր շէնքն էր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ինչպէս տեսանք, Սինանի գործերը ինքնուրոյն են եւ ոչ շարունակութիւնը՝ բնականօրէն ճարտարապետութեան:

Սինանին գործերը կ'արժեւորուին

իրենց անհատականութեամբ, յատկապէս զըմբուսն աղատութեամբ եւ խիղախ աղբարանութեամբ. իրենց մեծափարթամ գրուածով սքանչելիօրէն կ'արտայայտուին, այնպէս որ Փրանսացի փրոֆ. Ալպէր Կապրիէլ, գրելով իր մասին, կ'ըսէր.

«Սինան օսմանեան ճարտարապետութեան ամենացայտուն գէմքն է»: Կիրլիզ աւստրիացի գիտնականը գայն կ'անուանէր — Արեւելքի Միքէլ Անջելօն:

Ես չեմ կարծեր թէ Սինան առիթը ունեցած ըլլայ իտալական վերածնունդը ուսումնասիրելու, բայց անոր գործերուն մէջ մենք կը տեսնենք վերածնունդի մեծ վարպետներուն հոգին եւ զապարհները:

Կասկած չկայ թէ իր ներշնչումը կը բխի Այս Սոփիայէն. ան ուսումնասիրեց բիզանդական շինութիւնները, ըմբռնեց անոնց յատկանշական նկարագիրը՝ յանդգնութիւն եւ վեհութիւն. ան սքանչելիօրէն պատշաճեցուց, յօրինեց նոր յատկագրեր օսմանեան մզկիթին. սն նմանեցաւ վերածնունդի վարպետներուն որոնք կը ներշնչուէին անցեալէն եւ կը ստեղծէին նոր գործեր:

Սինան հայը, կրթուած, զարգացած Սուլթաններու միջոցաւ եւ Սուլթաններուն համար, գրողմեց Պոլսոյ բնական գեղեցկութիւնը մարդկային անմար հանճարով՝ ճարտարապետական կոթողներով:

Առաւօտները, երբ մայրաքաղաքը կ'արթննայ, արեւին առաջին շողերուն մէջ Ոսփորէն բարձրացող մշուշը կը խնկէ, վեհափայլ զմբէթաւոր մզկիթները եւ անոնց մինարէները եւ այս զմայլելի տեսարանը քաղաքին, իբր յատկանշական երեւոյթ, գրողմեց է Մեծն Սինանի հանճարով եւ կը մնայ անմոռանալի:

Փ. Բ.

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ

«ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ» Ը

(ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՏԵՍԱՆԿԻՒՆԷՆ)

Պատմությունը.— Ներք.— Թատերական սեստամենները.— Յեստամն առ սեստամն թննություն.— Յուցանեման սեստամենները, միւրք զարգացնող սեստամնը, զարգացնակողք, ճար հաւասարակութեանը.— Թատերական տրուեռի բարձրագոյն զլիսաւոր բերիններ յատերակին [Մ]ութեան պակաս, կերպարներուն կաշկանդումը, աստիճանական զարգացումը յառաջացող պատմութեան մը պակասը, կապակցումի եւ բնականութեան որոշ պակասներ, սեմպուլիզմի եւ իրականութեան տեղ տեղացող կապակցում, ժամանակներու տարբերութեան տաք բերած զփութարարութիւնները, կեդիմակին մեքի սեստական միջամտութիւնները.— Թատերակին դրական կողմները.— Խճի փոփոխութիւններ աւելի ուժեղ տիտի բնէին թատերակը.— Հին Աստուածներու արժէքը ներկայ իր ձեւին մէջ:

ԴՐԱԿԱՆ ՏՈՒԵԱՆՆԵՐ

Թերիններու զոյութիւնը չի կրնար նսնմացնել արժէքը Հին Աստուածներուն: Թատերական իսկ տեսանկիւնէն մօտենալով հարցին, կարելի է տեսնել, որ եթէ չկայ ամբողջութիւն մը, միութիւն մը նիւթի կառուցուածքին մէջ՝ կայ ամբողջութիւն մը հեղինակի մտածողութեան մէջ, ըսել ուզածին մէջ, որ կը կերպարանաւորուի նիւթին աւարտումէն ետք, մտածումներու բերեցողացումով մը, տեսակ մը սուզումովը ծանր մասերուն, գէպի յատակը մեր մտածումներն:

Անկախաբար նիւթի ամբողջութեանէն, կան մէկը միւսէն գեղեցիկ տեսարանները, որոնք կը բերեն հաստուածական վայելք մը այդ, որը սակայն թատերական վայելք է, եւ կը փոխարինէ ամբողջութեան եւ միութեան վայելքը: Թէեւ անւղղութեամբ կարճ, սակայն ամէն մէկը Շանթի տեսարաններէն, կը կազմէ առանձին ամբողջութիւն մը, առանձին թատերակի մը համը կու տայ

հանդիսատեսին. ուժեղ կառոյցով, ուժեղ զազաթնակէտերով: Եթէ չեն առաջանար նոր սպասումներ — ինչ որ նիւթին աստիճանական զարգացումը պիտի առաջացնէր — անմիջական լարում, եւ անմիջական գոհունակութիւն, բաւարարութիւն կը պատճառեն իրար յաջորդող տեսարանները, իրենց գեղեցիկ կառուցով եւ ուժգնութեամբ:

Յաջող ընտրութիւն մըն է, թատերական տեսակէտէն, կողմի մը ընտրութիւնը որպէս վանք, անապատ: Հակադրութիւնը անապատ բառին եւ կողմին շրջապատող կեանքին, աւելի եւս ուշապրաւ կը դարձնեն զանազան տեսարաններու մէջ, զանազան անձնաւորութեանց մէջ տեղի ունեցող, բնազդականին եւ զազափարականին պայքարը: Կողմի մըն է ահա, աշխարհէն կտրուած, եւ փոխարեքարար, եւ նաեւ բառին իրական, շօշափելի առումով: Ըստ մը միայն կը կապէ զայն ցամաքամասին, ուխտաւորներու պայմանն այդ երեք օր է միայն. ահա ամէն կարելիութիւն առանձնանալու, ներսուզուելու, աղօթե-

լու հոգիի ու մարդու փրկութեան հա-
մար: Եթէ, հակառակ այս նպատակա-
պայմաններուն, հոս եւս կը թափանցէ
կեանքը, կը գերէ հոգիներ, կը նշանակէ
ճար չկայ, յաղթական են «Հին Աստ-
ուածները», ամէն տեղ:

Յաջող կատարուած է նաեւ խօս-
նակներու ընտրութիւնը — կը գոռաբա-
նանք ըսելու «տիպարներու» ընտրութիւ-
նը, քանի որ տիպարները չեն պահուած
անհրաժեշտ ազատութեան մէջ, եւ հե-
ղինակին տեւական ճշդումը կը կրեն ի-
րենց ուսերուն եւ մտածումներուն վրայ
— իրենց այլազանութեամբն իսկ ապա-
ցուցանելու համար հեղինակին մտածո-
ւթիւնը: Այդ ձեւով, կարելի կը դառ-
նայ հարցը քննել եւ ցուցաւանել ամէն
տարիքի, եւ զարգացման տէր մարդոց
միջոցով՝ երիտասարդ, անփորձ, բա-
նաստեղծական խոռոչուածքով արեւան.
միջին տարիքի, բարձր բանականու-
թեամբ ու երկաթեայ կամքի տէր վա-
նահայրը. ծերունի, կեանքը տեսած,
կկանքը գրեթէ ժողոված, բանականու-
թենէ սարսափ ունեցող վանական մը, որ
փորձանքը կը գտնէ շատ կարողուն
մէջ. գետնաքար, միայն փորին մասին
մտածող Զաքարիա վանական մը. մոլե-
ռանդ, մոլեռանդութեամբն իսկ կոյր,
հաւատաւոր վանական մը, բուսական
յատաշացած տարիքով: Ասոնցմէ ամէն
մէկը գեղարուեստական ներկայութիւն
մըն է թատերակին մէջ, ու գեղարուես-
տական պատասխան մը՝ հեղինակի տե-
սակէտներուն դէմ առարկութիւն ունե-
ցողներուն:

Դեռ կայ ստեղծագործութեան ապա-
ւորիչ արուեստը «Հին Աստուածներուն»
մէջ: Ամենացուն միջոցը ազդելու, գե-
ղեցկօրէն ցուցահանելու, հակադրու-
թեան միջոցն է, երբ անընական ու ար-
ուեստական չեն դարձածուած հակա-
դրութիւնները: Շանթի «Հին Աստուած-
ներուն» մէջ, եթէ անընական են երբեմն
անասարանները՝ համեմատած ամբողջու-
թեան ու նիւթին հետ, եթէ անիրական
կամ անկարելի կը թուին երբեմն այս

կամ այն տեմաւորութեան մտածումն
ու ապրումը, երբեք անընական չեն դո-
ւածուած հակադրութիւնները՝ աշխարհն
ու անապատը. ձերմակաւորն ու սեւա-
ւորը. կեանքի շնորթիւնն ու վանքի խա-
ղաղութիւնը. վահագնի տաճարին խը-
րախնայնն ու աղմուկը ու տաճարին մէջ
մրմնջացող աղօթքի փչրանքները. բը-
նութիւնը՝ իր ծովերով, փոթորիկնե-
րով եւ խուցերու պաղ առանձնութիւնը,
հանգարտութիւնը. վանահօր բանակա-
նութիւնը եւ արեղային բանաստեղծու-
թիւնը. միայն ու զգացումները. թորիչ
ունեցող վանահայր մը, արեղայ մը ու
խաշի եւ խորովածի մասին մտածող վա-
նականներ. արեղայ եւ ճգնաւոր. արե-
ղայի վարանք ու կոյր վանականի անդի-
շող մոլեռանդութիւն. իշխան ու ծերու-
նի վանական մը. ծերունի վանական մը
ու վանահայր... այս բոլորը սքանչելի
հակադրութիւններ են, որոնց շնորհիւ հե-
ղինակը կըցած է ստեղծել հոյակապ,
սպաւորիչ Էֆֆէներ, որոնց տակ չի
կրնար չիյնալ հանդիսատեսը, ընթեր-
ցողը:

Դրական նպատակ մըն է նաեւ Շանթի
ոճը, լաւ կերտուած խօսքերն ու բազ-
մաթիւ իմաստները, որոնք կը գտնուին
հանդիսատեսի մտքին մէջ ու կը փոխա-
րինեն տիպարի մը չղոյութիւնը, պատ-
մութեան պէտք եղած ձեւով առաջ չե-
թալը: Անոնք կը յիշուին վարագործէն
ալ անդին, տարիներ ետքն ալ. կը դառ-
նան փաստ, թէ նախապէս մեր մատնա-
նըշած թերութիւնը թատերական տե-
սանկիւնէն, կը դառնան գրական արժէք
մը է. Շանթի համար, այսինքն մտա-
ծումներու գերակայութիւնը, բանակա-
նութեան խանդարելը, արուեստագէտի
ընազդական մղումները, խեղդելը մինչև
անգամ զգացումները՝ ի նպատակ իմա-
ցականին միայն, ի նպատակ դատողու-
թեան: «Ունայնութիւն» բառը եթէ կը
յիշեցնէ Սողոմոն Իմաստունը, հայ հա-
սարակութեան համար նոյնքան եւ աւելի
կը յիշեցնէ, եւ պիտի յիշեցնէ, զբազէա-
թատերագիր Լ. Շանթը: Մանի՜ քանի

տերունդներու պատանեկութիւնն ու հարստութեան զօրութիւնը պիտի յուզէ, խռովէ «իդէ, իդէ Երազմէր», «Ո՛րք եմ մըտփերդ արեգայան, կամ Վի եղիցիմ քեզ այլ Աստուած քաց յիմեմ...», կամ ձերձակաւորի հրամանները՝ «եսաստովանէ, շուարած... կամ վանահօր վճռական կամքը, սլացքը, թռիչքը դէպի հոգեկան քարձուրդները՝ «Այո, պէտք է քանդեմք աւ շիմեմք մարդը»։ «Իմ տաճարիս իմ վրէժը իմ քանակամարտիմս պիտի բլլայ, պիմները՝ կամքս, ու գմբէթմ ալ բլլալու է ճաւատքս»։

Պրաւել է նաև «Հին Աստուածներ»-ու ազգային երանգը՝ Սեւանը, «սաղմոսեր»-ը՝ ժողովուրդները, վաճապահան տաճարի տաճարողութիւնները, ձօները...

Պրաւել այս թատերակը, որ յիսուն տարի է ահա, կը կարգացուի, կը բեմադրուի կրկին ու կրկին, տեւաբար խանդավառելով իր հին ու նոր ընթերցողներն ու հանդիսատեսները, աւելի բնական եւ աւելի ուժեղ վեճակի մը կարելի պիտի ըլլար բերել, եթէ հեղինակը յանձն առած ըլլար կարգ մը փոփոխութիւններ մտցնել իր թատերակին մէջ, և զօգէր «Գեղարուեստական անդադու»-թիւնը։

Ի ՆՁ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԻՆԼԻ
ՈՒԺԵՆՂ ՊԻՏԻ ԸՆԵԻՆ ԹԱՏԵՐԱԿԸ

Թատերական արուեստի պահանջները նկատի առնելով, փոփոխութեանց հետեւեալ կարիքները թիւնները կան.

ԱԻՆԼԻՆ ԱՐԱՐ. Արարուածը պէտք է ոկուր պարանի տեսարանով. վանականները, ապա Ազամ վանական. դուրսը պատահած ցնցող դէպքին պատմութիւնը. ապա վանահօր, իշխանին եւ արեղայի ժամանումը. առանց մոռնալու, որ ցուցահանումը լրիւ ընելու և հետագային իշխանուհիի ու վանահօր միջեւ տեղի ունենալիք դէպքերը բնական եւ իրական համարել տալու համար, անհրաժեշտ է որ այս տառալին տեսարանէն իսկ բնի դաս Մարիամ իշխանուհին, արտաբերելով տխրութիւն բառեր, խօսքեր, ո-

րոնք հանդիսատեսին մէջ պիտի արթնցնեն ՍՊԱՍՈՒՄՆԵՐ, եւ մտածումը կարելիութեանց, այս կամ այն հաւանականութեան։

Ապա, երբ ամէնքը կ'երթան ներս, եկեղեցի, աղօթելու, բեմին վրայ կը մնան Կոյր վանականը ու արեղան. ու խուցի տեսարանն է որ տեղի կ'ունենայ հոգ, եկեղեցիին առջեւ, հետզհետէ իշխող կիսամութի մը մէջ։

Կոյր վանականի մեկնումէն ետք՝ արեղայի տեսիլքը, Սեւան, «սուր ինծի վերաբերում»... վերաբերում՝ որ արեղայի ուտերուն է, քանի որ ծովէն նոր դուրս եկած է, ցնցուած է, երկկոյ է։

Տեսիլքի չքացումէն ետք, արեղան կ'իյնայ դեպքին, ծունկի, աղօթքի։ Հոս պէտք է դա՛յ վանահայրը, առանձին։ Տեսնելով վետին ինկած արեղան՝ պէտք է անոր հետ ունենայ խօսակցութիւն մը, ուր մենք պէտք է զգանք վանահօր մղած պայքարը, իր արեղայի հոգիէն ներս այդ օրն իսկ, թէ՛ առաջ սողողական կեանքի պահանջներուն դէմ. ու նաեւ իր իսկ հոգիին մէջ աղօթ կերպով ընդշնամած ինչ որ յիշատակներու դէմ։ Այս ամէնքը զեւ տարածութիւն ըստած, մեղմութեամբ, վարագուրուած։

Արեղան կը գրկուի իր խուցը, հանգըստանալու. վանահայրը կը մնայ մինակ, կը դիտէ կառուցուող եկեղեցին. հոգ է որ կ'երեւայ իրեն ձերձակաւորը, իր ներքին ձայնը, ըսելու համար՝ «Կը դիտես, կը դիտես քաղաքաւորութիւնը... ու թէ՛ ետք, իրենց խօսակցութեան վերջաւորութիւնը, եւ հանդիսատեսին ըստպատմումը՝ «Կու գայ օրը, կը խոստովանիս»։

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ. Արեղան, ծովեզերքը, ժայռի մը վրայ նստած կը կարգայ։ Տարտած ձայնի կը լսէ, կը դըրատուի իր ուշադրութիւնը, փնտառուքի մէջ է, գլխու շարժումները կ'արտայայտեն զանազան կողմերէ ձայնի լսելը։ Կը մթնէ եւ իսկոյն կը լուսաւորուի աւելի զօրաւոր լոյսով. արեղան բեմին մէջտեղն է եւ իրար կը յաջորդեն մի-

զանուշներու, ձգնաւորի, Սեդայի փոքր լեցնելու տեսարանները (աւելի բնական պիտի ըլլար եթէ միզանուշներու տեսարանը փոխարինուէր արձագանգի պէս լսողոց ձայներով, երբեմն խառն, երբեմն յատակ) :

Սեդայի տեսարանէն ետք, Սիմոն ու Ադամ վանականներու տեսարանը կուգայ, ուր մէկ երկու բառով կը յայտնուի նաեւ թէ հանգիստի պահն է, վանականները կ'ուզողուն ծովեզերք, ըստով կու գան : Կու գան վանականները եւ հոգ կը տեղաւորուի խաչի, խորովածի, սատանաներու տեսարանը, որ ներկայիս երկրորդ արարուածի Պառաջին տեսարանը կը կազմէ : Ապա, ներկայ կարգով Քալ, վանահօր միջամտութիւնը, պահանջը արեւայէն՝ «Փնա», եղի՛ր Ընդհանրապէս ինչպէս որ էիր, Ես եւ կուր ինծի : Այնպէս, ինչպէս որ էիր. այնպէս, ինչպէս որ էիր...

ԵՐՐՐՈՐԴԻ ԱՐԱՐ.— Երբորդ արարուածը ամբողջութեամբ կը տրամադրուի իշխանութիւնի ու գործադրի, ապա իշխանութիւնի ու վանահօր տեսարաններուն : Հանդիսատեսը այլեւս անակնկալի չի գար իշխանութիւնի երեւումով եւ անոր խաղցած դերով : Տեսարանները իրենց տեղը դառն կ'ըլլան ամբողջութեան մէջ եւ կը նպաստեն ամբողջութեան ու նիւթին յառաջնադասքին : «Այլեւս» կը վերաբերի առաջին արարուածին, այնտեղ իշխանութիւնի երեւցած ըլլալուն եւ արտասանած բառերուն անշուշտ, որոնց շնորհիւ միայն այս տեսարանները կը դադրին ըլլալէ արուեստականօրէն ներմուծուած տեսարաններ :

ՁՐՐՐՈՐԴԻ ԱՐԱՐ.— Վանահայրն ու վարպետը կը խօսին իրենց ինքնածը քանդելու մասին, ապա կու գայ արեւմտի, Վանահօր ու արեւայի խօսակցութենէն ետք, երբ վանահայրը դուրս կ'ելլէ, վարպետը չ'իջնէր : Կու գայ Սեդան. Սեդան տեսիլք է, երազ է, ամէն տեղ կ'ըլլայ երեւալ արեւային, նաեւ վանահօր խոցին մէջ :

Մեհնական դաւիթի տեսարանը ամ-

բողջութեամբ պէտք է վերնայ : Ինքն իր մէջ առած զեղեցիկ պատկեր, նիւթին հետ համեմատած սակայն անբնական աւանդական, չի նպաստեր ամբողջութեան կառուցումին, ուսմանութեան, եւ աւելորդներու հարադատութեան պահպանման հիմնական պահանջներուն : Սեդան է որ պէտք է պահանջէ արեւայէն երկրպագել չ'իւն Աստուածներուն, հոն, վանահօր խոցին մէջ իսկ, առանց մեհնանի, կամ Վանահայրն կատարուող ձայներու : Արեւան որ ինքզինք կորսնցուցած է, ծունկի կու գայ, կ'երկրպագէ չ'իւն Աստուածներուն, ու կը մարի :

Վանականներ օգնութեան հասնին իրեն թէ ոչ՝ տարբերութիւն չ'ընէր. վարպետը կ'ընայ փակուել արեւայի ծունկի դարուն հետ իսկ :

ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԱՐԱՐ.— Հինգերորդ արարուածը պէտք է կազմէ իշխանութիւնի ու վանահօր կապերու խզումի կարգ, սակայն տրամաքի՛ք տեսարանը :

ՎԵՑԵՐՈՐԴԻ ԱՐԱՐ.— Արեւան պառկած է, իր քով վանականներ, կոյր վանականը : «Դուն տեսնո՞ր ես արեւին ծագումը» տեսարանն է, անշուշտ առանց արեւի ծագում բառերուն : Անոնց փոխարէն, «Ես երկրպագեցի չ'իւն Աստուածներուն, ես երկրպագեցի...»

Վանահայրը պէտք չ'է գայ ըսելու արեւային «Երեւ օր ունիս միայն. Երեւ օր Ես» հայր Անտոնի լաստը քեզ կը հանէ ցամաք...» անբնական ու աւելորդ անմարդկային ելոյթ մը. պէտք է գայ Սեդան, Կոյր վանականի կունկի կողմէն, ըսելու «Մաքի ինծի»ն, ու նոյն ատեն հրաւիրելու զինք ծովուն գիւրկը, երբ ջուրերը փոթորկին...

Ապա վանականներ կու գան, ըսելով թէ վանահայրը պահանջած է որ հոս հաւաքուին, որպէսզի արեւան ալ լսէ իր ըսելիքները. եւ հոն կ'ընայ տեղի ունեւնալ վանահօր եւ վանականներու բաժանման տեսարանը :

ԵՕԹՆԵՐՈՐԴԻ ԱՐԱՐ.— Կամ տեսարանն — որ կարելի է նաեւ առանց վարպետը գործը գործելու, լոյսերը մարելով ու

մուծին մէջ արագօրէն տեսարանը փոխելով ներկայացնել — արեղայի անձնասպանութեան տեսարանն է, որ կըրճատուած ձեւով պէտք է ըլլայ, առանց աշխարհի տեսլականին բերող, տիրապետող խօսակցութեան: Վերջն ալ անշուշտ, պիտի կազմէ Կոյրի եւ ձայնի տեսարանը:

Այս փոփոխութիւններով ի հարկէ պիտի չվերնայ գաղափրակէտի մը պակասը, պատմութեան աստիճանական զարգացման, յառաջխաղացքի պակասը. աչ ալ անձնատուութիւնները պիտի ստանան իրենց ազատութիւնը, սեփական կեանքը ապրելու իրաւունքը. կը վերնայ սակայն թատերական ցուցահանման մարդկան չըլլալու պակասը, կարգ մը տեսարաններու անբնականօրէն տեղադրուած ըլլալու, կապակցուած չըլլալու պակասը, տասներկու անգամ տեսարանի փոխելու գոռալարութիւնները:

Փոփոխութեանց այս կարելիութիւնները ներկայացուցին շարահանգ աճփոփ, ուրուազմային ձեւի մէջ, որպէս մտաթելադրանք միայն: Հնդկակը բերած է զբանաստեղծութեան ու արուեստին, իր ստեղծագործութիւնը, այնպէս ինչպէս որ կայ ներկայիս, եւ այդ ձեւին մէջ իսկ մեծարժէք գործ մըն է զինն Աստուածները, ոչ միայն հայկական, այլ միջազգային առումով ալ:

«Հին ԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒ ԱՐՓԵՔԸ»

Իր առաջին հրատարակութեան թրուակներ կարեւոր է, կարենալ ըմբռնելու համար իր նորոյթի արժէքը: 1912-ին ներկայացուած է առաջին անգամ Թիֆլիսի մէջ, առաջացնելով խանդավառութեան անկարագրելի ալիք նախ Կովկասի կարեւոր կեդրոններուն մէջ, ապա Պոլսոյ Թատերական արուեստը վերանորոգման մէջ էր՝ Իրանի, Սթրինպէրկի, Ձեխովի ազդեցութեանց տակ: Հին ըմբռնումը գլու պատրաստուածք թատերակներու, գոտորի ու միայն գուարճա-

ցընող, կամ մելոտրամիք ողբերգութիւններու արժէքաւորումը, Իրանի առաջացուած յեղաշրջումով նահանջի մէջ էր եւրոպական գրականութեան մէջ ու բնամերուսն վրայ: Կը շարունակուէր այդ ըմբռնումը գեղ, մեր մէջ:

Ընկերութիւնները, ամէն կողմ, եւրոպական մշակոյթին հետ յարաբերութեան մէջ եղող աղքէրը, համընթաց քաշելով արագօրէն տեղի ունեցող հոգեբանական եւ մտածելակերպի յեղաշրջումներուն հետ, ընկերային, քաղաքական, զբանաստեղծութեան եւ արուեստի հոլովոյթին հետ, դարձած էին պահանջատէր գաղափարականի տիրապետութեան, բարոյական անկեղծութեան, մաքրութեան: Իրանի, իր Նօրայով, Պըրանտով, Շթրկմանով նպատակ մը կը բերէր Նօրդ դարու վերջնաւորութեան՝ միշտ զարգացող, ներշնչելի, ապրող բարոյականը եւ ոչ թէ բարոյականի մը տնտեսով քարացած կապահոգումները. անհատէ անհատ, կամ անհատէ ընկերութեան կեդրոնը պայմանագրութեան նիւթը եւ ոչ թէ պայմանագրութեան կենդանի, մարդկային յարմարող օրէնքը եւ ոչ թէ քարացած, վերացական օրէնքը: Այս ըմբռնումներուն առաջին արտայայտութիւնը մեր մէջ է. Շանթի «Հին Աստուածներն» են:

Լ. Շանթ առաջինն է հայ գրականութեան մէջ, որ գուրու կու գայ մանր խնդիրներով զբաղող, չինծու, արուեստական կառոյցով, յայտնութիւններով ցնցիչ զարժող թատերական գրականութեան սահմաններէն եւ կ'անցնի իրական թատերական գրականութեան, մերժելով գլու կառուցուած բիւսիք քեֆմիքը, ընթերցէն ետք մաքսողութեան նպատակով թեթեւ, մակերեսային կատակերգութիւններու կամ մելոտրամիքաւ մանր խնդիրները նիւթ ընելը գրականութեան եւ ձեռք կը գարնէ մեծ խնդիրներու եւ անոնց լուծումին փնտրութիւնը:

Ժամանակը հետաքրքրող, հետաքրքրող մաքսը զբաղեցնող մեծ

հարցերէն մէկը դրուած է Հին Աստուածներուն մէջ, եւ իր լուծումը գտած, հակառակ կառոյցի միութեան պակասին՝ «կը մեռնի» արդեօք Հին Աստուածները... մարդու հոգիէն կը վերնա՞յ տրդեօք կուի, սիրայ, կեանքի տեմչանքը...: Առաջին տնգամն էր, որ մեր թատերական կեանքին մէջ, նման լուրջ հարց մը կը քննուէր այսքան լրջութեամբ, ձեռնհասութեամբ եւ աղուոր պատկերներու, գրաւիչ խօսքերու ու մտքերու յաջորդականութեամբ մը:

Հայ Հասարակութիւնը «Հին Աստուածներ»-ուն մէջ միջոց պիտի գտնէ գինք դրամով, իրեն հանելի, առնուազն երկու հիմնական երեւոյթ՝ քանդուածը վերաշինելու աննկուն կամքը, եւ զազափարական անգիշտող մտքութեան պահանջը:

Ընկերային կեանքին մէջ կան խառնաձուլութեան, գոհունակութեան, եւ նաեւ յուսահատութեան րոպէներ: Երբ կու գան վհատութեան րոպէները, կու գայ նաեւ մտքերուն մէջ որոնումը ելքի ճամբուն: Որոնողները ընդհանրապէս երիտասարդները կ'ըլլան: Զկէրու, չը պարտուելու, անմաստուր չըլլալու պահանջը անոնցմէ կու գայ առաւելարար: Գեղեցիկին եւ աւելի բարձրին, փնտրութեան բնի աւելի փորձառուներու յատուկ է, զուտ գաղափարական մղումը յատուկ է երիտասարդներուն, զէթ հոգիով երիտասարդներուն:

Ամէն անգամ որ որոնումի մէջ ըլլայ սերունդ մը, անպայման պիտի դիմէ Շտեյնի, մասնաւորաբար անոր «Հին Աստուածներ»-ուն:

Այսօր, ըլլայ արտասահմանի, ըլլայ Հայաստանի մէջ, մեր ժողովուրդը, նոր սերունդը մանաւանդ, որոնումի մէջ է: Խաշի ու խորովածի հոտը աշխարհ բրանած է ու ստատանները հանգիստ չեն տար մարդկութեան ճակատագիրը վարողներուն, եւ հարցականի կը վերածեն, բոլոր ժողովուրդներու ճակատագրին հետ, նաեւ մեր ժողովուրդին ճակատագիրը: Գաղափարական ուժը, միակ

անպարտելին, տեւական հորուածումի ենթակայ է նիւթապաշտական աշխարհին կողմէ, եւ մեր կեանքէն անհետանալու վրայ է, աստիճանաբար, Գիւլիւ-Փիւլիւիկէն:

Ծարաւը սակայն զաղափարականին չի վերնար, մանաւանդ նոր սերունդներու հոգիէն. անոնք կ'անցնին որոնումի, եւ ճամբու իրենց փնտրութեան մէջ անպայման կը գտնեն ի. Շտեյն ու իր «Հին Աստուածներ»-ը:

«...Պէտք է նրա միջից անցնել աւելի վեր գնալու համար», կը գրէ Ն. Աղբալեան. «...Հօտ է այն ազգը, որ չունի իմացական քաղմութիւն: Պէտք է ստեղծուի այդ քաղմութիւնը մեր մէջ, եւ ի. Շտեյնի երկերը լաւագոյն միջոցներից մէկն են, այդ քանն առաջ քերելու»:

«...Ի. Շտեյնի գիրքը հմայաբափ է անուամ խորամուխ ընթերցողին, քով-ենտու. ներշնչումը չէ, որ իշխում է իմացութեան վրայ, այլ պատմաաշխարհի իմացութիւնն է, որ գումարափում է ներշնչում ծաղիկները...»

«Բայց ոչ մէկ չափ կարող է յաղթել կեանքի մղումին, օր գալիս է տիեզերքի խորքից եւ անցնում մեր միջով»:

«Պէտք է անցնել գիտութեան, ի. Շտեյնի երկերի բովից՝ աւելի ներսւտ ապրելու համար այս կեանքը»:

Պարտաւոր է անցնելու Շտեյնի երկերու բովին, մասնաւորաբար «Հին Աստուածներ»-ուն բովին, մանաւանդ ներկայ նոր սերունդը հայ ժողովուրդին: Կեանքը ելեւէջներու յաջորդականութիւն մըն է, ըլլայ անհատին, ըլլայ ազգերուն համար: Էջեր պահերուն յառաջումը կը զօրանայ, կը տիրէ հոգիներուն ձեռք մասին, կը վերածէ զանոնք ափ մը ցորենի համար իրենց հոգիին թռիչքը ծալուողներու, զանաբար զոյումներում մը ապրողներու: Վերստին բարձրացումը կարելի կը դառնայ, ալիքին վերագարձին հետ կատարներէն սուրբ կարելի կը դառնայ, շնորհիւ անոնց՝ որոնք ուղիւ պուրը կը մերժեն, երբ հարցը կը հասնի

էութիւնը զոհաբերելով ապրելուն: Նոր սերունդները պարտաւոր են «Հին Աստուածներէն տեսարաններէն տնցելի, իրենց ներաշխարհին մէջ քննել բոլոր չարքերը, իրենց բոլոր կողմերով, եւ անդրադառնալ վանահօր հետ, թէ չի բաւեր մինչեւ որոշ տեղ մը փախլը, եւ հասած ըլլալու ապրումով մը թուլցնել լարումը, պակսեցնել պրկումը կամ քերտուհ: Իսկոյն կը վերածուի մարդը խաշ ու խորոված փնտռող արարածի: Պէտք է շարունակել վերելքը, սլալապէս միտութեան կապ մը գոյութիւն չ'ունենար իրենց ժողովուրդին թոյլքով, զէպի բարձրը, զհեղեցիկը, ժայթքումներով հարուստ անցեալը կերտողներուն եւ այսօրուայ սերունդին միջեւ:

Այդ պարագային, Հայ ժողովուրդը պիտի ըսէ վանահօր նման՝

«Միաբանութիւն, ի՞նչ միութիւն ձեր ու իմ մէջ... Կարծես կապը կ'իյնայ աչքերէս: Ինչպէ՞ս է եղեր, որ ես չեմ հասկցեր այսքան պարզ բանը, այսքան ակնյայտնի: Միմչեւ հոս, միմչեւ անապատ, կրցեր եմք մեմք միասին: Միմչեւ հոս եւ կրնայի բերել ձեզի, միմչեւ հոս կարելի է բերել մարդը, բայց հոսկէ անդին... հոսկէ անդին մարդը

ի՞նչ պիտի երթայ: Հշմարիտը դու՛ք էք. այդ եկեղեցին պէտք է, որ մնայ, ա՛մ է ձեր եկեղեցին, գացէ՛ք, գացէ՛ք մերս. ան կուտայ ձեզի անվե՛րջ աղօթքներ ու մխիթարանք. ան կը բանայ ձեզի արքայութեան դռները, կ'ազատէ ձեզի բոլոր սատամաներէն, ան ձեզի ձեր հացն ալ կու տայ ու ձեր հանգիստը. գացէ՛ք, գացէ՛ք մերս ու խաղաղութիւնը բոլ ըլլայ ձեզի հետ: Իսկ իմ փնտառածս աստիկա չէ. իմ փնտառածս աշխատա՛մքն է, ներքին անդուլ ու անկաշկանդ որոնումը՝ ներքին անվերջ նուաճումները բարձունքէ բարձունք, պարիսպէ պարիսպ, տարակոյցներու անդունդին վրայէն, ել՝ քերով ու անկումներով. անդադար խօյանք մը դէպի ճշմարտութիւնը: Գացէ՛ք, գացէ՛ք մերս, դուք ձեր եկեղեցին, եւ ալ երթա՛մ շինեմ ի՛մ եկեղեցիս. քայց այս անգամ ե՛ս, միայն ես, եւ կերտուածք մը որ վայել ըլլայ իմ Աստծու քանդութեանը, որու կամարներուն տակ իմ խնկելիք աղօթքիս ա՛յ մէկ բառը կեղծ չ'ենչէ, ա՛յ մէկ բառի արձագանգը դատարկ չ'ենչէ»:

Բ. ֆ.

Վ Ե Ր Զ

?

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

ՓՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ՝

ՎԱԹՍՈՒՆԻ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐ

4.

1928-էն մինչև 1937 երկարող տասնամեակը Մահարիի կեանքին ու դործին ամէնէն բեղուն, միաժամանակ ամէնէն կարեւոր շրջաններէն մէկն է, եթէ ոչ ամէնէն կարեւորը: Գրական գիտակցութեան հասած հեղինակը կը շարունակէ ստեղծագործել թափով ու կու տայ չափանոցի երկեր, որոնք ո՛չ միայն իր վաստակին, այլ մեր ամբողջ գրականութեան մէջ կը պատեն նախանձելի տեղ մը: Լիութեան տարիներն են: Այս տասնամեակին ալ կը գտնենք նախորդ շրջանը յուզող խնդիրները, յատկապէս հինի եւ նորի բանավէճը, որ կ'երկարաձգուի ամբողջ կենսաշրջանի ընթացքին: Բայց փոխուած բան մը կայ անկասկած, դէպի առաջ նեղուած քայլ մը: Բանավէճն ու ներքին հակասութիւններու ցուցադրութիւնը շարունակելով մէկտեղ՝ Գուրգէն Մահարի կը նուիրուի ինքնակենսագրական երկերու մշակումին: Գիտակի՞ց, թէ՞ անգիտակից մը՝ դուժով՝ տեսակ մը պատուար կը քաշէ զուտ անձնական ստեղծագործութեան եւ ընկերային նպատակներու ծառայող իր գրականութեան միջեւ: Միաժամանակ կը մասնակցի դրական-ընկերային վէճերուն եւ կը ձեռնարկէ սրտամօտ աշխատանքի մը՝ մօտաւոր անցեալի յարու-

թեան յաւանդական է որ գործունէութեան այս երկուութիւնը կ'արտայայտուի նաեւ սեռերու երկուութեամբ: Մինչ

բանաստեղծութիւնը կը շարունակէ հանդիսանալ ըլլալ հինի եւ նորի պայքարին՝ քնարական, ինքնակենսագրական արձակը կ'ընթանայ իր ուղիէն, հեղափոխական, ինքնատու, կարծես անտարբեր շուրջի աղմուկին: 1928-ը հանգրուան է մահաւանդ արձակի համար. այդ թուականին կ'իրագործուի «Մանկութիւնը» Մահարիի ստեղծագործական նոր կերպը աւետող երկը:

Բանաստեղծութեան մէջ, նորի փառաբանումը աւելի տեսական հրաւերի՝ քնոյթ կը ստանայ, քան՝ գործնական խորականցումի: Մահարի տեւաբար ինքն իրեն հրաւեր կը կարգայ մոռնալու անցեալը, երգելու ներկան ու պայծառ դալիքը: Տասնեակներով բանաստեղծութիւններ կը վերածուին մանիֆեսթի, այս ձեւով: Ըսելու ձեւը քիչ մը կը տարբերի, վերնագիրը կը փոխուի, բայց արտայայտուած միտքը կը մնայ նոյնը: «Ջարթօն», «Երգի մասին», «Երգ իմ երգին» եւ ուրիշ նման բանաստեղծութիւններ կը կրկնեն միշտ միեւնոյն հրաւերը, կ'արտայայտեն միեւնոյն ցանկութիւնը, բայց այս հրաւերը քիչ անգամ դրական պատասխան կը ստանայ, ցանկութիւնը հաղուադէպօրէն կ'իրագործուի: Մանիֆեսթային այս քերթըւածներու կողքին կը հասունանան ինքնակենսագրական երկեր, թերհաս կը ծնին մարտական պոեմներ ու պալլատներ. կարծես երկու տարբեր անձեր կը ստեղծագործեն միեւնոյն անուամբ:

Այս տեսակէտէն Հետաքրքրական է Մահարիի 1953-ին գրած Հեղնական մէկ բանաստեղծութիւնը՝ «Էպիտաֆիա», որ բառորդ դարու տարբերութեամբ Հարազատօրէն կը պատշաճի Յոսիան թուականներու իր հոգեբանութեան:

Աստ իմացի մարքսիստ քննադատ Սիւնիմ, Նա իր ուղղափառ մատերից յետոյ Սիւնիմ էր կարդալ Վէրլիմ ու Բուսիմ:
(.)

Սիւնիմ կրկնութեամբ անբուժելի ցաւից Նրկու աշխարհի սահմանագծում:

Մահարի նոյնպէս կը տարուբերէ զերկու աշխարհի օսմաննադծում: Բանաստեղծութիւններուն մէջ հուզողափառ ճառ կ'արտասանէ, «Մանկութեան» ու «Պատանակութեան» մէջ կը սիրէ «Վերլիմն ու Բուսիմն կարդալ»: Կը զգա՞յ ինքն ալ որ տկար կը մնան այն բոլոր քերթընդաւորները, որոնք պարտականութեան ըզզացումով երկաթ ու պողպատ կ'երգեն, յուշում չեն արտայայտեր, «Պարտի 26»-ը անմահացնել փորձեն թէ Վերլիմնադործ Մահարի վկայ պատմեն: Կ'անդրադառնա՞յ թէ իր «Պատանակութեան» երկերն են արժէքաւորը:

Շատ հաւանօրէն:

Որովհետեւ նորը չէ փորող Երգերու կամ Հինը գատապարտող Վանիֆեսքնէրու կողքին կան նաեւ ինքնապաշտպանութեան ու ինքնարդարացումի բանաստեղծութիւններ, որոնց մէջ կ'արտայայտէ Հեղնանք ու ցասում, բայց նաեւ յուստակ գիտակցութիւնը իր քերթողական արժանիքին: Գանգատէ աւելի՝ վերէն նայող ինքնավստահ մարդու խօսք է իւրի:

Բնիմ Հեղնանք բանաստեղծութեան մէջ կը խոստովանի թէ իրեն կ'ըսեն «վայրուրու ես, երգչ թոյն է», բայց ինք գիտէ թէ բազմալար է իր քնարը եւ իր մօրմօքները երգի արցունքն ու արիւնն են. գիտէ երգը արեւն է, երգելը արուեստ է...: Սղակապնութիւնը որոշ է այնուհետեւ:

Ու քոզ Երանք տան, որ դու
Ինչ-որ ա՛յլ ես, —
Ո՞վ կարող է չափել ցրիդ
Խորութիւնը...
Դու խորամանկ նայում ես,
դու խորամանկ ժպտում ես,
Ու խաղում է դէմքիդ թոր
Երգերիդ փայլը...

Նոյն գիտակցութիւնը կայ «Բո՛ւ երկրի մի ճամփի վրայ...»-ի մէջ, առանց «խորամանկ ժպտոյի», հեղնական վերաբերումի: Իր երգերը բարդի են. այդ բարդիկն կը շինուի «անգրաւ սին» եւ «նոր մի պոէտ անաստ» իր «էլեկտրո-երգերի լամպը» կը կախէ անկէ: Գիշեր-ցիկ է խորհրդանշը: Թելադրական կերպով ու հարազատօրէն կ'արտայայտէ նաեւ բանաստեղծի դիմքն ու տրամադրութիւնները: Ինքը խառնուածքով բարդիներու, աշնան ու թախիծի երգիչ է, բայց այդ չի նշանակեր թէ իր դրականութիւնը անօգուտ է: Ինք կը հաւատայ, նոյնիսկ, որ ան մէկնակէտ պիտի ըլլայ նոր բանաստեղծի մը նոր խօսքին:

Ինչպէս նախորդ հնգամեակին լիութեան այս տարիներուն ալ՝ Մահարի կը յաջողի գեղեցիկ «նոր» երգեր երգել: Պայմանը միշտ նոյնն է. երբ ապրումը խոր է, անձնական փորձով հարստացած եւ նիւթը՝ հարազատ, երգը կ'ըլլայ յաջող ու համակողմնաբանական: Սղակապնութեան խօսք եւ արուեստի գեղեցիկ իրադրութիւն:

Քիչ չէ թիւը յաջող այն բանաստեղծութիւններուն, որոնք կը լրացնեն այս պայմանը: Բազմաթիւ են նաեւ անոնք, որոնք նոյն յաջողութեամբ նեղ-անձնական ապրումները կ'երգեն: Ասոնց շարքին առանձին յիշատակութեան արժանի են ծովու երգերը, որոնք բնութեան Հեղնակապնութեան միեւնոյն տրամադրութեան մասին կը վկայեն, բայց բանաստեղծական նոր երակ մը կ'օգտագործեն:

Միեւնոյն տարին, միեւնոյն այցեւորութեան ընթացքին շրջաւոր՝ այս երգե-

ըը յատկանշական են ու գեղեցիկ: Դաշտերու եւ մարգերու, բարդիի եւ սոսափի երգիչը յանկարծ կը գտնէ ծովու գծի-ծաղկոտ ու պայծառ գեղեցկութիւնը, կը սիրէ անոր ճանճունն ու խորութիւնը, անհանդիստ եռքն ու ելեւելքը: Բայց պայմաններով ընդմեջ, թէ՛ նախախորհած մղուած՝ կ'երգէ մա՛ննաւոր հանդարտ գեղեցկութիւնը ծովուն: Փոթորիկներու աղմուկը, ափին փշուրտող տիքներու շարունակ չկայ այս քերթուածներուն մէջ: Նոյնիսկ երբ ամբողջ գիշերը չէ գաղթած ծովահողմը՝ ծովը պարզապէս երգած կ'ըլլայ ճախրուց, կենսաբան, կան նաեւ քնքուր պատկերներ ծովափին խաղաղող զփոքրիկ նաւափառներ, կամ տիրալու շուտքը ծովու վրայ իջնող անձրեւի, ճանճերու մշուշ-նեղքու: Մնայուն Մահարիկն վկայութիւններ են այս երգերը:

Միակ նորութիւնը, նաեւ, այս շքեղանի բանաստեղծական վաստակն:

Որովհետեւ այս տասնամեակին Մահարի քիչ բան կ'աւելցնէ նախորդ շրջանի եր նուաճումներուն վրայ: Բանաստեղծը ինքզինք կ'երկարածող է եւ երբեմն կը խորացնէ լիութեան այս տասնամեակի երգերուն մէջ: Յուզումի եւ զեղարուեստական կերտումի տեսակէտէ առնոք կը մնան շարունակութիւնը նախորդ տարիներու որոշ բարձրութեան հասած իր քերթուածներուն:

Ու Մահարի կը մնայ բնութեան ու սէրի, մորմոքող ցաւի, կարօտի եւ թախծի սրտառու երգիչը: Տէրեանի եւ Մեծաբեկի մէջտեղ կանգնած եւ Զարեանի քովն ի վեր իր սեփական ածուն մշակող ինքնուրոյն բանաստեղծը:

Արձակագիր Մահարին ինքզինք կը պարտաւորէ Վանկութիւնքով:

Քառորդ դարու կեանք եւ հաղիւ տասնամեակի մը գրական վաստակ ունի, երբ կը հակի իր անցեալին վրայ: Եւ ուզում եմ փրկել մնացածն ու հմտաւորը իմ մանկութեան խորատուութեան

ռսկէ մակոյկից, կ'ըսէ նախաբանին մէջ: Բայց ուրիշ ազգակներ ալ կը մղեն զինք սգնկոյնիւ իր մանկութիւնը: Պնաբական իր խառնուածքին յարմար նիւթ է վերադարձը՝ անցեալ, սիրուած օրերու, բնական, հողի էութենէն եւ արտաքին պայմաններու բերումէն թելադրող ըզզացում է կարօտը, ստեղծագործական առաջին տարիներու մթնոլորտը յատկանշող, այսինքն իր ամէնէն խոր խելութեանը համապատասխանող:

Անցեալը վերակենդանացնելու այս փափաքը առօրեային փախուստ չի նշանակեր, ոչ ալ՝ ապաստանի փնտռումը, յուշերու պատրանքով խեղճականացուած մթնոլորտի մը մէջ: Պարզապէս, ներկան աւելի ներուժ ապրելու համար՝ Մահարի պէտք ունի սուղուելու հողի բնական տարիքին մէջ, խայտալու յուզումէն, գրելու սոսկական հաճոյքէն: Յիշել եմ ուզում, վերջիվերջ եւ գրել, գրել հեշտ եւ քեքեւ, գրել եւ գգալ, որ խոսքերս խփում եմ մերթն յուզումս: Բից, գրել անմշուշ, պայծառ, այն քաղաքի երկնքի մամ, ծովի կապտոյտի մը մամ, այգեստանների կանաչի ու լուսնակայ գիշերների խորութեան մամ:

Այսինքն՝ շնչել քնարական մթնոլորտ մը եւ բանաստեղծ հողի խորհուրդը գնել ինքնակենսագրական արձակ քերթուածի մը մէջ:

Որովհետեւ Վանկութիւնքը պատմական փաստաթուղթ չէ, ո՛չ իսկ պարզ վանկութեան ձգտումներին: Եւ պատակ չէ անոր մէջ, ոչ ալ՝ առարկայական մօտեցումը անհրաժեշտ մեթոտ: Անմահական, կողմնակալ, կրքոտ վերջտեսողութիւն մըն է մօտաւոր անցեալի մը լիարժեքութիւն, դէմքերու եւ գէպքերու զուտ անմահական ներկայացումով ու մեկնաբանութեամբ: Հարազատ վկայութիւն է իր՝ Մահարիի՝ հողի մասին, բայց ոչ՝ շրջապատի:

Մահարի կողմնակալ է մա՛ննաւոր քաղաքական գէպքերու կամ յեղափոխական գէպքերու մասին արտայայտուե-

լու ժամանակ: Իշխանը, Արամը, իր քեռին եւ ուրիշ յեղափոխականներ, օրինակ, կը ներկայացնէ բացայայտ վերապահութեամբ: Յատկանշական է, մասնաւորաբար, Մահարիի վերաբերումը Իշխանի հանդէպ. մանկական տարիներէն մտացած հիացումի եւ յարգանքի որոշ զգացում կը խառնուի մտածումէն թելադրուող ու հետազոյի՛ն իր մէջ զարգացած գաղափարաբան: Այս հակասութենէն կը ծնի տարօրինակ կերպով տպաւորիչ կերպար մը, որուն մանկական յիշատակները առասպելական չնսզիտեր ի՛նչ յատկանիշ կու տան, մինչ անկի հասուն տարիներու վերապահ կեցուածքը՝ դաժանութիւն մը, որ չափազանցուած է հաւանօրէն, բայց չի խախտեր զբաղան կերպարի ամբողջականութիւնը:

Վիանքը՝ հատուածին մէջ Մահարի կը ներկայացնէ յեղափոխականներու հանդիպում մը եւ պատիժի դաժան տեսարան մը: Իշխանը անողորմաբար մշտնադիմ կու տայ աղքատ դիւղացի մը, որ չէ ուզած զէնք գնել ինքնապաշտպանութեան գործին նպաստելու համար: Մահարի կենդանի գոյներով կու տայ տեսարանը, կը ներկայացնէ մա՛նաւանդ Իշխանի կեցուածքը, շարժումները, խօսքերը: Ընթերցողի աչքերուն առաջ կը կանգնի մարդը իր խիստ դիմադիժներով, կտրուկ շարժումներով, մինչ ականջին կը հնչէ խրոխտ անոր խօսքը՝ իւրայատուկ լեզուով ու երանդով, Բերը Ռ կը հնչէ, կտրուկ կը խօսի, շոք յանդիմանեալ կը տեղայ, կամ բարձր ծիծաղով կը պոռթկայ:

Դիւղը հաւանօրէն ճիշդ է, բայց զայն ներկայացնելու ձեւը անմեղական է: Իշխանի, Արամի եւ ամբողջ կոմիտէի վերաբերումը կարելի է երկու ձեւով բացատրել. անխիղճ բռնակալութեամբ կամ ժողովուրդը զինելու խնձհա՛ ալլ վճռական որոշումով: Մահարի առաջին բացատրութեան կողմնակից է: Խորհրդապետութիւն չ'ընէր, բայց այնպէ՛ս կը

ներկայացնէ եղելութիւնը որ զէնք չ'զնոդ զինւորացիները համակրելի երեւին եւ կուսակցական պատասխանատուները՝ անդա՛հ: Մանաւանդ որ տեսարանը կը փակուի յատկանշական հարց-պատասխանով մը.

— Մայրիկ, դու հմլա՞կ ես, դաշնակ, Թէ՞ արմե՛նական, կը հարցնէ Արամ:

— Նրեմ էլ խո՛ղ, կը պատասխանէ Մահարիի մեծ-մայրը:

Փառաքական այս դիւքորոշումը չի վնասեր երկի գեղարուեստական արժէքին, որովհետեւ չի խախտեր անոր միութիւնը: Միեւնոյն բանը կարելի է ըստի, սակայն, քաղաքական կամ ընկերային խորհրդածութիւններու մասին, որոնք երբեմն արուեստականօրէն կը կցուին պատմութեան, ընթերցողը յանկարծ փոխադրելով ողեկոշուած չըջանի միջոյցութիւն գիրքի գրութեան ժամանակաշրջանը:

Այս է պարագան հասարակական աշխատանք՝ հատուածի վերջաւորութեան, ուր ամբողջ 15 տող յատկացուած է բացատրութեանը այն իրողութեան՝ թէ հեղինակը մանկութեան օրերուն կ'ապրէր զղեղին զառանցանքի մէջ, մինչ պիտներէնը զայսձառ երթէ ունին եւ զպայծառ ճանապարհ: Մտածումի անկեղծութեան կամ հաստատումի առարկայական ճշգրտեան մասին չէ խօսքը, ոչ՝ միջամտութեան գեղարուեստական արժէքին: Այս միջամտութիւնը անպատեհ է երկու լուրջ պատճառներով. նախ կերպարի երկուութիւն կը ստեղծէ, յետոյ՝ միջոյցութիւն ճշգրտեան կը ինքնակենսագրական նման երկի մը մէջ կը վերածուի կերպարի՝ անկասխաբար զբաժ ժամանակի հոգեբանութենէն եւ տպրելու կերպէն. անշատ գէ՛մք մը պէս կ'առաջուի գործին եւ կ'ապրի անոր միջոյցութիւն մէջ: Երբ այս կերպարէն ու միջոյցութիւն գործը գրելու ժամանակ ունեցած իր մտածումները կ'արտայայտէ՝ հեղինակը կը խախ-

տէ տեսչական միութիւնը երկին, որ կը դադրէ, ժամանակաորայէս, ինքն իր վրայ փակուած արուեստի ինքնարաւ աշխարհ մը ըլլալէ:

Նման «վերադարձ» գրութեան ժամանակին ուրիշ հատուածներու վերջաւորութեան ալ կայ, բայց արդիւնքը միեւնոյնը չէ: Հոն մթնոլորտը եւ ապրումը կը մնան նոյնը, կ'երկարաձգուին պարզապէս ժամանակին մէջ: Այսպէս՝ «Քորս» հատուածի վախճանին Մահարի խօսքը կ'ուղղէ քրոջը եւ իր յուշումի մասին կը խօսի, բայց մթնոլորտի տարբերութիւն չի ստեղծեր եւ հին ապրում մին նոր մը չի հակադրեր:

Քաղաքական դերքորոշումը «Մանկութեան» մէջ կրնայ հետաքրքրական ըլլալ Մահարիի ընկերային եւ քաղաքական մտածումի հսկողութիւնը ուսումնասիրողին համար, կրնայ որոշ լոյսի տակ տունի մարդու կեցութեանը հասարակական կեանքի մէջ: Այս պարագային՝ Մահարիի հոգեկան կեանքն է կարեւորը, որովհետեւ «Մանկութեան» ապրումներու պատմութիւնն է, վիշտի մէջ՝ ճակատագրական դէպքերու ականատես եղած եւ բացառիկ մթնոլորտի մէջ ապրած մանուկ հոգիի մը մասին:

Հոն է Մահարիի զգացական եւ ըզպայական հարուստ աշխարհով, երեւակայութեան թռիչքներով ու սրամտութեան սլաքներով, խորհուրդի այն մըթնոլորտով, որ իր հոգիի բնական միջավայրն է: Հոն է արուեստագէտի իր շրմոքով նաեւ, տիպեր կենդանացնելու եւ հաղորդական մթնոլորտ ստեղծելու առաւելութեամբ, պատմելու եւ նկարագրելու զբաւիչ առանձնայատկութիւնով:

Յուշումը բնական տարրն է երկին: Հնչիւնակը վերապրումով կը դրէ, անցած դէպքերը կը վերգլխայ, կ'ապրի կորստած դէպքերու մտեմութեան մէջ: Խանդադատանքով, անսպառ սէրով կը կենդանացնէ մեծ-մօրը դիմագիծը, ցաւադին ապրումով կ'ողկնոյնէ քրոջը յիշատակը եւ իրենց տան մթնոլորտը, մինչև

իսկ իրեն մօտ չեղող անձերու մասին խօսած ժամանակ բառերուն մէջ կը դնէ տարօրինակ ջերմութիւն մը, որ զանոնք սոսկական տիպարէն տարբեր բանի մը կը վերածէ: Այս է պարագան մասնատրաբար ճալաֆրանկա ընտանիքի անդամներուն, որոնց հոգեկան զօրաւոր կապերով չէ կապուած, բայց չի կրնար անտարբեր չեչտով ներկայացնել:

Այս պատմութիւնն է յառնող գլխաւոր դէմքը Մահարիի մեծ-մայրն է: Ամբողջ դիրքը նկարագրող մըն է կարծես, որուն վրայ յստակ ու խոր գիծերով կը սեւեռուի անմոռանալի պատկերը՝ սիրտի, բայց նաեւ հոգիի ուժի տէր այս կնոջ: Մէկ հատուածի մէջ չէ որ կը տրուի անոր կերպարը. աստիճանաբար կը ստեղծուի առաջին հատուածէն սկսած եւ իր լրումին կը հասնի շարքի յաջորդ գիծերն՝ «Պատանեկութեան» մէջ: Բարի, բայց անհրաժեշտ պարագային նա'եւ կծու խօսքի ընդունակ կին է Մահարիի մեծ-մայրը. աշխատող, գործունեայ, անհատականութեան տէր: Փաղտնապահ է, վստահելի, բայց իր սեփական կարծիքն ունի մարդերու եւ դէպքերու մասին ու չի քաշուի արտայայտելու զայն, երբ հարկը ծագի, ինչպէս «Վանք» խօսակցութեան ընթացքին: Սփառած է տակուին հողի մարդու առողջ բնազդով եւ նոյնքան առողջ սրամտութեամբ. սիրտով կը հասկնայ կեանքը, սիրտով ալ կ'ապրի, բայց գիտէ երբեմն հեղեղական ժպիտով կամ խօսքով դիմաւորել անոր անակնկալները:

Ուրիշ յատկանշական դէմքեր շատ կան՝ ամբողջ հատուածի մը կամ պարբերութեան մը մէջ տրուած, երբեմն զգրիչ քանի մը հարուածով ստեղծուած: Այսպէս՝ նախնական ուժի եւ ժողովրդական լուռ ու խուլ ցասումի սքանչելի արտայայտութիւն մըն է ջուլհականոցի պարզ բանուորը՝ Սեդրակը, որ գիտէ ծառանալ իր գործատէրի անարդար կարգադրութիւններուն դէմ, ահաւոր համակերպութեամբ մը տանիլ ճակատա-

զիրի հարուածները, բայց եւ ահեղ ցա-
տաժով արբաղրել կեանքն ու ճակատա-
գիրը՝ կրակի տալով ջուշահանոցը։ Կայ
տակաւն Քինոն՝ անհատականութեան
տէր բանուորուն, կան մանուկ Մա-
հարիի մանուկ ընկերները։ Բայց տիրա-
կան երկու գէժքերը մեծ-մայրը եւ Իշ-
խանն են։

Նրկուքին աւ կերպարները անաւարտ
ըլլալու տպաւորութիւնը կը դործեն։ ա-
ռաջինինը՝ որովհետեւ կ'ամբողջանայ
լարունակութեան մէջ, երկրորդինը՝ ու-
րովհետեւ տրուած է ճեպանկարի ար-
ուեստով՝ յատկանշական գիծերու ցայ-
տուն սեւեռումով։

Մասնաւոր տեղ մը ունի նաեւ Աղ-
րինը՝ Մահարիի քոյրը։ Սիրտ ճալող
յուզումով տրուած բնադանցական կեր-
պար է Աղրինը, ո'չ անոր համար որ ան-
հատականութիւնն է զօրաւոր, այլ ու-
րովհետեւ բնութեան տարօրինակ մէկ
խաղով վերածուած է տարերային ուժի՝
խելադարութեան ու համարութեան ան-
թափանց պատուարինով բաժնուած իր
նմաններէն, հող ուտող եւ զազանային
մոլորեցող մանուկներ ծեծող պատու-
հասի։ Փշաքաղող յուզում կայ մանա-
ւանդ Աղրինի նուիրումը հատուածի
վերջաւորութեան։ Մահարի խօսքը
կ'ազդէ քրոջը, որովհետեւ սիրտը լեցը-
նող յուզումը չի կրնար այլեւս պահել
երրորդ գէժքով տրուած պատմութեան
մը սահմաններուն մէջ։

Պաւ սեւ աչքեր ունէիր եւ ունէիր
գեղեցիկ հասակ, զու աշխարհ եկար եւ
ունէիր իրաւումք ապրելու, սիրելու եւ
սիրուելու, բայց եւնց կեանքիդ առա-
ւօտեան քա կեանքը դարձաւ մի գարեհա-
րելի գիշեր։ Պաւ եղբայրը դեռ ապրում
է, սիրելի Աղրին, բայց մա չի մոռացել
քեզ։ մա կը ցանկանար, որ քո'ւ էլ հաս-
նէիր այս արեւոտ օրերին...

Իմ քոյր, Աղրին...

«Մանկութիւնը պատմութիւնն է
նաեւ մանկական սրտառուչ սէրի մը եւ
առհասարակ մանկական աշխարհի՝ հա-

րադատ հոգեբանութեամբ, թարմու-
թեամբ ու թրթիռով տրուած։ Գեղեցիկ
է եւ հաճելի մանկական խաղերու, պո-
ռոտախօսութիւններու, մեծերը կապկող
արարքներու շարքը։ Յեղափոխական
միջոցաւորի մէջ յեղափոխութիւն խաղա-
ցող եւ կուսակցական մրցութեան քա-
ղաքին մէջ մատ մը հասակով գլուխակ-
ցականը վարձած մանուկներու միամիտ
լըջութիւնը միաժամանակ ծիծաղելի է եւ
սրտազրաւ։ Բայց սրտառուչ է մա'նա-
ւանդ սքանչելի գիւտերով համեմատած
սիրովէպր մանուկ Մահարիի եւ յուսեր-
ժական իդականի ներկայացուցիչ Ղլամ-
եայ Նաղելին։ Այս հատորին մէջ տրուած
ծր սիրովէպր նախաբանն է միայն, որ'ն
վէպը «Պատանեկութեան» բաժին պիտի
իյնայ, բայց արդէն սէրի ամբողջ խոր-
հուրդն ու թարմութիւնը խտացած կեր-
պով կայ այն քանի մը էջերուն մէջ, ու-
րոնք «Աղլիկը» կը ներկայացնեն։

Դիտումնաւոր կերպով այս վերնա-
պիւրը տրուած է հատուածին՝ մասնաւոր-
րէն ու պարագայականէն վեր՝ խորհրդ-
դանշական արժէք մը տալով հերոսու-
հիւն։ Սէրի համատարած օրէնքին բոլոր
տարբերը կան գեղեցիկ այս էջերուն
մէջ, որոնք յուզումով, բայց նաեւ հեզ-
նական սրամտութեամբ մը կուտան Մա-
հարիի առաջին սէրի եւ առաջին յուսա-
խարութեան պատմութիւնը։

Բո'ւն սիրովէպը կը սկսի մանկա-
կան պարծենկոտութեան խօսքերով։ Նա-
պիւն՝ հարուստի աղջիկ, հպարտ է ի-
րենց ջրհորով։ Ձի կրնար տանել իր մա-
նուկ ընկերով հակաճառութիւնը. «Արի,
կ'ըսէ, արի, տես ինչ խոր է մեր խորքը»։
Կ'երթան։ Ու հենու, հորի յատակում,
յոտակ ջրի հայելում՝ Մահարի կը տես-
նէ Նաղելիի եւ իր գլուխը կողք-կողքի
եւ զարմանալիօրէն ներդաշնակ։ Ուռվէ
բռնուած՝ կ'առաջարկէ.

— Արի մէյտեղ պսակուե'մք...

Պատասխանը անգուժ է բոլոր սէր
մերժող խօսքերուն պէս.

— Ես իշխանի հետ կը պսակուեմ...

Ու մանուկ մարդու բոլոր պատճառաբանութիւնները տեղոր կը մնան մանուկ կնոջ երազին առաջ. որ պատկուենք, ես, Իշխան, զիշերով կ'երթամք ազրիւր աւ... տղայ կը պիտեմք...

Տարիներ վերջ կու գայ անուշ ու դառն եղբակացութիւնը՝ սիրային յաւիտենական պատմութիւններու յաւիտենական եղբակացութիւնը.

Երբե՛ք, երբե՛ք, ինձ այնքան բախտաւոր չեմ գտցել, որքան այդ օրը, ջրհորի մօտ, երբ Նազիլիմն ներս փախաւ. եւ ինձ թռչեց մեծ-մեծակ, ջրհորի մօտ, ջրհորի մօտ...

Ձգացումէն վերջ կայ նաեւ զգայութիւնը, աղբիկէն վերջ՝ կինը։ Յաջորդ հատուածը արդէն այս վերնագիրը կը կրէ։ Հոն Մահարի կը պատմէ մանկական իր աշխարհին մէջ զգայական խորհրտում առաջացնող առաջին դէպքերը։ Կարճ է նաեւ ա՛յս պատմութիւնը, բայց խորապէս հարգատա և տպաւորիչ։ Բազմապիսի է երկու մասէ՝ առաջինը լուրջալու միջնորդէ մըն է, որու հերոսուհին փոքրիկ Թուրօն է, երկրորդը՝ աւելի խռովիչ՝ կը վերաբերի հասուն կնոջ մը շոյանքին։ Երկու բաժիններուն մէջն ալ հարապատօրէն արտայայտուած է մանկական հոգիի միամտութիւնը եւ խորհուրդի սէրը։

Ապրումով ու խոր յուզումով ծանրացած «Մանկութեան» միջնորդը կը պայծառանայ երբեմն, կը քաղցրանայ մոլորով ու սրամտութեամբ։ Գիրքի ըսկիւրէն մինչև վերջը, ծանրակշիռ վայրկեաններու բացառութեամբ, զգալի է զուարթախոհութեան զուտ ալիք մը, որ պատմուած դէպքերուն ու ներկայացուած դէմքերուն կու տայ առօրեայ, պարզ նկարագիր եւ կը մեղմէ դաժան յիշատակներու ստեղծած տպաւորութիւնը։ Այս զուարթախոհութիւնը արդիւնքն է հեղինակի ինքնիրեն հանդէպ ունեցած որոշ ներողամտութեան, մանկութեան տարիներու հոգեբանութեան հանդէպ տեսակ մը հեղեանական ու միա-

ժամանակ համակիր կեցուածքի, որ անշուշտ հասունացումէն կը ծնի, բայց նաեւ կարօտալի ակոսանքէ մը։

Միամտութիւնը կ'արտայայտուի մասնաւորապէս «Հոսարակական աշխատանք» հատուածին մէջ, որ հեղինակը հեղեանական ոճով կ'ողակոյզէ մանուկներու «յեղափոխական» գործունէութիւնը։ Մահարին եւ իր ընկերները խումբ կը կազմեն, «Կուսակցութիւն» կը խողան եւ որպէս նպատակ կ'առաջադրեն «Ջարդել թուրքերին եւ ստեղծել իսկական Հայաստան»։ Ամբողջ հատուածը ծիծաղաւարտ է, երբեմն նոյնիսկ ծաղրանկարային։ Այս է պարագան հատուածի այն մասին, որ ատրճանակի միջնորդէ կը պատմէ։ Իր ասպետանը պաշարող եւ սպառնական կեցուածք ունեցող խաղընկերներուն վրայ աղկելու համար՝ Մահարի սնտուկէն կը հանէ հօրը պարապ ատրճանակը եւ անով կը սպառնայ ընկերներուն։ Դուրս պարզեցի ատրճանակի փոքր, կ'ըսէ, եւ ասարսփանար գունացի. փախէ՛ք, քէ չէ՛ կը կրակեմ։

Այս բոլորը կը ներկայացուին հեռաբերաւարտ պատմեցածներով մը։ Հեղինակի որդեգրած կերպը հարապատօրէն կը ծառայէ իր նպատակին. անշուշտ հատուածներու մէջ կու տայ առանձին միութիւն մը ներկայացնող նիւթեր, բայց անոնց շարքը կը դասաւորէ այնպէ՛ս, որ ժամանակագրական զարգացում մը պահուի եւ ստեղծուի շարունակուող մէկ պատմութեան տպաւորութիւն։ Այս նպատակով ալ՝ հատուածի մը մէջ յիշուած մանրամասնութիւն մը իր շարունակութիւնը կը գտնէ յաճախ ուրիշ հատուածի մը մէջ, կամ անկարելի թուող դէպք մը յանկարծ կ'օգտագործուի յետագային։ Այսպէս՝ ատրճանակի պատմութեան սուտը, Մանուկ Մահարին սնապարծութեամբ կ'ըսէ թէ Իշխանը տուած է զայն իրեն։ Պայմաններու թելադրած սուտն է, անկարելի է ըստէութեան։ Բայց շարունակութեան մէջ կ'օգտագործուի ան, «ճակատագրական»

վայրկեանի մը. յամառող նազելին համոզելու համար՝ մանուկ սիրահարը կը յոխորտայ. Իշխման ասործանակ ի տունէն ձի:

Մահարիի պատմելու եւ նկարագրելու բացառիկ շնորհը կը յայտնուի արդէն յուշերու այս գիրքին մէջ: Կը պատմէ երբեմն պարզ ու հարթ ձեւով, պատմութեան հեղասահ ընթացքովն իսկ անհրաժեշտ հետաքրքրութիւնը առաջացընելով, երբեմն ալ կը դիմէ խորհուրդատեղծող անսովոր պատմելակերպի մը: Հօրը մահուան վերաբերող հատուածը, օրինակ, կը սկսի այսպէս.

Յիշում եմ որ մէկը մնաւ, քէ՞ ըստ պանեղիմ, քէ՞ իյեմ սպանեց:

Յետոյ կու տայ դէպքի զանազան մեկնաբանութիւնները, ապա քեռիին խոստովանութիւնը եւ հատուածը կը վերջացնէ նոր տողի վրայ իր ամբողջ խորհուրդով կանգնող առանձին բառով մը. «Մութ»: Ժիշդ մութի տպաւորութիւնն ալ տեղծուած է արդէն:

Ընթերցողի հետաքրքրութիւնը սըրբելու խորհրդաւոր այս կերպին կը միանայ բնամադական իսկական շնորհ մը, որ կենդանութիւն կը ստեղծէ եւ շարժում: Անձերը, որոնք մասին կը խօսուի, առարկաները, որոնք կը յիշուին, անշարժ դիրքով չեն ներկայանար մեր երեւակայութեան. պայմանադրական միջավայրի մը մէջ կենդանութիւն կը ստանան, կը շարժին խորութիւն ունեցող աշխարհի մը մէջ, որ երեւակայութեամբ ստեղծուած ըլլալուն համար նուազ իրականանման չէ: Դիրքերը, դասաւորումը, տեղափոխութիւնները հետանեցի՞նք են ուղղակի: Այս տեսակէտէ յատկապէս յաջող է վերջաբանը, որ գործող դէմքերու վախճանը պատմելէ աւելի բան մը կ'ընէ, խտացած կերպով կու տայ միջնուրտը, որուն մէջ ապրեցան, կարծես մնայուն կերպով կը սեւեռէ զանոնք տրուեալ աշխարհի մը մէջ՝ թատրոնի յաւերժական վերջին տեսարանի մը պէս:

Կենդանութեան այս տպաւորութիւնը աւելի կը խորանայ լեզուական իւրաքանչեւ խորութիւններու յարգումով: Վանի բարբառի գործածութիւնը միայն դաւառական արտայայտութեան համը փոխանցելու չի ծառայիր, այլ իւրաքանչիւր դէմքի տեղաւորումին՝ իր հարազատ միջավայրին ու մթնոլորտին մէջ:

Անշուշտ կը մնան տակաւին արտայայտութեան կարգ մը թերիւններ, խորթութիւններ, որոնք կը սրբագործին արդէն յաջորդ երկին՝ «Պատանեկութեան» մէջ. բայց կարելի է ըսել որ 1928-ին Մահարիի արտայայտութեան կերպը իր հիմնական մեղաւորումը ստացած է արդէն:

Այս կերպը կը յատկանշուի բանաստեղծական թախծոտ խորհուրդով մը, որուն կը զուգորդուին սրամիտ հեղանքը եւ պատկերաւոր ըսելու ձեւերը, որոնք իր կշռութեամբ արձակին, յստակ, ջինջ լեզուին կու տան ոգեկոչական բացառիկ արժանիք մը՝ ընթերցումը վերածելով իսկական վայելքի:

Մտ յիսուն էջոց պզտիկ գիրք մըն է «Մանկութիւն»ը, բայց մեծ է անոր արժէքը: Հանգրուան նշող երկ է, անցեալի առաւելութիւնները համադրող եւ տպագայ հնարաւորութիւններու խոստումը բերող: Բայց նաեւ ինքն իր մէջ հետաքրքրական ու արժէքաւոր է ան, որովհետեւ կեանքի խորհրդաւոր ու խուլ ուժերու, մարդկային թաքուն կամ քայայտ զգացումներու հանդէս է: Խորհրդէն անցնող ու հոգիները այլեւս ուղի հոսանքներ կան հոն՝ արտաքին հանդարտութեամբ ըստած խօսքերու կամ կատարուած շարժումներու ետին, ողորդութիւններ՝ մանկական միամիտ մտածումներու կողքին, բայց նաեւ առողջ ծիծաղ ու համակող թախծ: Այսինքն կայ հոն կիս'նք՝ մարդկային համատարած կատակերգութիւնը, անցեալի յարութեան եւ մեռած քաղաքի մը ոգեկոչումին մէջէն գիտուած:

Մարդկային կատակերգութիւնը ներ-

կայացնող ձեռնարկ է նաև «Պատանեկութիւն»ը՝ շարունակութիւնն ու կատարելագործումը «Մանկութեան»՝ որպէս անցեալի վերստեղծում, բայց մանաւանդ յայտնուած հնարաւորութիւններու իրադրոժում: Մտահոգութիւնն ու նպատակը միեւնոյնն են, մթնոլորտը՝ նոյնպէս: Նորութիւնը հոյակապ այն ուսումն է, որ Մահարի կ'իրադրծէ արտայայտութեան, արուեստի՝ կալուածին մէջ:

«Պատանեկութիւն»ը ներշնչումի գեղեցիկ արտայայտութիւն է, բայց նաև գրական քեֆնիքի սքանչելի իրադրոժում: Եւ երկու այս տունայնորու հասարակչութեան ներդաշնակութիւն մէջն է քայքայիկ իր արժէքը:

Նիւթը կը պահանջէ ոգեկոչական մօտեցում ու բանաստեղծական երեւակայութիւն: Մահարի իսկական գիւտ մը կ'ընէ երբ կ'օգտագործէ այն միակ կերպը, որ առաւելագոյն հարադատութեամբ կը պատշաճի այս կերպին. հրազային արամարանութիւնը՝ յաջորդական դանազան տեսարաններու ազդեցումով, իրար մէջ անցումով, ձուլումով:

Թեֆնիքի այս գերազանց ներկայութեամբ երկրորդական արժանիքի կը վերածուին այն տարրերը, որոնք «Մանկութիւն»ը կը յատկանշեն արդէն, այսինքն անցեալի վերստեղծումը եւ մանկական հոգեբանութիւնը: «Պատանեկութիւն»ը կը մնայ անշուշտ արժէքաւոր վկայութիւն մը առհասարակ մանկական հոգեբանութեան և մասնաւորաբար պատանի Մահարիի հոգեբանութեան մասին, բայց իր հիմնական արժէքը այլ է. իր բոլոր միջոցներուն տիրող եւ զանոնք սաղանդով գործածող գրողի վկայական մըն է:

Ձիւնեալն է մանկութիւնը, ապա ձմեռակիւն ու մանուշակը, իսկ պատանեկութիւնը վարքաւոր գարունն է, վարքաւոր կանաչները, վարքաւոր ծաղիկներն ու վարքաւոր արեւը:

Վարար հոսանքն է նաև կեանքին,

որ անրնական պայմաններու մէջ կը յորդի, կ'ելլէ իր բնական հունէն, կը հոսի գաղթի ճամբաներու երկայնքին, խոյանկան թափով կը քշէ կը տանի իր հետ մանուկ ու ծեր, կը տարտաբերէ որբանոցէ որբանոց, հիւանդանոցէ հիւանդանոց, կը նետէ նոր գոյութեան մը սեմին:

Մահարի «Պատանեկութեան» մէջ կը ներկայացնէ կեանքի տարեւային այս փոթորկումը եւ ի՞նչ պատմութեան մէջէն կու տայ արիւնքոտ շերտ մը ամբողջ քաղաքի մը, ամբողջ ժողովուրդի մը պատմութիւնն:

Մթնոլորտը, յատկապէս առաջին 25 հատուածներուն մէջ, բանազուշական է, լեցուն անօրինակ տրամադրութեամբ մը, որ հրբեմն կը վերածուի բնազանցական սարսափի, անհեթեթ խռովքի, հրբեմն՝ հեղինակի ժպիտի կամ դառն ծիծաղի, բայց միշտ կը պահէ անհանգրստացնող իր բնոյթը: Յիշողութեան մէջ յառնող դէմքի մը ուղղելով խօսքը՝ հեղինակը կ'ըսէ. Սիմոն, ես քեզ տեսնում եմ մտքի արմատներով: Բոլոր դէմքերը «տեսնուած» են միեւնոյն ձևով, բոլոր դէպքերը՝ ոգեկոչուած նոյն խորհուրդին մէջէն: Այդ արեւմուշտը գիւրդի մթնոլորտն իսկ է:

Մահարի կ'արտայայտուի տեսարաններով՝ միտքերու բնազանցական այդ մշտնջեն մէջէն ուրուագծուող: Առաջինը ժենյուսի տեսարանն է, իր խօսքով՝ հրաժեշտի: Որմանկարի պէս բան մըն է. լքող քաղաքի խորքին վրայ կը գծազրուի կարծես ամբողջ աշխարհի մէջ առանձին մնացած ընտանիք մը, իրականին մէջ սահմակեցուցիչ խռովքով, բայց հանդարտութեան արտաքին նշաններով: Մեծ-մայր, մայր, քույր, եղբայրներ խուլ գողէ մը բռնուած, բայց պաղարկուն մնալու տարօրինակ հպարտութեամբ մը՝ կը խօսին, սովորական շնչով, մեկնելէ առաջ գուռը գոցելու կամ աշխարհ տեսնելու մասին:

Յետոյ տեսարանները իրարու կը յաջորդեն, իրար կ'ամբողջացնեն:

Յաջորդ տեսարանն ալ ամբողջ հաստ-
ուած մը կը բռնէ: «Հանդիպումներու
ձևին տակ կը ներկայացնէ ճանքուն եւ
անդադարձ քաղաքացիական պատերազմը, խո-
սակցութեան պատճառներ, յայտնութե-
անական մթնոլորտով նոր մէկ որմանը-
կար: Բայց երկրորդ այս տեսարանէն
վերջ ներկայացումի նոր ձեւ մը կը ռը-
գեցրուի. բանդադուական վերյուշի
կերպը: Երբեմն իսկական երազ է կամ
դառանցանք, երբեմն երազի ձեւին տակ
տրուած պատմութիւն, բայց մտեցումի
ձեւը միեւնոյնն է միշտ ընդհատել զէպ-
րորու ժամանակագրական ընթացքը, վի-
րադառնալ անցեալ եւ տալ պահ մը կամ
տեսարան մը անցեալէն: Այսպէս կը վի-
րականգնուի կարճ այն ժամանակաշրջ-
անը, որ կը բաժնէ «Մանկութեան» եզ-
րափակումը «Պատանեկութեան» սկիզ-
բէն: Երեւակայութեան յետադարձ հայ-
եացքով կը վերստեղծուին պայարումի,
կրիւն եւ ազատագրութեան օրերը, կը
վերականգնուի թեյը Մահարիի մանկական
սէրի պատմութեան. միշտ միեւնոյն եւ-
րազային ոգեկոյտի տրամաբանու-
թեամբ, այսինքն ո՛չ զէպերու բնական
ընթացքով եւ ժամանակագրական զար-
գացումով, այլ՝ բանդադուական պատ-
կերներու յառնումով՝ երեւակայութեան
պատժութիւն վրայ: Հեղինակը կը միջա-
մբեւէ, անշուշտ, որոշ դառաւորում ըս-
տեղծելով իրար հրող պատկերներուն
մէջ. բայց այդքանով կը գոհանայ, Ու-
լաւ կ'ընէ. որեւէ ուրիշ մտեցում նոյն-
քան հարազատ կերպով պիտի չյաջողէր
տալու խենթեցնող այն մթնոլորտը, որ
զաղթինն է:

Մի հաստ ծառ է բարձրանում գետ-
Ուի տակից: Նրա ճիւղերը սրեր են եւ
հրացաններ, տերեւները փամփուշտներ
են, իսկ մրգերի փոխարէն կախուել են
սսիւմիք-վիսմներ, ախ, քրքամ «սի-
միք-վիսմներ»...

Բանդադուական այս պատկերը դա-
շտփար մը կու տայ զաղթի վերաբերեալ
հաստատենքու մթնոլորտի մասին: Ա-

մէն բան տարօրինակի, ահաւորի կնիքը
կը կրէ հոն: Խօշակաւ տրշաւ մըն է կար-
ծես նախնական, մութ ուժերու, որոնք
մարդիկը կեանքի բնական պայմաններէն
զուրս հանելով կը նետեն յայտնութե-
անական ոլորապտոյտի մը մէջ:

Այս մթնոլորտի ստեղծումին կը նը-
պաստէ նաեւ լեզուական իւրայատկու-
թիւններու տեղին գործածութիւնը: Հո՛ս
ալ Մահարի կը մէջբերէ Վանի բարբա-
ռով խօսակցութիւններ, որոնք անշուշտ
բնականութիւն կու տան ամբողջին, բայց
նաեւ կը շեշտեն բանդադուական բնոյ-
թը ներկայացուած անցքերուն: Բարբա-
ռը կը ստեղծէ հեռաւորութեան, տար-
րերութեան տպաւորութիւն մը, որ հա-
րադատօրէն կը պատշաճի «Պատանեկու-
թեան» անսովոր մթնոլորտին:

Նոյն նպատակին կը ձգտի նաեւ բա-
ռակրկնութեան քեթմիքը, որ կարծես
խռովք կը ստեղծէ ընթերցողի հոգիին
մէջ, հոն կ'երկարաձգէ արձագանգը
կրկնուող բառով ստեղծուած տպաւո-
րութեան.

Եւ Որանց այրքննարանում երկու
տառ կայ միայն, երկու տառ:

Կամ՝

Նրա աղմուկի մոման իմ կեանքում
աղմուկ չեմ լսել, չեմ լսել:

Տարբեր ձեւով մը միեւնոյն տպա-
ւորութիւնը կը գործեն նաեւ միարառ
նախադասութիւնները, որոնք տեղ-տեղ
կէտադրութեան պէս կ'ընդհատեն պատ-
մութեան միալար ընթացքը, միաժամա-
նակ կը համադրեն արդէն իսկ արտա-
յայտուած տպաւորութիւնը եւ արձա-
գանգի ձեւով կ'երկարաձգեն դայն ըն-
թերցողի երեւակայութեան մէջ:

Դադք: Փախ: Խուճապ:

Կամ՝

Գիշեր, խաւար, խաւար:

Նկարագրութեան պակաս ձգածը միա-
բառ այս նախադասութիւնները կը լրա-
ցընեն:

Գ. Ե.

(Շար. 2)

Վ. ՕՇԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հակառակ իրենց զուգահեռական կազապարներուն, գորգի մրափող վաճառականի թաթերուն նման, այս երկու բառերը բոլորովին անվնաս են, այսպէս քով քովի, իրարու անծանօթ՝ ատամնաբոյժի սպասման սրահին մէջ: Մանաւանդ մեր օրերուն, երբ այլեւս ժամանակամբէպ, տէմօտէ համ մըն ալ ունի իրենց կենակցութիւնը, ինչպէս զեղծկական պարերը քաղաքի սրահներուն, ցարական ազնուականութիւնը՝ մեր հանդէսներու գեղարուեստական բաժինը, ինչպէս մենք, Հայերս, մեծ մասով:

Գրականութիւն եւ Բարոյական, սակայն, բոլորովին ուրիշ յարաբերութիւն կը հաստատեն: Արուեստի որեւէ գործ, ձեւով մը իրականութեան հանդէպ անձնական դիրքաւորում մըն է, այսինքն դատում մը: Ոչ թէ սպասման սրահ՝ այլ անկողին ու անյաղ, անվերջանալի սիրաբանութիւն մէջնալէս ու հոն ալ հարց չի ծագիր, կացութիւնը բնական է:

Երկու պարագային ալ ուրեմն, բարոյականութիւն կամ բարոյական՝ դրական աշխատաւոր կրնայ իր առանձնութիւնը իր ուղած ձեւով լինել ու զարդարել, իղճի աճենայն հանդարտութեամբ, Արուեստի կապուածին մէջ,

միայն թէքնիք հարցեր կան, գրողի արհեստին վերաբերեալ տաղանայներ (նախանքի զտում, արտայայտութեան միջոցի յարմարութիւն, խտացում, խորհրդանշաններու յստակութիւն եւլն): Այդպէ կամ հասկնալէ վերջ մարդկութիւնը՝ ան կրնայ զայն անտեսել: Քաղաքական իրականութիւն, ազգային կըրակ, կրօնական համոզումներ, այս բոլոր լլկուած բառերը կրնային խենէշ, ծեր խմբագիր մը կամ ընկերային բարքերու ինքնակոշ, շատախօս Եհովան երջանկացնել: Բայց գրապէսը շատ ալ լուրջի չ'առնէր ամաթէօրներու խրատները ու գրոց-բրոցներու ապահովագրւած իմաստութիւնը: Այդ բառերուն ինք տարբեր իմաստ կու տայ: Ազատութիւնն իսկ, արտայայտուելու ազատութիւնն ոչ իր բացակայութեամբ, ոչ ալ մանաւանդ ներկայութեամբ կրնայ ազգել զըրելու ու իրք գրող ինքզինք կարելի չտփով իրազօրծելու ընթացքին վրայ: Պատճառը պարզ է՝ արուեստի գործի մը առաջին (կը վարանինք ըսելու գլաւորեւորագոյն, կողմ բռնած չըլլալու համար) իմաստն ու արժէքը՝ զայն մէջտեղ հանողը կու տայ. երկրորդը՝ հանրութիւնը, որ գործին անփականատէքն է միւս

այս երկու արժեքները իրարու հետ ախճան կապ ունենալ՝ որքան բառի մը նըշանակութիւնը ու զայն գրելու եղանակը: Լուսինան խրամատ մը կը բաժնէ իրարմէ: Ռասինէն Պալլաք ու Պալլաքէն Բրուսթ՝ գրողի աշխարհը ու ընթերցող հանրութեան աշխարհը՝ Արեւմտեան ու Արեւելեան պլոգներու նման՝ իրարմէ խզուած ու զիրար չհասկնալով ապրած են:

Գարը, սակայն, փոխուած է: Ու ծնունդ տուած նոր տիպարի մը, նոր աշխարհի մը — մտաւորականին, որ գրող է ու հանրութիւն նոյն ատեն: Ոչ-թէ քեզ հարցեր սկսած են իրենց կարեւորութեան հսկայ ծաբաւը յագեցնել: Արեւմտաւարկն ու հանրութիւնը սկսած են զիրար չարձարել: Վիպապաշտներու ներշնչումի ցաւերը, զգայապաշտներու մոռաց տրամադրութիւնները, անհատապաշտներու ողբն ու կոծը՝ հիւանդ կատու թիւադրող վիճակներ կը թուին, քովն է վեր արդէ մտաւորականութիւնը բոկոտող տաքնապներուն:

Բազմոցներու անկիւնները բուրդ հիւսող, զրամ ու ձանձրոյթ հոտող բազմութիւններուն համար, արուեստի գործ մը տա պայմանները լրացնելու է — խելքի պառկել, հաճելի ըլլալ ու շարժուել խիզճը: Կան բազմութիւններ ալ, սկզբ ու անհամբեր՝ որոնք արուեստի գործէն կը պահանջեն որ տայ իրականութիւն մը՝ որուն փորձեն յարմարիլ եւ որ չհէ որ քնանան խիզճերը: Բարոյականութեան ստեղծած տաքնապը այս երկու հակադիր պահանջներու աքցանին բռնուած է:

Այս երեւոյթը նոր է գրականութեան պատմութեան մէջ: Առաջ, երբ գրական երկ մը անբարոյական գտնուէր, կը դատուէր, կը դատապարտուէր, կ'այրուէր՝ հրապարակաւ, ու հարցը կը փերջանար: Ու բոլոր խեղճ ու ճապատ անձերը, որոնք վճիռը արձակած էին՝ բացարձակապէս իրաւունք ունէին, այսօրուան տկնոցով իսկ: Ի վերջոյ, գրական ամէն անբարոյական երկ ըմբոստա-

ցում մըն է ընկերութեան դէմ, այդ ճնշիչ ներկայութեան ու բացակայութեան դէմ՝ զոր ոչ կարելի է ընդունիլ ոչ ալ ուրանալ: Օրինակ մը տանք. 1782 թուին Choderlos de Laclos-ի *Les Liaisons Dangereuses*-ը հրատարակուեցաւ: 1823-ին արդէն Ֆրանսական ոճրագետ ատենանը զայն դատապարտած էր, որպէս «հանրային բարոյականութեան դէմ նախատինք մը» (Իրականութեան մէջ, գիրքը արգիլուեցաւ հեղինակի քաղաքական գործունէութեան հետեւանքով): Բայց մինչեւ 1960, այսինքն մօտ 140 տարի, այս վճիռը ի զօրու մնաց:

Իսկ արդէ ժամանակներու մէջ, ամէնէն նշանաւոր երկու «անբարոյ» հրապարակուած ու սեւ ցանկի վրայ գրուած գիրքերը եղան D. H. Lawrence-ի *Lady Chatterly's Lover*-ը որ 1928-ին գրուած՝ ցանկի վրայ 1934-ին անցաւ. ու Henry Miller-ի *The Tropic of Cancer* ի (ցանկի վրայ անցած 1934-ին): Ամբաստանութիւնը՝ թէ լսելի են ու ընկերային բարոյականութիւնը կը խաթարեն՝ կցուած մնաց մինչեւ վերջին տարիները: Յիշե՛ք նաեւ՝ Baudelaire-ի *Les Fleurs du Mal* (1857) Celine-ի *Voyage au bout de la Nuit* (1932), J. Joyce-ի *Ulysses* (1922) բոլորն ալ նոյն մեղքով ամբաստանուած:

Այսօր, այս գիրքերէն եւ ոչ մէկը սեւ ցանկի վրայ է: Հոս նպատակ չունինք ասան ու դիւրին յարձակում գործելու մարդոց կեղծաւորութեան վրայ, ոչ ալ ողբալու մեր ժամանակներու բարոյական անկումը: Այդ հիւանդ հաճոյքը ուրիշներու կը ձգենք: Յստակ է սակայն որ գործ մը որ 30 տարի առաջ անբարոյական էր, է՛ նաեւ այսօր, Հարիւր տարի առաջուանը... Ռոմ'ն մշտնջեն կ'անցնի այսօր արդիւնի սեռային գործարաններու կազմութեան վրայ գրուած գրքի մը հրատարակութիւնը: Սակայն երբ 1863-ին, երիտասարդ գրող Արմենակ Հայկունի հրատարակեց Գաղտնիք Բնութեամբ կամ Ակզբունք Մարդկային Մեղակալութեամբ գիրքը, հրաքներու խաթարիչ՝ անուանուեցաւ:

նոյնն էր պարսկան Մ. Մամուրեանին, որ «անկրօն» անուանուեցաւ Տէրոյննցի կողմէ, երբ Վոյթէրի Զատիկը թարգմանեց 1853-ին: Ի՞նչ փոխուած է որ հիմա կ'արտօնուի նման ու աւելի յանդուգն դրութիւններու հրատարակութիւնը: Հաւանաբար աւելի զարգացած ու լայնածիտ դարձած ենք, կամ ալ՝ հաւաքաբար վատասերած ենք որ ալ չենք աղղուիր սեռային մտերիմ կեանքի պատկերացումէն: Եւ կամ ալ՝ այնքան անդիմադրելի ու կենսական ապրում մը դարձած է սեռայինը, որ չենք կրնար զանազանել վայելքը զխուլթենէն:

Այս բոլորը հաւանաբար ճշմարտութեան սողկոտ մը ունին: Բուն պատճառը սակայն տեսլի պարզ է: Գիրքերը, մարդոց պէս, կ'աճին, կը բազմանան, կը տարածուին: Բարոյականութիւնը, ընկերային երեւոյթ՝ կը փոխուի մարդոց ըմբռնումներու ու պատմութեան հետ. ու եթէ մարդոց մեծամասնութիւնը ծանօթանայ երկի մը ու ալ չզայլթակդի՝ այդ երկը կը զարդի անբարոյական ըլլալէ: Այս է պարսկան Լաքո-ի, Սէլինի գործերուն, Frank Harris-ի My Life and Loves (1926) հատորին եւայլն:

Երկրորդ պատճառը, կրկին ժամանակի ընթացքէն կախուած է, սա տարբերութեամբ որ, այս անգամ գրողն է որ կը պարտադրէ մարդկութեան իր ճշմարտութիւնը: Marquis de Sade-ի Justine et Juliette-ի 10 հատորները (1797) 150 տարիէն միայն յայտնաբերեցին իրենց դրական ու իմաստասիրական արժէքը, մինչ Չոյս-ի Յուլիսիւսը 40 տարիէն միայն:

Բայց ամէնէն յատկանշական երեւոյթը Լօրէնս-ի ու Միլըր-ի պարագան է:

1961 Դեկտ. 5-էն 15, Սան Ֆրանսիսքոյի մէջ տեղի ունեցաւ Թրօրիֆ օֆ Փէնսըր-ի պատմական դատավարութիւնը (*): Գրքին հեղինակը ամբաստան-

ուած էր որպէս «հերետիկոս, ինքնացուցադրիչ (էկզիպիշնիսթ), Պուտտայական ձգտումներու տէր, իր նախադասութիւնները չվերջացնող, ոչ-ամերիկեան վարուելակերպի տէր, վէպին մէջ նիւթ չդնող, վիպասան՝ որու հերոսները նախաճաշի ատեն սիրարանութիւն կ'ընեն, տարագիր, անգործ ու դրպանը ծակ: Վերջապէս, որպէս մէկը որ կը մերժէ յանցաւոր զղալ, երբ սեռը զուտ ժամանցի տեղ կը գործածէ», 12 երգուեալներէ բաղկացած Ժուրին անպարտ հռչակեց գիրքն ու հեղինակը:

Միլըրի գրքին ինչպէս նաեւ միւս հատորներուն՝ Tropic of Capricorn, Black Spring եւայլն գրական արժէքը ոչ ոք կ'ստեղծի կ'ենթարկէ: Շատ քիչ գիրքեր այնքան տաղանդով ու ցատուով կը յարձակին մեր փոստը քաղաքակրթութեան վրայ որքան Թրօրիֆը (հակառակ որ շատ ալ յայտնի չէ թէ ինչի՞ կը ծառայէ այդ յարձակումը): Հաւանաբար հաճոյք ու ազատագրում կայ այդ տեսակ աստիութեան մէջ: Ոչ մէկ մեծ գրողի քով սեռային գործարաններու հայթայթած բոլոր կարելի հաճոյքները ու զգայութիւնները (ձայն, հոտ ու դոյն իրարու խառնուած, հեշտանքի ու նողկանքի միջեւ բոլոր աստի-ճաններուն), այնքան մերկացած կը ներկայացուին, մերկ՝ իրենց ծածկոյթներէն ու մերկ՝ լուսթեան դաւադրութենէն, ամօթի ու պիղծ նախապաշարուածներէն: Եթէ մեր քաղաքակրթութեան խոցելի կողմը սեռի թրօմաթիվն է, ուրեմն այդ կէտէն հարուածելու է: Առկէ անդին սակայն, Միլըր, իր մտաւորական, սեռի ու սեռականութեան իմաստասիրութիւն մը կը յղանայ, զանոնք ապրելով իրը դրական ու առողջ երեւոյթներ, ինչպէս է քանականութիւնը, հաւատքը, բարոյականը եւայլն: Բայց իրը զուտ դրապէտ, իրեն համար բացարձակ, Ժիտեան անկեղծութեան չափ անկաշ-

(*) Թրօրիֆ օֆ Փէնսըր-ի ֆրանսերէն թարգմանութիւնը շատոնց տպուած էր Ֆրանսո, գաղտնի կերպով անշուշտ: Ամերիկայի մէջ եղածը

գրքին ազատօրէն երազարակ համուելու մասին էր:

կանգ իրապաշտութեան, ուրեմն թէ՛ չի կարող ծրար ալ կայ: Գրազէտը իր աղաաւթիւնն է որ կը գործածէ: Բայց ատոր համար յանդիմութիւն պէտք է, պայքար անտես թշնամիին դէմ — յայտարար օտարականներուն տուն մնացած մէջ — լստրամիք աղբիկներուն, յողացաւէ բռնուած վարժապետներուն անարիւն խիզմներուն գաղտնի մեղաակցութեան դէմ:

Լէյտի Զէրբրիի Սիլախարիմ պառագան տարրեր է (*): Դատաւարութիւնը տեղի ունեցաւ 1961-ի ամբան, Անգլիոյ մէջ՝ Լօրէնս մեղադրուող, գիրքէն է որ դատուեցաւ ու միայն երկու յատկանիւններ խնդրոյ առարկայ եղան — բարոյականը ու գրականը (այս վերջինը բոլորովին անտեսուած էր Միլլերի պարագային): Գիրքը կ'ամբաստանուէր որպէս «անբարոյական, գրականօրէն անարժէք, վատասերած, սեռի հանգէպ ստորնացած ու ապականած վերարեբուծ ունեցող գիրք մը, ու մանաւազ՝ դէմ ամուսնական արարքին»: Տեսնեալներով մտաւորականներ, արուստապէսներ ինչպէս եւ եպիսկոպոսներ ատենան եկան ու պաշտպանեցին Լօրէնսի գործը: Պէտք էր բացատրել խեղճ մահկանացու դատաւորներուն թէ Լօրէնսի աշխարհը սեռը չէր այլ սեռականութիւնը, որ վերածուած քնարերգական կերտումի՝ գերազանց էր քան իրենց թաց երազներու յիշատակները ու յամեցող արունքի թաքուն երազները: Կրցա՞ն այդ գայթակղած բարոյախօսները հասկնալ ինչպէս Լօրէնս սօստովի վերադարձութենէն կրնար մազըցիլ միսթիք մշտնջերուն մէջ: Ամէն պառագայի, դատը շահուեցաւ ու գիրքը տնկարար հռչակուեցաւ:

Ձկայ ախոր խելքը դուրս ած մը

(*) Գիրքը իր ամբողջութեամբ տպած ու երթապարակ համոծ էր Քենկուիմ հրատարակչատանը, հակառակ պետական արգելիքի: Կրճատուած տպագրութիւն մը արդէն ծանօթ էր համաբարեան տարիներէ ի վեր (Վ. Օ.):

որ ըսէ թէ նման գիրքեր կը վնասեն հանրային բարոյականին: Ոչ ոք կրնայ լրջօրէն պնդել թէ բառի մը գրութիւն ու կարգացուիլը աւելի վնասակար է քան անոր՝ մեր մտքէն անցնիլը: Փորձեցէ՛ք սահմանել պոռնիկ բառը ու պիտի գտնէք թէ ձեր տրամաբանութեան ճամբաները մշտնջի մէջ կը կորսուին: Հաւանարար միակ ճշմարիտ սահմանումը դեռ շարիտակուն չափանիւնով մը կարելի է: Նշանաւոր Տոքթ. Ուորտի աննշան մէկ խօսքը կայ — կի՛ն մը որ բարեկամի դէմ ամբողջ կ'ապրի ինչո՞վ տարրեր է այն միւս կի՛նէն, որ իր ամուսնոյն գրամովը կ'ապրի... Ինչպէ՞ս սահմանել պոռնը: Կարգութիւնը — դրողին ըսել քաղածով թէ ընթերցողին վրայ բրած տպաւորութեամբ: Մեզի համար առաջինն է միսթիկարեւորը: Լօրէնս իրաւունք ունի՝ երբ կը յայտարարէ — պոռնիկագիր է այն՝ որ իր գրութեամբ կ'եղծանէ ոչ թէ բարոյականութիւնը այլ սեռը: Յետոյ՝ ո՞վ պիտի ըլլայ գրաքննիչը: Ո՞վ կ'ընդունի թէ պոռնիկագրութիւնը իր վրայ որեւէ ձեւով կ'ազդէ: Ու անոնք որոնք ընկերային բարոյականութեան դատաւոր կը նկատեն իրենք գիրքէն՝ աւելի մտահոգ են ուրիշներու առաքինութիւններով քան թէ իրենց անձնական բարոյականով:

Կը տեսնուի ուրեմն թէ բարոյականութեան հարցը ընկերային է եւ ոչ թէ պրական: Ատոր համար է որ ան այնքան սուր հանգամանք կ'առնէ անկազմ նախահական ընկերային կարգերու մէջ: Գրազէտն ալ կը շահագործուի այս հարցով որպէս անհատ եւ ոչ թէ որպէս արուեստի մարդ: Ու այս առթիւ ծագող տաղանայր մտաւորականի տաղանայ է: Արտայայտութեան ազատութեան հետ ան կը գնէ կարգաւոր, տեղեկանալու ազատութիւնը, իրաւունքը (*):

(*) Թրօփիք օֆ Քէնսըր-ի Գալիմ հետեւեալէն: Յերէն մին ձգաւ հրապարակային մամիֆթը: Վեր 210 հարցապի ու ամբիկացի ակամաւոր մտաւորականներ ու հրատարակիչներ կը յայտարարէին:

Մենք Հայերս, շատ զգայուն ենք այս մարդին մէջ: Մեզի համար գրականութիւն ու արուեստ պէտք է կրթիչ դեր կատարեն (այս ալ Զարթօնքի սերունդէն սկսելով ամբողջ Արեւմտահայ գրականութեան դարուն կտակն է որ կը շարկենք դեռ): Գիրքը՝ կա՛մ դասագիրք է, կա՛մ աղօթագիրք, կա՛մ ալ հիւրաւնեակի զարդ (Հայաստանեան հրապարակութեանց պարագային), բայց մարդ էակին մէջ ուրիշ կերպարաններ: Այս մտայնութիւնը սրտահմանաճաշակ ամեմատութիւններ կը ստանայ ինք Թատրոնի պարագային, զոր ինքնուրուշ հողաբարձուի, անեմագի մատուցումն ու վերածած զանգուածի իւրաքանչիւր շոյող գրգռիչ, լաւագոյն իրաւունքն՝ աժան ու թանձր ժամանակը իր հաւուով, Թատրոնը ոչ կը կրթէ մարդոց է ըլլայ ընտանիքին ու զըպրոջն ու արտականութիւնը), ոչ ալ արուեստը բարձր վայելք է: Այս է բուն արեւելի միւլը զոր կը ներկայացնենք

մեր բեմերէն: Սեռականութիւն, անբարոյականութիւն կամ անհաստատութիւն՝ երբեք խնդրոյ առարկայ պէտք չէ ըլլային մեր գաղութներուն մէջ՝ եթէ մենք, հանրութիւն, մեր գաղտնի, ճոթկուած ու անխոստովանելի ներաշխարհին մէջ սենոց այդքան արժէք չտայինք:

Արդ, ընկերութիւնը բարոյականութեւ հակակշիռ ունի՞ գրողին վրայ: Անոր անձին վրան՝ այո՛: Ենթադրեալ որ մտածումին վրայ՝ ոչ: Անշուշտ որ երկը, երբ մատուցուի հանրութեան, հանրային սեփականութիւն կը դառնայ ու ենթակայ՝ անոր արժեւորումին: Սակայն այդ կարեւոր չէ հեղինակին համար, հակառակ որ հիմա ինքն ալ հանրութիւն է ու, նոյն բարոյականութեան հպատակ: Այնպէս որ, եթէ մուրալը, մեր քաղաքակրթութեան մէջ, անպատիւ բան է, ուրեմն եւ անպատիւ է այն գրողը որ իր օրապահիկը հանրութենէն կը մուրայ: Արուեստագէտը իրեն յատուկ բացառիկ, առանձնաշնորհալ բարոյական շի կրնար ունենալ: Այդ բացառիկ բարոյականը ան ունի՞ իր անձին ու իր երկին միջեւ: Բայց սա արդէն բոլորովին տարբեր խնդիր է:

Վ. Օ.

7

«ՄԻՆԵԻ»

«Մոլեբաական Հայաստան»-ի Օգոստոսի 4ամսարին մէջ, պարտիական որոշումներն զործարարելու խումբին անմըցելի ենչար, հր. Գրիգորեան, պէտք տեսած է անզամ մը հետ ցուցարարել մենք իր ամառուտ զէմը: Այս անգամ միջարեանին առիթով: Երբէ չէր մէջը որարեալ է պարտիական ու կամայորէ իր ամբողջ բառամթերը, կրնայ զարեալ իր սորվածը միայն, տեւեռով կանխորոշ որոշումով՝ միջնադարէր, բանուորական շարժումը, զարեալ զային մարտիքը եւ անձուկ իր խաղաղարարուն գիշեր ու զօր զարուն զարեալ մարտամանութիւններ:

Իր բաժանները չեն որ կը շահանային իրենց մեղք հոռւ, այլ չըսածները, տեսնուածները չեն, այլ անտեսածներն են։ Յիշեցնենք օրինակ Վ. Զարեանի հատորով «Գործերի և Բանաստեղծութիւններ»-ը, որ արկած չորս գործերի ու հատուկ գրուած մնացած «Երկիրներ» եւ հատուկ «Երկերի» երկը, յայտ անտեսած է նոյնպէս Վ. Զարեանի զուտ մնացած այլ տասը քերականութիւն արժէք ներկայացնող Զարեանի երկու ծառայուն գործերը՝ «Անկողնային իր ճամբան» (1926) եւ Բանաստեղծութիւն «Մամուլի սահրահները» (1931)։ Առաջինը «Հայերենը» ամառադէ 17 յալորդական ամիսներուն վրայ տարածուած, երկրորդը՝ 26 ամիսներու։ Ի մէջ այլոց գործեր չեն ասոնք, այլ գործեր են, Զարեանի արժանի վաստակին երեք քառորդը, թէ արժանական են թէ որակապէս տեսնուէ՞տաւ։ Մարդը ոչ չիւած այս գործերը, բանի որ մենք ստեղծ անոնց անունները, մեր այս էջերուն ձախակողմեան («Անցորդ») եւ արկողդական («Բանաստեղծութիւն») սիւնակներուն վրայ արտադրեց անոնց՝ մէջ մի բանի հաստատմանը, որպէսզի չը. Գործերը անոր են իր հեռուոր ու մտաւորը ընթերցողներ ճանչնան այդ գործերուն միջնորդը եւ անպա մը եւս տեսնեն, թէ ինչպէս ըսաւ՝ - Կ. Զարեանը - փառաբանուի է մեծ լեհիներն եւ նոյն ինքն

ՈՒՐ»...

յակապ գաղափարները:

Ուրիշ յիշեցնելիք բան չունենք մարդուն արժանաւորութեամբ ո՛չ մէկ օր ապրած աշխարհում: Գրական գէժքի մը վաղից խօսած ատեն Թամարական մը չէ՛ր յիշեցնել լուրջի առնելիք զինք ու դրամը: Իր կարծիքներով, Սողոմոնեան մը չէ՛ր. կարապետեան մը չէ՛ր, Թ. Զարեհեանի մը չէ՛ր. Մահարի, Տարօնցի, Դարբին, Պ. Սեւակ, Վ. Դաւթեան չի յիշեցնել: Երկուսի յանուն մտածումի մը չէ՛ր. ինչպէս կուի յայտարարելիք իր գէժ, իր լուրջի կցորդ մըն է պարզապէս, միայն իր խոստումով, կարծադրեալ Փիլիպոսի մը պիտի ըսէր Զարեհ, մարգարէական արեղայ մը, պիտի ըսէր Կ.

Սողոմոն: Երբ զերին մէջ է ու հեռու յիշեցնական իր գերաւորութիւնը, վերաւորականը միայն իր խոստումը նոր խոսքերն են, Կ. Զարեհեանի խոստումները, որոնք կը խոստանան կրկնել երեք սերունդներուն համար: Երբ ուղղուած եւ աշխարհապաշտ խոսքը՝ «Լինելու ո՛ւր»:

Երբ խոսքի անմիջապէս, որ առաջին խոսքի անոր հակասութիւնները կը խոստանան մեզ: Ս, ոչ: Գիտենք արդէն իմացական որոնողներու փիլիսոփայութիւնը: Իր սէրերէն կը բխին հակասութիւններ: Երկէ կը կ'ըսէր այնպէս՝ Հայաստանի սիրոյն կ'ըսէր այնպէս, եւ այսօր երբ կ'ըսէ այնպէս՝ Հայաստանի սէրէն մղուած կ'ըսէ այնպէս: Այնպէս, այնպէս, ո՛չ մէկ բանի պէս շատ բաներ տեսնեք, լսեցիք, կը տեսնենք, կը լսենք առէն օր: Բայց այս մարդուն պարագան մասնաւոր պարագայ է, Հայաստանի մէջ, նուազագոյնը պայմաններու յարաբերական մեղմացումէն եւ շինարարական թափէն թափ առած սովորական Հայրենասիրութիւնը չէ՛ր վաճառածը, իրենց պարպուած ուղեղներուն պարապութիւնը ծածկելու եւ հմայածի անմեղութեան հմայք մը ապահովե-

4. ԶԱՐԵԱՆ

Կոմունիզմը ծայրայեղ կապիտալիզմի ամենահիւանդացիին հետեւանքն է: Ու տեսէ՛ք, յառեցէ՛ք մեր աչքերը հակայայտական այդ հողամասի վրայ՝ բայտիկեան ծովից մինչեւ կապեան ծովը, Ուրալի լեռներից մինչեւ Հայաստանի լեռնաշղթաները՝ երկիրը վերածուել է Դամոսկան խորխորատի, աստուածները փախել են, հաւաքական հիստորիզմը գիմուել է զննացիներով, ստեպները վայում են. քաղաքները կույ գալիս ազտի եւ հիւանդութեան մէջ. սմէում, ճնշում, կեանքանի դիակի կերպարանք առնում: Ինչո՞ւ... Որովհետեւ մարդը ուզում է ըստպանել մարդին, հրաժարեցնել նրան իր անհատական վեհութիւնից, խափանել նրա հոգին, վայր առնել նրա երեսի լոյսը, դատարկել նրան ներքին կեանքից, անողոք ստանդատի ենթարկել, եւ իր կորցրած մարդկային արժանապատուութեան տեղ՝ տալ նրան կոսպերատիւի անդամի մի տոմս, ընկերային տաւարի մի թիւ, երկու քառակուսի մեքէր քնակալանային տարածութիւն եւ մեռնելու պարագային պրոֆիտութեան հաշուին փոքրիկ թաղում...

Ինձ համար ոչ մի տարբերութիւն չկայ մեքենաբար, առանց սրտի այրումի եւ մտքի չարչարանքի իր աղօթքը փափրսացող Բրիտանեայ քաղաքների եւ թուրքակի նման Մոսկուայի վերջին որոշումները կրկնող ազնիւ կուսակցականի մէջ: Երկուսն էլ կենդանի դիակներ են, լուսազոյն պարագային դիւրին գործածելիք գեմքեր ուրիշների ձեռքում:

Եկաւ քարբարոսը եւ միջոցը դարձրեց նպատակ: Ստուկը երկաթէ գաւազանով զարկաւ Սոկրատեսի եւ Պլատոնի գլխին եւ յայտարարեց. թէ կեանքի գերագոյն նպատակն է քաղաքներ շինել. մեքենաներ յորինել եւ ամբողջ մարդկութիւնը վերածել հակայայտական բանաւորական մի քանակի՝ համաշխարհային հըմ-գամեակների համար:

4. ԶԱՐԵԱՆ

«ՄԻՆՉԵՒ

Բոլշևիկները ծնուած է ոչ թէ, ինչպէս շատերը կարծում են եւ ինչպէս տառաջ կարծում էի ես եւս, վերջին հարուածը տալու համար մեռնող աշխարհին, այլ րեղիակստակ, բռնութեամբ ու ժով, շարունակելու համար նրա հոգեւորքը:

Գաժան բան է, երբ կատակերգութեամբ ուզում են կրօնական համգամահ տալ: Երբ միլիցականք ուսերի վրայ փշտում է ձգում, երբ սուրճերի հաշուապահը առաջնորդական մասին է նառում. եւ Զեկայի լրտեսը համամարդկային երջանկութեան շեփոքն է փչում:

Բարձրագոյն հրամանով, Լենինի յուղարկաւորութիւնը պիտի կատարուի բոլոր քաղաքներում եւ գիւղերում նոյն ժամին:

Փամբ 4 1 2-ին գործարանները՝ Միտրեան երկրներում եւ դուրսը՝ պիտի տալեն նոյն ժամին:

Տնտեսական դաշտակներ պիտի անցնեն քննարկներով շրջապատում: Զօրքերը պիտի կրակեն եւ թորոգանքները ձայնեն:

Արեւմտեան փողոցի վերին կողմից, պարապ դաշտը երեքում է կամիսարների ուսերի վրայ:

Զինուորական նուազախումբը Շոպէնի բռնքն է պատռում:

Թնդանքներ:

Մայրերի վրայ գարնանցած գիւղացիներ են նստել:

Երաժշտական Մտուդիան Մոցարտ է երգում: Պարապ դաշտը, սեւերով ծածկւած ամբիոնի առջեւն են դնում եւ չորս ծամ ճառ են ասում:

Իսկ Արարատը պայծառ է եւ անտարբեր:

Այն՝ ինչ որ անուանում են այսօր համայնավարութիւն, մարքսիզմ և լենինիզմ, ուրիշ բան չէ, եթէ ոչ բուրժուական մտայնութեան վատբարագոյն արտայայտութիւն:

Իսկ ձգտող անձերուն պէս անձեղ շատախօսութիւն մը չէ իր հայրենասիրութիւնը, այլ, այլ կարգացէք լուրը եւ լուրին հետեւող «մաքրաշրջիչ»:

— Հայաստան գալուց յետոյ հեղինակը հնարաւորութիւն ստացաւ վերախումբագրել իր վէպը: Իր վէպի երկրորդ իրաւասարկութեան առաջարկումն ունի գրում է. «Արտասահմանեան պայքարներում հեռու երկրից եւ անձնատեղեւոր վկայութիւններից, դժուար էր հարստ գաղտնաբերելու տալ բոլոր անցողիկութիւնների, եւ անկախ վկայում տեղ էին գտնւում անձնագրութիւններ, որոնք եւս չէին տեսնուի եւ ուղղել երկրորդ հրատարակութեան առիթով:

Հայաստանում պահպանուած մի շարք փաստաթղթերի լռելիքը, եւ յանգեցի այն եզրակացութեան, որ Մարտարապատի հակառակորդը երկրորդ անգամ է համաժողովրդական պայքարի զանազանների դէմ, կազմակերպւելով համառազմորդութիւն է ոչ թէ մի կրօնականութեան խմբակներով, այլ հայ ժողովրդի միահամուռ եւ հերոսական ջանքերով: Տեսայ նաեւ, որ սխալակցման մասն էմ Մայիսեան բանուկը պիտի ցիտական ապուտարիստութեան շարժումները եւ ուրիշ մի շարք դէպքեր, որոնք ունեցած են հակառակական նշանակութիւն:

...Հայրենական Հրազդանի ափերում, որտեղ ամէն ինչ հրաշալիօրէն վերածնւում է, որտեղ հայ երգը հնչում է գործի եւ հմայիչ, եւ հայ ժողովուրդը իր ճիգը խառնելով եղբայրական միւս ժողովուրդների ճիգերին, ստեղծում է պատմութեան մէջ չտեսնուած մի նոր կեանք, եւ եւս մաքրաշրջի իմ վէպի որոշ տեղերը:

Արտասահմանի ընթերցողը կը յիշէ հարկաւ արտասահման հրատարակութեան (1943) խնդրոյ առարկայ վէպը, ճշաւրբերան վրայն եւ չէ մոռցած անոր յառաջարկին հետեւեալ մասերը:—

ՈՒՐ»...

«Այս վեպը, բուն իմաստով՝ պատմական վեպ չէ, այլ պատմությունն է մի ֆանի հայ հոգիների, որոնց վիճակում էր ապրել մեր ազգային կենսա-բախտարոշ շրջաններից մեկում:

Նկարագրում անձերը երեակայական են, որովհետև երեակայությունը աւելի իրական է, քան ինքը իրականությունը, եւ ուստի, թող ոչ ոք — ինչպէս պատահած է իմ ուրիշ գրածներին — չառիւ — իր վրայ աննի մրանց թերութիւնները կամ առաջինութիւնները: Թող մանւ ոչ ոք փնտռի պատմական անմըշ-դութիւններ. պատմութեան գիրք չէ, ոգու պատմութիւն է»:

Փորձեցէ՛ք հաշտեցնել հիմա ոգու այս պատմութիւնը վերի ուղղումներուն եւ մաքրաշրուաններուն հետ:

Երէկ ոգու պատմութիւն էր գործը ու պատմութեան գիրք չէր, այսօր կը ջանայ պատմութեան գիրք դառնալ եւ մաքրաշրջելով ողին աղտոտել: Ինչ շարժառիթով պողեօք այս մարդը, ոգու այս նախկին պատմադիրը յանձն կ'առնէ դաւանանք իր բուն էութեան եւ երեակայությունը իրականութենէն վեր դասելու վարդապետութենէն ետք՝ կը ճգնի պատմական ճշդումներ ընել: Այստ պայմաններուն մէջ եւ տարիքի հասուն շրջանի մը ճիշդ բաներ ու փաստեր չգտած մարդը չի կրնար անշուշտ մեծադանդորդ ժամուն մեղ խարել եւ սովետական սահմաններուն մէջ արժանահաւատ բաներ գտած ըլլալու պատրանքով օրօրել հայ մարդը: Այդ չէ հարցը: Ընդվզեցուցիչը ոգու պատմութիւնը դէն շարունակողն էր ընդունած դրական իր կեցութեան է, ինքնիրմէ հրաժարելու եւ դեր խաղալու այս խոնարհ յոժարամտութիւնը:

Որովհետեւ այս մաքրաշրուանը «նաւը լերան վրայ» վէպին հարազատութիւնը միայն խոցելի չի դարձներ, այլ կասկածելի կը դարձնէ Զարեանի արժանի գրականութեան համարեա աճողություններ: Ի վերջոյ գրական գործ մը կը կրէ

4. ԶԱՐԵԱՆ

Հայ տաղանդը, ազատագրւելով օտար ազդեցութիւններից, կամ աւելի շուտ իւրացնելով եւ կերպարամափոխելով օտար ձեւերը, կարողացել է արտայայտել իր ազգային անհատականութիւնը: Այդ աշխատանքին մասնակցել են թէ մարդիկ, թէ գիրքը եւ թէ շրջապատող բնութիւնը: Իսկ այսօր... Ի՞նչ է պատահում այսօր: Մարդիկ, որ ներկայումս են պատմութեան առջեւ իրենց ամենաարմատական յեղափոխականներ, կենսի մարգագներ, ընկերությունը հիմնադրական անող ահաւոր ուժեր, յանկարծ պարզ մի տուն շինելու համար՝ տաւր տանելիմ գար ետ են վազում եւ հայ եկեղեցիների երեսից մի ֆանի բաժանական ձեւեր եւ կերպեր առած՝ ուզում են սոցիալիստական, հաւաքական եւ էլ չգիտեմ ինչ մտաւթիւնների արտայայտիչը դարձնել:

— Մտածեցէ՛ք, տանելիմ գար ետ՝ արտայայտելու համար Լենինեան գաղափարախօսութիւնը: Ճշմարտութիւնը այն է՝ եւ այստեղ է ամբողջ դժբախտութիւնը՝ որ կառուցող այդ մտաբանականների ամէն մէկի մէջ նստած է սարսափելի այն փաղէկիւն, որ խօսում է պատմական յիշակերկայի եւ մարքսիզմի մասին, ջրանցքների եւ երկտրականների մասին, բայց մտածում է գիւղի տէրտէրի նման:

Կոմունիզմը ուրիշ բան չէ, եթէ ոչ հին րեժիմների բոլոր թերութիւնների ընդլայնումը եւ խորացումը: Տարօրինակ է ասել, բայց ժամտարմը եւ աստիկանը աւելի մեծ ազդեցութիւն են ունեցել նրանց վրայ, քան Մարքս եւ Էնկելս:

Կառուանել արդարութեան համաշխարհային համարայեցութիւնը փոքրիկ, սղորմի, խորամանկ մարդիկների ձեռքով. կարելի՞ բան է այդ... Կարելի՞ բան է փոստ փայտերով մեհեան շինել, խաբեբայութեամբ, անարդարութեամբ, ճեղքով եւ բանտով ճշմարտութեան աշխարհը վերանաստանել:

4. ԶԱՐԵԱՆ

«ՄԻՆՁԵՒ

Բառե՛ր... Մարքսիստական տալ-
մուտականությունը, միացած միջնա-
դարեան սոցիալիզմի պատմական
դիալեկտիկային, ստեղծել են ամենաառա-
տառացի և ամենավերացական աշխար-
հահայեացքը, պիտի ասեմ հաւատքը, որ
էրբեք մարդկությունը տեսել է: Պռոտ-
տախտ այդ հոնտորականությունը դուռ-
նը խոթել է ցեխի մէջ, աչքերը փակել,
սիրտը փողարկել և կարծում է, որ մո-
տեցել է իրականութեան: Միեզեռ ինքը
իր մէջ անիրական մի վարդապետութիւն
է: Վաճառականական սոցիալիզմ մի մը-
տայնություն, անանկ իրական իրականու-
թեան առջեւ:

Առնենք հենց մեր Հայաստանը և
առնենք տնտեսագիտական, պատմական
նիւթապաշտութեան Ձեր չափանիշը և
չափանք: Այստեղ ոչ մի օրէնք, ընկերա-
բանական ոչ մի փորձույթ, մարքսիստա-
կան ոչ մի կլիշէ կարգ է գիմանալ: Ին-
չա՞վ կարող էք բացատրել մրա կազմու-
թիւնը և մրա գոյութիւնը, ո՞րն է մրա
պատմական զարգացումը. ո՞րպիսի նիւ-
թապաշտական ազդակներ անհրաժեշտ են
դարձրել մրա ստեղծումը: Մի երկիր,
որը չի կերակրում եկամտին և որին
պետք է կերակրել: Դեպքեր որոնք մը-
նում են անհասկանալի, ձգտումներ, ու-
րոնք տնտեսապէս պատճառաբանուած
չեն: Մոխիր:

Յօդը ու իր ածամ մեքենան առաջ-
հայի միամե անցում են մեր դաշտերից:
Արարատը ծառւմ է իր գլուխը: Քոստա
մի հրեայ կոմունիստ մեզ լեզուաբանա-
կան դասեր է տալիս: Ռուսաստանից ե-
կած թուղթի մի կտոր պատգամի հան-
գամեք է առնում:

(«ԱՆՑՈՐԴԸ ԵՒ ԻՐ ԶԱՐԵԱՆ»)

Հեղինակին դրոշմը. Հեղինակին Համա-
րումը, Համոզումը, դուրդուրանքը պէտք
է ընկերանայ այդ դործին՝ Համարում մը,
Համոզում մը, դուրդուրանք մը առաջա-
ցընելու Համար ընթերցողին մէջ: Մինչ-
դեռ Զարեան ութսուն տարեկանին կը
յայտարարէ, որ վաթսուն տարեկանին
գրած իր գիրքը մաքրաշրուժի պէտք ու-
նի, նոյին բանիւ մաքրաշրուժի պէտք
ունին իր միւս գործերը, «Եւսու լեզան
վրայ» վէպին մթնոլորտէն եկող «Ան-
ցորդը եւ իր ճամբան» և «Բանկոօպը եւ
մամուլի ոսկորները»:

Զարեանի գործին մէջ մանող ընթեր-
ցողը, եթէ ոչ ամէն էջի վրայ, գոնէ տա-
սը էջը տեղ մը, չքեղ ու չլացուցիչ պատ-
կերի մը յայտնութեան քով, մոռցած է
միշտ մարդկային իր այլանդակութիւն-
ները և մակարոյժի հեռանկարներով կա-
տարած իր ծխական այցելութիւններուն
տոկթով ըրած շահախնդիր յայտարա-
րութիւնները: Այլ եկած է ու կ'ընէ մե-
զի հիմա, թէ այդ մէկ տասներորդ մա-
սը, իր անձին կապուած վիթխարի ա-
րատները մոռցնել տուող բաժինը եւս,
իր անձին կապուած միւս ստուերներուն
պէս մաքրաշրուժի պէտք ունի:

Մարդ մը յիսունը անցնելէ ետք երբ
վէպ կը գրէ, կը գրէ որեւէ բան, կ'ար-
տասանէ որեւէ խօսք՝ խղճի սմբողջա-
կան խաղաղութեան Հասնելէ առաջ, ինչ-
պէ՞ս թոյլ կու տայ ինքնիքեն, Հրապա-
րակ Հանել իր գործը, Հանրութեան մա-
տուցանել գոյն առանց Հաւատալու անոր
ճշմարտութեան: Գրական պատասխանա-
տուութիւն ըսուած բան մը կայ Հարկաւ,
գրական բարոյական մը կայ անշուշտ,
գրականութիւնը կատակ չէ և ընթերցո-
ղի հոգին ծաղրածուններու առկէ փրո-
ուած բաց դաշտ մը չէ: Բայց այս մար-
դը ամէն ինչ, իր հոգին ու կենցաղը,
գրին ու միտքը, տունէն մինչեւ Հայրե-
նիք, այս սրբութիւնէն մինչեւ միւս սրբ-
ութիւնը, կատակի վերածած է ամէն
բան ու գրական սրբութիւնները սրբա-

ՈՒՐ»...

պրզծելով կը գրանու հայ մարդուն հոգիին հետ:

Ըսուած էր մեզի, որ բառ է ու բառերու կախարդ, բուռած էր մեզի, որ իր բրածը «պրազարանային դիւցազներդութիւն» է ու «մաքի ընդարձակ դիմութիւն», ըսուած էր տակաւին, որ կը պահէ իրեն «գոժուար ասարդէի բան մը» սիրտը, հարազատութեան անփոխարինելի մասնիկը, սիրտ շունի, հոգի շունի, չ'ապրիր իր գրածը, «օտար մըն է, որ կեցած մեր ցաւի ընդարձակ տաքածութեան դիմաց» կ'ապաւինի իր բառերուն գեղեցկութեան, մեզ խաբելու համար: Ու հիմա իր ապագամ «մաք-բաշրումներով» ինք կը հաստատէ ինչ որ ըսուած էր իրեն քառասուն տարի առաջ, երեսուն տարի առաջ, երեք տարի առաջ, երեք սերունդներու կողմէ: Սիրտ շունի, գուրկ է ներքին բռնկումներէ, ներքնապէս չ'ապրիր իր գրածը, ներքին կապ մը շունի իր գրածներուն հետ, երկունքով, հրկիզուելով, արիւնհոլով, արիւնով չէ գրած իր էջերը, գրադարանային բան մը ունի, սորվածներով կը գունաւորէ իր խօսքը, բառ է, գոյն է, արտաքին զարդ է, գոհատ, պատմութեան՝ հիշէ կ'ողէք, գեղեցիկ՝ հաւանաբար, հարուստ՝ անպայման, բայց գոյն է գարձեալ, պատկեր, զգեստ, արտաքին փայլ: Ատկէ ծագում կ'առնէ այս յեղիցողութիւնը, իր գրածներուն հետ ներքին կապ չունենալու փաստէն կ'առաջանան այս գիւրիին մաքրաշրումները:

Նման ուղղումներ եւ մաքրաշրումներ, յապաւումներ եւ յաւելումներ հասկընալի պատճառներով հասկնալի են Հայաստանի գրողներուն մօտ: Որովհետեւ այսօրուան իրենց մաքրաշրածը իրենց կամքով չէին գրած երէկ, կը պարզուէին իրենց, որ իրենց այսօրուան յապաւումը յաճախ իրենց չէին գրած, այլ՝ «խմբագիրներս են արել», այսինքն պարտին, Զեկան, չըլլալիք մէկը: Մինչդեռ այս մարդը ազատ պայմաններու մէջ, ազատ

Կ. ԶԱՐԵԱՆ

Խճ է կատարում մեր երկրում, եթէ ոչ յամում իրերի խեղճանայու մի փորձ: «Մենք իրե՛ր ենք ուզում, մենք իրե՛ր ենք ուզում»: Արդիւնաբերել, թատեղծել առարկաներ, մեքենայացնել, մեքենայանալ: Դեկրետ է դարս եկել՝ հըրաժարուել մարդկային բոլոր առաքիւնութիւններից, վար մետել երազ ու պատրամք ստեղծելու կարողութիւնը, ամհատական բնոյթ կրող գործունէութիւնը, չեղեալ համարել հագեցկան որեւէ կեանք... Դեկրետ է գուրս եկել սիրայ դէմ, քանաստեղծական յուզումի թռչն-փի դէմ, լուսնոյ դէմ, երեւակայութեան դէմ: Հիմ, վնասակար քաներ, անցած աշխարհ: «Մենք իրե՛ր ենք ուզում, մենք իրե՛ր ենք ուզում»: Եւ յամում իրերի՝ գործածում են եին աշխարհի, եին բռնակալ հասարակարգերի բոլոր ռոքագործ միջոցները: Երտեսութիւն, սպանութիւն, խաբարայութիւն, անազմուութիւն, կաշառք:

Սարսափելի է ասել, բայց իշխանների ցեղը մեռել է ու մրանց տեղ եկել եւնքնկերային գիտութիւնները ծամծամող մարքաքարոսներ: Առանց ճիշմակ մի, առանց արծաթէ թուրի, բայց գիմուած մանուածոյ սօլաստիկայով եւ մանաւանդ բանտով, ատրճանակով եւ գնդապիւրներով... Սկսուել է մեքենայի և դըրամով քաժանուած ուտելիքներէ Վիքիին դարը»:

Մեծամասնականները ազատագրել են այդ գաղափարախօսութիւնը մրա միստիկ տարրերից, շեշտը դրել են ժողովուրդ բառի վրայ, սանման են քաշել շուրջը եւ գործնական որոշակի կեանքի շղթաներ են անցրել մրա ձեռքերի վրայ: Մեքենան քանի է Աստուծոյ տեղը, եկեղեցիների բլուզանդական զգրքերների տեղ՝ անիւներ, խնկի տեղ՝ բնագիմ եւ ազօք բնքի փոխարէն՝ տրակտորի փառաբանութիւնը...:

(«ԲԱՆԿԱՌՈՐ ԵՒ ՄԱՄՈՒԹԻ ՈՍԿՈՐՆԵՐԸ»)

«ՄԻՆՉԵՒ ՈՒՐ»...

ընտրութեամբ եւ հասուն տարիքին դըրածը կը յարգարէ այսօր, կը ժպտահարէ պատմական դրուագներու իմաստը փոխել եւ պատմական նոր իմաստ տալ անպատմելի րաններու։ Այն՝ ինչ որ ցայժմ կ'ընէին Հայաստանի գրողները ու շին ընէր այսօր ինչ որ կը ջնան անոնք ազատագրել, այս մարդը կը ջննայ վերստին ներքինացնել, շնականօրէն արհամարհելով գրելու նուիրական գործիքը աղաթիւնի դերէն զուրո բերելու համար իր շուրջ տառապող գրչի մարդոց ցաւագին ճիւղերը։

Մարդիկ ազատ են Հայաստանը սիրել իրենց ուղածին պէս, Հայաստան հաստատուել իրենց եւ «նրանց» յարմար դատած օրը, մարդիկ նոյնիսկ ազատ են Հայաստանին սովետական մասը սիրել, գուրդուրալ սովետականին վրայ, ծառայօրէն ծառայել սովետականին։ Մարդոց սէրը չէ որ կը նեղէ մեզ, գուրդուրանքին տեսակը չէ, ծառայական կոտորուածները չեն, այլ անոնց մտքի պայմանագրական յանձնառութիւնն է, իրենց անցնալը յարգարելու նուաստացուցիչ առաջարկին քով յայտնած իրենց նուաստացուցիչ համամտութիւնը։ Մեր խօսքին հասցէն փոխելով, պիտի ըսէինք տակաւին՝ — պակաս ըլլայ այն Հայաստանը, որ իրենց անցնալը ուրացող մարդոց ուրացումներով պիտի հրճուի եւ այդ ողբալի արարքին վրայ յենուելով պիտի փութայ վարձատրել ուրացողը։ Պակաս ըլլայ այն Հայաստանը, որ մարդու մը արժանաւորութեան վրայ գուրդուրալու փոխարէն պիտի տկարացնէ մարդ մը եւ անոր տկարութիւններով խանդավառուի։ Որովհետեւ հայրենիքին իրապէս արժանի ի՞նչ կը մնայ այլեւս նման մարդէ մը, ի՞նչ կրնայ շահել Հա-

յաստանը մեր ա՛յս հերոսէն, որ իր լաւագոյն տարիներուն ու բերքին վրայ գիծ քաշելու կը ճշդի եւ իր քամուած ծերութիւնը իրեն նուիրաբերելու խոստումը կու տայ։

Մարդ մը, որ կը ստիպէ մեզ իր պեղումներով յայտնաբերած ախտանիշներով ճանշանք գինք, ցուցադրենք իր դէմքը դեռ 1950-ին կատարած իր ախտաճանաչումներուն ախտին տակ։

«Պէտք է գանգաւմել՝ գաղթականը եւ տարագիրը երկու իրեքամբեր՝ վիճակմեր են։

Գաղթականը՝ անդառնալ պարագաներից մղուած՝ տեղափոխուած է մի որեւէ օտար երկիր եւ ճիգ անում գետեղուելու ուրիշների կեանքում։ Տնտեսական հրամայականի տակ, նա պարտադրուած է յարմարուելու, նորաձեւուելու, կապիկանալու, քաղականալու։ Լինելու ոչ թէ իմքը, այլ ուրիշ։

Նա ստուեր է, որ որոնում է նոր քարոյական մարմին, նոր լեզու, գոյանալու եւ ապրելու նոր կերպ ու ձև։

Եւ երբ նա գտնում է այդ նոր մարմինը՝ անհետանում է։

Գաղթականը իր երկրէն դուրս ելած մարդը այսինքն։ Մինչ այս մարդը իր երկրին մէջ հաստատուելէ ետք, իր անձին օրինակով կը ներկայացնէ այն կենդանին, որ ինքը բնորոշած է վերը՝ «գաղթականը» այն թշուառը, որ «տնտեսականի հրամայականի տակ, պարտադրուած է յարմարուելու, նորաձեւուելու, կապիկանալու, թուականալու»։

Ճիշդ ու ճիշդ ինքը, նոր Զարեանը, Քաղթականը, պատրաստ՝ «յարմարուելու, նորաձեւուելու, կապիկանալու, թուականալու»։

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Ս. ՎՐԱՑԵԱՆԻ

« ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ »

Գ. ՀԱՏՈՐ

ՇՈՒՐՋ 300 էջ, ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՒ ԼԱԹԱԿԱԶՄ

Հատորը կը բովանդակէ Ս. Վրացեանի յուշերը Կաթաղի-
կան Շարժման, ինչպէս նաեւ դէմքեր, դէպքեր եւ տպաւորութիւ-
ններ՝ մօտիկ անցեալէն:

Գին՝ 7 Լ. ՈՍԿԻ

Կեդրոնատեղի՝ Համազգայինի Գրատուն, դիմել նաեւ քնն-
քի ցրուիչներուն եւ հայ գրականամեքան:



Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

(Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

Գրականութեան դասագիրք՝ միջնակարգ եւ երկրորդական
վարժարաններու համար:

Մօտ 400 մեծադիր էջ, պատկերազարդ:

Գին՝ 5 Լ. ՈՍԿԻ: Մասնաւոր գեղջ՝ վարժարաններուն եւ
գրականամեքան:

Մտանալու համար դիմել Համազգայինի Գրատուն, հեռ. 286428:

ՏԱՐԻԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՂԱՐ

ՀԱՏԱՎԱՅԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան հասցէ.—

DIKRAN KOUYOUMDJIAN

P. B. 587, Beyrouth — Liban